 վճղտոզի ղ ղտիզղտտղճ մտոտարաշարարտ՝ հոմվճնզ ժնտմճ :ղզ րսմզզժմտտ Նզտմճ  
 հվճնտր հվճտո ր մմզզնսզ ղ ղտնիտո 'ղտրոտվր ղզ տտն տոտտժտտմտ ևճրսն վր  
 ժնտմճ ,Իզմզմտն ժճ ղրվըրսմնտրս ևճլ :ղվճզղիտզմստսիմզ ոտն Երսնիճլ ժնզզնմզր  
 :րստղվ՛ ղզ՛ ղտրոտվր հոմվճնզ հվճնտր :րստղ ղզ՛ մտոտարա՝ ղտնիտո հվճնտր  
 :ոճխոսմտոտարա՝ :ղտրԵրստի ղզ րսննիտղտր Զն ղմսնսմ մս 'մճրսրզմզ  
 ղտն և րստննզտո ղտնիտո մմս 'ղտնվր րոմտմտ ոճի ,մտոտարաշարարտ՝ և րսննոճտն  
 Նվճմսնսմ մճղտմվստտտն նիչլ :մտնստ 0001 Երսնիճլ Խոտ Նսլ 'տնի Նսնտիտոճ ևճլզ  
 ղտնիտո մտնստ 01 Խոտ ժս ղնրոտ Նսլ ,ժնզոտ ևճլզ վճվ՛ մ,ճ՛ ղտն վճրտ հոմ :տոզր  
 -տն մի ղտժնզվ՛ իս ժճրստ և րստմտտտտն մրոտմտոզրվ՛ ղտնիտիտոճտրոտ՝ ղտտոտ  
 -տն :մտոտարա՝ ղզզվ՛ և Ճտնիտ մմսնսմ Նզտմս 'մզզըրսրզմզ ղտնի մս 'և ղտն ղղտ՝  
 :մտոտարա՝  
 և րսննոճտն Նվճմսնսմ տղ :Զվժ Նվճննզզրսն ,տտն Նվճննզզրս ,րստոտ վ՛ մճղտմվս  
 -տտն :մտոտարաշարարտ՝ ,ժճրստ նմսնսմ Նտոճ 'րոմտմտ ոճի ժճրստ և րստոտ ղվճրվ՛  
 -ղտժոմմվ՛ մճղտոճտն ր,սնզլ :ժս ղնրոտ րճ :րոմտմտ ոճի ր,սնզլ ,րսննոճ և Նտն  
 :րոմտմտ ոճի վմզժոմմվսնզ վտվտ ժս ղնրոտ մտրոտ՝ ղտըր  
 -րստղվ՛ վմտցտճ :ղտմվստտտն վր վոմտտտն Խո րստղտոմտտն ղվ՛ ,ղտնտոմմճ  
 :«վմտտն մի ղտմզն ,վճնզտնի Նզն» ,ղզ րստոտ ոճիտղճ  
 :ղվոտվր ոմսնսմ ,ոմզնո՝ ,ժնզր 'ղվիտննտ  
 ժնզնզրսզն ղվճմսն ղտնտոժոտ ոտն ղզտոզիտտմս 'մզզզրվըրստղվ՛ ղտիտոտղզի տտն Նզրս  
 -ճրստտիտմգի ղ Նզրսճրստտի րստժվճգմտո՝ Ժրոգըրստիտննոքո մզր մս 'ժնզտվ՛ն  
 :ոզմտտ մս Զն Նզտմս ղ ոզզվ՛ մս Զն իյ :րվտտն ր,զ և Ճտնտն ր,զ  
 մտրոտ՝ րստն վր ղնրոտ մճղզնն ղվժվճգմտո՝ մս 'րսննիտտվ՛ն ժնզ ղտն ղվոտվր ոմսնսյ  
 :ղվրոտմնտոզրվ՛ ղտնիտիտոճտրոտ՝ ղտտոտտն իսնզղննզզ ղտրտն մզր ժնզնզմզմ  
 -տճրսն ղրվըրսննիտղտր րվտիտ 'ոմզնո՝ Նրստիտղճ րսմզզճղտրոտ՝ ղտըրոճտո  
 -տտմտ 'մտրոտ՝ րսնզճմսնտմմ մճմսն ղտրԵրստտիտմգի վոմնմչլ ղ վժվճգմտո՝

**ՂՂՂՂՂՂ ՈՍՍՍՍՍ**  
**ԵՁԳՂՏՈՆ ԻԳՍՈՆՈՍՆՈՑ**

# ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

*Արդիվ հրատարակելու համար  
հարկավոր է*

Ռ. ՍԵՒԱԿ

## Կարսի Գիրք

1910

ՅԱԿԻՆԻ ՕՆՆԻԿ ԱՄՍԹՐԱՆԵՆ ԵՒ ՈՐԳՆ

Կ. ՊՈԼԻՏ

23 Ապրիլ 1994-ին, Պեյրուսի Սահակեան Գուլեհին մեջ, Ռուբեն Սեւակի անուն մատենադարանին բացման օրը, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը, իր պատգամը տուած պահուն. Ռուբեն Սեւակի «Կարմիր Գիրքը»-ին «Գիւղական Գերեզմանատան մեջ» բանաստեղծութենէն հաստուածներ կարդաց և իր խօսքը այսպէս եզրակացուց.

«Ո՛վ Սեւակ, դուն, բանաստեղծութիւններուդ մեջ, անմահութիւնը երգեցիր, բայց գերեզման մ'անգամ չունեցար: Սակայն այս մատենադարանը՝ քու անմահութեանդ ապացոյցներէն մէկն է»:

Այստեղ կը տեսնենք, Ռուբեն Սեւակի ապրած շրջանին հրատարակուած միակ գիրքը եղող, 1910-ին Պոլսոյ մեջ լոյս տեսած «Կարմիր Գիրքը»-ին նկարը:

Այս գիրքը, մեզի համար, ունի շատ կարեւոր հանգամանք մը, որ գիրքին վրայի մակագրութիւնն է՝ «ՍԻՐԵԼԻ ԶՐՈՋՍ ԵՒ ԶԵՌԱՅՐԻՍ – ՀԵՂԻՆԱԿԷՆ»

(Իսկ հեղինակը –բնական է– Ռուբեն Սեւակն է):

Ռ. Սեւակ իր այս գիրքը մակագրած և ղրկած է իր երեց քրոջը՝ Էֆթիկ Յակոբովիչ-Չիլիկիբեանին և անոր ամուսինը եղող Յովհաննէս Ս. Յակոբովիչին:

Այս գիրքը, որքան գիտենք՝ Ռուբեն Սեւակի կողմէ մակագրուած միակ գիրքն է, որ այսօր կը գտնուի Նիսի, Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան մեջ:

Էֆթիկ և Յովհաննէս Յակոբովիչ ամուլը, մեծ դեր խաղացած են Ռուբեն Սեւակի կեանքին մեջ:

Վկայութիւններ կան որ Էֆթիկ, իր կրտսեր եղբօր՝ Ռուբենին վրայ, անոր փոքր տարիքէն սկսեալ, մեծ ազդեցութիւն գործած է:

Եւ Ռուբենն ալ իր քրոջ՝ Էֆթիկին հանդէպ, շատ երախտապարտ եղած է: Անջատաբար այս հանգամանքէն՝ Էֆթիկին ամուսինը, Յովհաննէս Ս. Յակոբովիչին Լոզան ուղարկած նամակը Սեւակին, 1914-ի Աշխարհամարտին սկսելէն մէկ քանի շաբաթ առաջ, Եւրոպայէն Պոլիս վերադառնալու խնդրին մեջ, ճակատագրական դեր ունեցած է:

Այստեղ կը հրատարակենք, յապաւումներով, այս անտիպ և սրտանմլիկ նամակին նկարը և վերծանուած (հարազատ) պատճենը:



Գ. Գ. Գ. 27/9 Փետր 1914

Սիրելի աներձագս.

Պուրջե Օ. Չիլիկյան

Լոզան

Արթուր Պուրջեան թանկանքայն թուրքական ժողովուրդին  
 հայրը և ինքն ինքը որ ինչ արագութեամբ և հոգով  
 այս Արթուրի թե՛ արժեք ինչ արագութեամբ և ինչպէս,  
 քանի որ ինչպէս որ արագութեամբ արագութեամբ և այլ  
 և ինչպէս որ արագութեամբ արագութեամբ արագութեամբ  
 ինչպէս որ արագութեամբ արագութեամբ արագութեամբ  
 որ արագութեամբ արագութեամբ արագութեամբ արագութեամբ  
 արագութեամբ արագութեամբ արագութեամբ արագութեամբ  
 և արագութեամբ արագութեամբ արագութեամբ արագութեամբ

Չ. Ա. Չիլիկյան

Հայր ինչպէս որ արագութեամբ արագութեամբ արագութեամբ  
 արագութեամբ արագութեամբ արագութեամբ արագութեամբ

«Սիրելի աներձագս. Ռուբեն Է. Չիլիկյան, 4. Պոլիս 27/9 Փետր. 1914  
 Լոզան»

Սիրելի Ռուբեն՝ բնականաբար կը սիրես ծերուկ հայրդ և խեղճ մայրդ, որ  
 քու կարօտ... ու Հայկին այս վիճակէն ինչ տերտի մէջ ըլլալին կը գուշա-  
 կես: Զուկին գալուստովդ անոնք պիտի մխիթարուին:

Ես ալ կը խնդրեմ որ նամակս առնելովդ, գալու պատրաստութիւնները  
 տեսնաք: Մանաւանդ խեղճ Հայկին սիրոյն համար, որ հարկաւ անգամ մը  
 ալ զինքը տեսնելու փափաքը ունիք:

Մատամիդ յատուկ բարեւներ, նաեւ Վահագնին (Ռ. Սեւակին մանչը՝  
 Լեւոն-Վահագն- Յ.Զ.) աչքերէն կը համբուրեմ:

Յ. Ս. ՅԱԿՈԲՈՎԻՉ

Հայկը իր վիճակին այնչափ ծանր ըլլալը, չգիտեր: Եթէ իրեն նամակ գրե-  
 լու ըլլաք, գգուշացէք իրեն կասկած մը տալէ:

Ե.Յ.:

\*\*

Ռուբեն Սեւակ Յունիս 1914-ի սկիզբը, Պոլիս վերադարձաւ՝ անշուշտ իր կնոջը ժանիին և 2 տարու մանչին՝ Լեւոն-Վահագնին հետ:

Ժաննին 7 ամսու յղի էր Շամիրամին: ...Եւ Ռուբեն Սեւակի ընտանիքին Պոլիս վերադառնալէն քանի մը շաբաթ ետք, 28 Յունիս 1914-ին, Սարաեւո-ի մէջ, Սերպ յեղափոխական G. PRINCIP-ին Աւստրիոյ գահաժառանգը սպաննելը, պատճառ եղաւ Առաջին Համաշխարհային պատերազմին սկսելուն:

Եթէ Ռուբեն Սեւակի Պոլիս վերադարձը քանի մը շաբաթ ուշանար, սպատերազմի արհաւիրքին պատճառաւ ժաննին պիտի չուզէր Պոլիս երթալ:

Արդէն ժաննին, առաջին օրէն համաձայն չէր, Ռուբենի Պոլիս հաստատուելու գաղափարին: Որովհետեւ ան լաւ հասկըցած էր թուրքերուն ինչ աստիճանի վայրենի ժողովուրդ մը ըլլալը:

Այս տեսակէտով՝ Ռուբենին քեռայրին՝ Յովհաննէս Յակոբովիչին վերը նշուած նամակը, ճակատագրական դեր խաղացած է Ռուբեն Սեւակի ընտանիքին Պոլսոյ դժոխքը վերադառնալու դժբախտութեան մէջ:

Կրնա՛նք երեւակայել, թէ Ռուբեն Սեւակ ո՛ր աստիճան ազդուած ըլլալու է այս նամակին մէջ գրուած հետեւեալ տողերէն. —

*«Բնականաբար, կը սիրես քու ծերուկ հայրդ և խեղճ մայրդ, որ քու կարօտ... : Զուկին գալուստովդ անոնք պիտի մխթարուին»:*

Եւ յատկապէս՝ սա նախադասութիւնը...  
«Մանաւանդ, խեղճ Հայկին սիրոյն հա-

մար, որ հարկաւ անգամ մըն ալ զինքը տեսնելու փափաքը ունիք»:

\*\*

Շատ բացայայտ է, որ Յ. Յակոբովիչին նամակը, լուրջ դրդապատճառ մը եղած է Ռուբեն Սեւակին Պոլիս վերադառնալուն:

Բայց այս նամակը, միայն արագացուցած է անոր Պոլիս վերադարձը...

Որովհետեւ Ռուբեն Սեւակ, առաջին օրէն արդէն որոշած էր Պոլիս վերադառնալ:

Կարծեք, թե Յունական դիցաբանութեան հերոսներուն նման, Ռուբէն իր ճակատագիրը ի՛նք գծած էր արդէն:

Այստեղ կը մէջբերենք 1912-ին, իր ընկերոջ գրած նամակին յատկանշական սա տողերը.

«...Այս բոլորին վրայ, անելցուր նաեւ, Պոլսոյ մղձաւանջը. այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոսոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը»:

Ռուբէն Սեւակի շատ մը բանաստեղծութիւններուն մէջ, մահուան մղձաւանջը միշտ ներկայ է:

Այստեղ կ'ուզենք նշել մանաւանդ, իր «Գացող Մարդը» բանաստեղծութիւնը, որ կ'աւարտի հետեւեալ տողերով.

«Կ'ըսեն՝ դղեակ մ'ունի աղուոր,  
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,  
Ու հող կերթայ... Եւ գիտեմ որ  
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...»:

Մենք կը հաւատանք, որ Ռուբէն Սեւակի «Գացող Մարդը» բանաստեղծութեան այս վերջին տողերը՝ Սեւակի ճակատագրին կանխատեսութիւնն են:

Այստեղ կը հրատարակենք այս բանաստեղծութեան ամբողջական պատճենը՝ որ բացառիկ իմաստալից քերթուած մըն է:

### ԳԱՅՈՂ ՄԱՐԴԸ

Չեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր  
Կ'երթայ... Հի՛ն, հին ասպետ մը լուռ,  
Կ'ըսեն, ձիուն վրայ տխուր  
Կ'երթայ շուտ-շուտ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կը տեսնեմ մեծ շուքն իր նիհար  
Վերջալոյսին, ամպերէն վար,  
Սեւ նժոյգին վրայ հոգեւար  
Սարին կ'երթայ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'երթայ, շուտ-շուտ ու չի տեսներ  
Որ ետեւէն բիւր կմախքներ  
Ա՛լ վազելէն շատ են յոգներ,  
Ան կ'երթայ շուտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեն՝ դղեակ մ'ունի աղուոր,  
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,  
Ու հող կ'երթայ... Եւ գիտեմ որ  
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

**ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆԸ**

**ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՐՏԵԼԻՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է,  
ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐ ԱՔՔԻԼԼԵՍԵԱՆ ԿՐՈՒՆԿԸ**

Սարդարասպատը խորհրդանիշն է Մահը, Ստրկութիւնը և Ենթակայութիւնը մերժող հայու կամֆին: Ազատ ու ինքնիշխան կեանքը ամէն բանէ նախընտրող իր ընտրանքին:

Հայութեան միաձոյլ, համերաշխած ու անզիջում բազուկն է, որ 1918-թ.ին Մայիսի վերջերուն, վերականգնեց դարեր առաջ տասյալած հիմերը հայկ. անկախ սպտութեան, որ հզօրացաւ և նախընթաց չունեցող բարգաւաճումի հասաւ Բ. Հանրապետութեամբ, և կը գոյատեւէ մինչեւ այսօր, դարձած Գ. Հանրապետութիւն:

Բնութիւնը հայը օժտած է տոկալու, դիմադրելու և դաւադիր հարուածներուն պատճառած վերքերը դարմանելով ուժգին վերականգնելու գերբնական ուժով:

Սարդարասպատեան ոգին մեզ կը զինէ, կը դարձնէ անսպարտելի:

Մեր ժողովուրդը աւելի շատ սպարտուած է ո՛չ թէ թշնամիին գերազանց ուժէն, այլ՝ իր ներքին տկարութենէն:

Պատմութիւնը կը վկայէ, որ հայութեան համար իր ամէնէն ահարկու, վտանգաւոր թշնամին իր... անմիաբանութիւնը եղած է: Օրհասի պահերուն մահաբեր (→ էջ 8)

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ... (Շար. էջ 2-էն)

Վերը նշեցինք, թե Ռուբեն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ, մահուան մղձաւանջը միշտ ներկայ է:

Բայց, իրեն պէս զգայուն և խորաթափանց բանաստեղծ բժիշկի մը համար, մահուան այս մղձաւանջը շատ հասկնալի է:

Մտածել, որ Ռուբեն Սեւակ 1905-էն սկսեալ, նախ բժշկական ուսանող և 1911-էն յետոյ ալ իբր բժիշկ, Լոզանի հիւանդանոցներուն մէջ աշխատեցաւ մինչեւ 1914: Ան, իբր բժիշկ, հիւանդանոցներուն մէջ, ամէն վայրկեան, հիւանդներուն հետ էր:

Տեսաւ տառապանքը հիւանդներուն՝ ծեր ու երիտասարդ, որ շատ անգամ մահով կը վերջանար:

Եւ Ռուբեն, իբր գիտութեան մարդ և իբր բժիշկ, շատ անգամ անկարող կ'ըլլար հիւանդը մահուան ճիրաններէն ազատելու:

Լոզանի հիւանդանոցներուն մէջ, Ռ. Սեւակ ճանչցաւ «Կեանքը»: Եւ մանաւանդ՝ ճանչցաւ ամենազօր «Մահ»ը որ տիեզերքի անգութ «աստուած»ն էր:

Բժիշկ բանաստեղծէ մ'աւելի ո՞վ կրնար լաւ տեսնել կեանքի և մահուան միջեւ մղուող անհեթեթ պայքարը որ, անխուսափելիօրէն, միշտ մահուան յաղթանակով կը վերջանար:

\*\*\*

Ռուբեն Սեւակ Լոզան ապրած իր գրեթէ տասը տարուան կեանքի ընթացքին, իբր խորաթափանց մարդ, տեսաւ Եւրոպական քաղաքակրթութիւն ըսուածին երեւութապէս բարեսիրտ, բայց իրականութեան մէջ անգութ և անխիղճ կառոյցը: Ան, Լոզանի մէջ, մանաւանդ 1905-էն մինչեւ 1911-թ.ը, իր աշակերտական տարիներուն ճանչցաւ աղքատութիւնը:

Եւ մանաւանդ տեսաւ «Դրամ» ըսուած այս բռնակալին անօրէն իշխանութիւնը:

Եւ ճանչցաւ այս Դրամ-Բռնակալին լուծին տակ ընկճուող ծեր և հիւանդ մարդոց ու ընտանիքներուն ողբերգական կեանքը, որուն «Կեանք» ըսել կարելի չէր:

\*\*\*

Եւ Ռ. Սեւակ Լոզանի մէջ, հայրենիքէն հեռու, ապրեցաւ 1909-թ.ի Կիլիկեան ողբերգութեան պատճառած տառապալից մտատանջութիւնները:

Եւ մանաւանդ՝ Կիլիկիոյ ողբերգութիւնը պատճառ եղաւ, որ ան մէկ անգամ ալ տեսնէ Եւրոպական պետութիւններուն հայկական ջարդերուն հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնը և յատկապէս՝ լուռ մեղսակցութիւնը:

\*\*\*

Գրեթէ մէկ դարէ ի վեր, շատ բան գրուած է բանաստեղծ-գրող Ռ. Սեւակի մասին:

Երբեմն շռայլ, երբեմն զուսպ, երբեմն նուազ շռայլ գնահատանքները ննադատութիւններ կատարուած են իր գրութիւններուն մասին:

Բնական է՝ այս գրութիւններու բուն արժէքի գնահատութիւնները կախում ունէին այդ գրադատներուն հասկնալու և տեսնելու կարողութենէն:

Եւ մանաւանդ՝ ըստ հայկական սովորութեան՝ քննադատ անձին կուսակցական պատկանելիութենէն:

Բայց, մեզի համար, անոր մասին կատարուած ամէնէն կարելոր և խտացած բովանդակութեամբ գնահատանքը, «Ամէնուն Տարեցոյցի» հեղինակ Թեոդիկին ըսածներն են...»

«Աթենա Իմաստութեան շիթը դրած է անոր ուղեղին մէջ, Եսկիւլապ՝ բժշկութեան խորհուրդը, Հերմէս ալ՝ կայծը պերճախօսութեան»:

Այստեղ, Ռուբէն Սեւակի գրութիւններէն նշումներ ընելով, պիտի քանանք ապացուցանել, թէ Թէոդիկ ո՛ր աստիճան իրաւունք ունէր իր տուած գնահատութեան մէջ:

Նախ, մէջբերումներ պիտի ընենք Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրքը»-ին «Ջարդի Խենթը»-ին հառաչանքներէն: Անցողակի նշենք, որ «Ջարդի Խենթը»-ի հերոսը Ռաֆֆիի «Խենթը»-ին հետ միայն անունի նմանութիւն ունի:

Ռուբէնի «Ջարդի Խենթը», բանաստեղծին «Հաւատամք»ը եղող Հայ Ազգին համար, պայքարի հրամայականին գաղափարը կը ցոլացնէ...

*«Ջի թուրն աւելի արդար է խաչէն,*

*Ջի կեանքն անոնց է միայն որ քաջ են»:* [Ջանգալներ- Ռ. Ս.]

Ջարդի խենթը՝ քիրտերուն կողմէ սպաննուած իր քահանայ հօր դիակը ուսը առած. կը քալէ, կը քալէ և կը հառաչէ՝

*Կ'ըսէիր, հայրիկ, «Դրախտ երթալու*

*Կարճագոյն ճամբան ըլլալ է հլու*

*Հետեւող խաչի սուրբ արահետին...»:*

*- Հայր, էն կարճ ճամբան խանջերն է քուրդին,*

*Խանջերն է քուրդին»:*

Եւ Ջարդի Խենթը կը շարունակէ իր մենախօսութիւնը՝

*«ԱՀԱ ՄԵՆՔ ԿՈՒ ԳԱՆՔ ՈՒ ՄԵՆՔ ՆՁՈՎՔՆ ԵՆՔ,*

*ՈՒ ԽԱԻԱՐԻՆ ՄԷՋ ՄԽՈՒԱԾ ՏԷԳԸ ՆԵՆԳ*

*ՎՐԷԺՆԵՐՈՒ ՀԻԴՐԱՆ ԵՆՔ ՓԱՅՓԱՅԵԼԻ*

*ՄԵՆՔ, ՍԱՐՍԱՓԱՀԱՐ ՈՒ ՍԱՐՍԱՓԵԼԻ...»*

*«ՄԵՆՔ՝ ՀԻՆ ՈՒՄՏԵՐՈՒ ՆՈ՛Ր ՈՒՄՏԱԳԸՆԱԾ*

*ՄԵՆՔ՝ ՍՈՒՍԵՐԸ ԲԻՐՏ ՈՒ ԳԻՐՔՆ ՕՐԻՆԱԾ,*

*ՄԵՆՔ՝ ԾԱՍՄԱՆ ՋՐՎԷ՛ԺԸ, ՍԱՐԻ ԿՈՂԷՆ*

*ՄԵՆՔ՝ ԱՂՁԱՍՈՒՂՁԻ ԾՆՈՒՆԴ ԼՈՒՍԵՂԷՆ...»:*

*«ՉԵ՛ՋԻ՝ ՈՐ ԶԵՐԾՈՒԱԾ ՄԵՐ ՄՈՐԹԵՐԷՆ ՉԻԳ*

*ՀԱՐՍՆԻՔԻ, ՄԵՂՔԻ ՎՐԱՆՆԵՐ ԿԱՌՈՒԾԻՔ...*

*ՈՒ ՉԵՉ՝ ԵԻՐՈՊԵԱՆ ԴԻՔ ՈՐ ԾՆԱԳԻՆ*

*ՍԱԿԱՐԿԵԾԻՔ ՄԵՐ ԱՐԵԱՆ ԼՈՌԻԹԵԱՆ ԳԻՆ...»:*

Կրնա՛ք երեւակայել. Ռ. Սեւակ դեռ 1910-ին, իր «Կարմիր Գիրքը»-ին մէջ, իր սրտին ունենալով Կիլիկեան ողբերգութեան ցաւը, գրած էր.

*«Ու ձեզ եւրոպեան դիք որ շնագին*

*Սակարկեցիք մեր արեան լուսութեան գին...»:*

Եւ բանաստեղծը յանցաւորներու պատին գամած էր՝

ԵՐ ԿԵՐԵՍ, ԱՆԽԻՂՃ ԵԻՐՈՊԱԾԻՆԵՐԸ:

Մինչդեռ, մեր մեծաւոր առաջնորդներուն մեծ մասը, առաջին օրէն և մինչեւ 1915-թ-ը, նոյնիսկ մինչեւ այսօր, յոյս դրին այս [միայն դրամի

աստուծոյն հաւատացող) Երոպացիներուն վրայ:

Ինչպէ՞ս մեկնաբանել մեր առաջնորդներուն կուրուքեան աստիճանի հասնող այս անհեռատեսութիւնը, չըսելու համար՝ դաւաճանութիւնը: Անոնք, որ դարերէ ի վեր չեն հասկցած, թէ դրամատեր Երոպան մնայուն բարեկամն է Թուրքիին: Եւ յաւիտենական թշնամիին՝ Ռուսիին:

[«Երոպասէր», մանաւանդ ֆրանսասէր մեր միամիտ առաջնորդներուն վերջին յուսախաբութիւնը եղաւ՝ 18-5-2006-ին. ֆրանսական Ազգային Ժողովին մէջ. 1915-ի հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժել առաջարկող օրէնքի նախագիծին «Թաղումը»:

Եւ ո՞վ էր այս «թաղման» պատասխանատուն:


Ֆրանսական Ազգային Ժողովին նախագահը՝ JEAN-LOUIS DEBRÉ-ն է, որ այն միջոցին երբ երեսփոխանները օրէնքը սիտի քուէարկէին, [յոյս կար որ վաւերացուի] դադրեցուց ժողովին աշխատանքները:

Եւ, այս ձեւով, գերեզմանուէցաւ հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժել առաջադրող օրինագիծը:

Եւ ո՞վ է ժան-Լուի Տեպրէ: Ըսենք՝ հրեայ Ռաբունապետ մը, Տեպրէ անունով, որ անցեալին չենք գիտեր ի՞նչ պատճառաւ, դաւանափոխ կ'ըլլայ և քրիստոնէութիւն կ'ընդունի: Ահա, այս տխրահռչակ, դաւանափոխ ռաբունապետին թոռն է ժան Լուի Տեպրէ:

Կը կարծենք, որ ուրիշ պատճառ փնտռելու պէտք չունինք. 18 Մայիս 2006-ին, ֆրանսական Ազգային Ժողովին մէջ կատարուած գայթակղութեան պատճառն ու իմաստը հասկնալու համար:

Այսօրէ կը հրատարակենք ֆրանսական "AUJOURD'HUI" օրաթերթին մէջ, 19-5-2006-ին լոյս տեսած նկար մը իր մեկնաբանութեամբ, որ ֆրանսական իշխանութիւններուն հերթական [քանի՞երրորդ] դաւաճանութեան կը վերաբերի:



*PARIS (VIIe). HIER. Aux abords de l'Assemblée nationale, où la séance était houleuse, des manifestants arméniens étaient rassemblés. Un peu plus tard, les députés ont ajourné le vote d'une loi pénalisant le négationnisme sur le génocide des Arméniens par les Turcs. (APP)*

## GÉNOCIDE ARMÉNIEN : LA LOI ENTERRÉE

De MÉMOIRE D'HUISSIER. on n'a jamais vu cela... Hier, en début d'après-midi, une vingtaine de gendarmes ont été contraints de faire évacuer les tribunes de l'Assemblée nationale devant des députés sidérés. Une soixantaine de parlementaires examinaient la proposition de loi très sensible du groupe socialiste condamnant la négation du génocide arménien. Au moment de passer au vote, le président Jean-Louis Debré a subitement levé la séance. "Démocratie, démocratie", ont alors hurlé des dizaines de membres de la communauté arménienne. Plusieurs "Marseillaise" ont retenti. Le premier secrétaire du PS François Hollande, arrivé quelques minutes avant les incidents, est monté dans les tribunes pour tenter de ramener le calme.

Depuis plusieurs jours, l'incertitude planait sur l'issue de ce vote, chaque famille politique étant profondément divisée. Craignant une crise avec la Turquie. L'Elysée s'est activé, auprès des députés de la majorité pour éviter un vote favorable. Sous les invectives. Philippe Douste-Blazy, le ministre des Affaires étrangères, a affirmé hier que "ce texte serait considéré comme un geste inamical aux conséquences politiques et économiques sérieuses". Plusieurs députés UMP, comme Eric Raoult ou Patrick Devedjian, voulaient passer outre ces mises en garde. Une majorité hétéroclite semblait ainsi se dégager en faveur de la proposition de loi. Mais, devant le risque encouru, le vote a été reporté sine die.

ERIC HACQUEMAND



**ԲԱՑ ՆԱՄԱԿ...**

**«ՍՈՒՏԵՐՈՒ ԵՒ ԵՐԱԶՆԵՐՈՒ ԶՈՂ,  
«ԷԾ ՆԱՀԱՏԱԿ» ԵՂԱԾ ԱԶԳ ՄԸ՝ «ՀԱՅԵՐԸ»**

**— Հատորի հեղինակ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ**

*ՄԻ. Նախկին լիբանանահայ, այժմ, տասնամեակներ է Վեր Պրագիլ ապրող Ալպեր Բեուեան, ջերմ հետևող մը մեր ներիուն աշխատակից՝ Յովհաննէս Զիլինկիրեանի յօդուածներուն, և, մանաւանդ, ընթերցելէ ետք անոր նորերս լոյս տեսած «Սուտերու եւ Երազներու Զոհ, «էջ նահատակ» եղած Ազգ Մը՝ «Հայերը» ստուար հատորը, հետեւեալ «Բաց նամակ»ը յղած է հեղինակին, տալով գնահատութիւնը երկին խորաքափանց հմտութեամբ մը, որ, գիրքը արժեւորելուն գուգահեռ, նամակագրին գաղափարական ինքնութեան մասին յստակ պատկերացում կազմել կու տայ: Սկիզբը տեսնել «Նայիրի»ի թիւ 254-ի մէջ:*

...Այս Զարիքի իմփերիամ է, որ Հարաւային Ամերիկայի երկիրներու և ժողովուրդներու անբասիր առաջնորդ, մեծաճուն հերոս Տօքթ. ԷՆՇԵՍԺՕ ԶԷԿԷՎԱՐԱՆ սպաննեցին Պոլիվիոյ լեռներուն վրայ, Սիէրա: Մայէսթայի մէջ դաւադրաբար, որովհետեւ կրցած էր Հարաւ-Ամերիկեան ժողովուրդներուն մէջ պաշտամունքի հասնող պայքարի և հայրենասիրութեան ջահակիրը դառնալ: Այսպիսի ղեկավար մը շուտով իրենց ունեցած ատելի, հակա ժողովրդական վարչաձեւը, միլիոններու, և պիլիոններու հասնող ասյօրէն շահու աղբիւրները կրնար ցամքեցնել օր մը: Այդ իսկ պատճառաւ, իրենց ուղարկած «Կանաչ-սալաւարտակիր» յատուկ ջոկատին կողմէ սպաննուեցաւ այդ գաղափարապաշտ առաջնորդը, անմահաճուն ԷՆՇԵՍԺ ԶԷԿԷՎԱՐԱՆ, որ այսօր կը փառաբանուի ամբողջ աշխարհի մէջ, որպէս արդար դատի խորհրդանիշ:

Այսօր, Հարաւային Ամերիկայի երկիրները գիտակից են այս միութեան դաւին: Անոր համար զինք կը պաշտեն խորին յարգանքով: Միլիոնաւոր երիտասարդներ, իրենց ամէն օր գործածած շապիկներուն վրայ, անոր դիմանկարը քիշէ ըրած, հպարտանքով կը ցուցադրեն:

Այս Զարիքի իմփերիայի անդամ երեք պետութիւններ՝ Իսրայէլ, Թուրքիա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ կոչուող, ու մասնա դաւադիր այս խմբակին մաս կազմող Աճգլիան, Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ սպաննել տուին մեծ յեղափոխական-հերոս «ԿԱՄՕ»-ն, ոճրապետ ԷՆՎԷՐ փաշայի հրահանգով: Ինչպէս մեծ պատմաբան Վլատիմիր Պետրոսեան կը քիշէ իր հրատարակած սքանչելի գիրքին մէջ, «ԷՆՎԷՐԻ ՎԵՐՋը» խորագրեալ, որ ԷՆՎԷՐ կը յանձնարարէ «ԿԱՄՕ»-ն մէջտեղէն վերցնել: Եւ այդպէս ալ ըրին: Թիֆլիսի մէջ «ԿԱՄՕ»-ն հեծանիտով անցած պահուն, անկիւնէ մը յանկարծակի դուրս եկած ինքնաշարժի մը կողմէ կը կոխկոտորուի ու կը մահանայ: Այս դիտումնաւոր կերպով, փլանաւորուած արկածը գործն է, Աճգլիա - Թուրքիա, Ազրպէյճան և Սիոնիզմ վոհմակին ոճրագործներուն: Նոյնպէս՝ այս ոճրագործներու ջոկիին կողմէ դաւադրաբար սպաննուեցան մեծ հայրենասէր, մեծ յեղափոխական՝ Ստեփան Ծահումեան, Վարչապետ Ալեքսանդր Միասնիկեան և դեռ շատեր, յայտնի և անյայտ կերպերով:

Թանկագին ԸՈԿ. Յովհաննէս Զիլինկիրեան՝ թոյլ տուէք, որ ձեզ ըմպեր կոչեմ, որովհետեւ ձեր պայքարի խիզախութիւնը, քաջութիւնը, վայել է երդուեալ գաղափարապաշտ ՀՈՇԱԿԵԱՆԻ մը նկարագրին: Ձեր բոլոր մտքերը, գաղափարները, բանաւոր ու արդարատեղ մարտնչումը համահունչ լոզունգներն են մեր մեծ ՀՈՇԱԿԵԱՆ ղեկավարներու, խրոխտ յեղափոխականներու պայքարին: Իճծի համար ձեզ պարուն կոչելը կարծես հոգիս թախիծով կը պարուրէ: Պարուն անուամու-

մը ամյարիւր է ձեր մեծ ազատամարտիկի էութեան, ձեր հոգեմտաւոր լեզւափոխակազմի գործունէութեան: Ասիկա կ'ըսեմ համոզուած և վստահ՝ ձեր ազգասպաշտութեան, հայրենասիրական բացառիկ նկարագրին օրինակելի փաստին յենած: Ես շատ երջանիկ կը զգամ ինքզինքս, որովհետեւ՝ ներքեզ որ ըսեմ՝ ձեզ կը նկատեմ մեր մեծ լեզւափոխական կուսակցութեան երդուեալ զինուոր մը: Չճայած դուք ովստեալ մըն էք «Հայ Ազգ» կուսակցութեան: Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը հայ քաղաքական առնակական կազմակերպութիւնը, իր ազգին և ժողովուրդին չէ՛ դաւաճանած, ասոր համար ալ իյթթիհատական դահիճները կը սոսկային մեր կուսակցութեան և որոշեցին բնաջնջել մեզ կախադաններու, բանտերու, զմտանմերու և ուրիշ անմարդկային միջոցներով:

Գիտէ՞ք, ԸՆԿ. Յ. Չիլիճկիրեան... Ես, հեռաւոր այս երկիրը հաստատուած համեստ զինուորագրեալը Հայկ. Պահանջատիրութեան, անսահմանօրէն երջանիկ եմ ձեր սերտօրէն ողջունելի համագործակցութեան մեր ղեկավարներէն, խրոխտ լեզւափոխական ԸՆԿ. Ժիրայր Նայիրիին հետ, որու շատ տասնամեակներու վրայ տարածուող հայրենասիրական ու ժողովուրդանուէր գործունէութիւնը, իր բեղուն վաստակով, բարձր գնահատուած է Մայր հայրենիքին ու Մայր Աթոռին կողմէ: Ըստ երջանիկ եմ որ դուք և ԸՆԿ. Նայիրին երկուորեակ, միական, միաձոյլ ամբողջութիւն կազմած, սիւնաքանակ քաղաքական միտքը սլաքափայտապարէն լուսաւորող ածու բացիք, ճշմարիտ ուղի մը՝ հայ քաղաքական ճիշդ կողմնորոշման և պահանջատիրական պայքարի:

Պոլսեցի ԸՆԿ. Թորոս Ֆէրմանեան 1961-ին, իր 72 տարեկան հասակին, Պուլճոս Այրէսի մէջ, Հնչակեան զոյգ սլաքափայտները կարդալէ ետք, եկաւ, չափէն աւելի յուզուած, Հնչակեան երդուելու մեր տան մէջ:

Թանկագին ԸՆԿ. Յովհաննէս Չիլիճկիրեան [հօրս և եղբօրորդոյս անուններն ալ Յովհաննէս են] մենք, Հարաւային Ամերիկայի հնչակեաններս, մենք ես պարտք կը զգանք մեծարելու մեր սուրբ նահատակը, Ռուբէն Սեւակը, և նոյնիսկ կարելիութիւն ունինք անոր շքեղ արձանը կանգնեցնել յատկապէս Ռուսկոյայի մէջ: Այս երկրի պետական վարիչները շատ բարեացակամ են հայոց, հայկական Դատին և մեզի՝ Հնչակեաններուս նկատմամբ: Ես վստահ եմ, որ համադիր աշխատանքով կարող ենք իրականացնել այս սուրբ գործը:

Ասիկա իմ կողմէ մատնանշում մըն է միայն առայժմ, յառաջիկային մեր կուսակցական սպաշտօնական որոշումներու նիւթ կրնանք դարձնել հաւանաբար և կարելիութիւն ունինք իրականացնելու այս սրբազան ծրագիր-գործը:

Սիրելի երէց մարտընկեր՝ ձեր հրասպարակագրական սլաքափայտական տաղանդը ուղղակի առնչութիւն ունի, կաս ունի, մեր մեծ սուրբ նահատակ Ռուբէն Սեւակի գերդաստանին ձեր սլաքակցելիութեան հետ, ստոյգ կերպով, անտարակոյս: Պաշտելի Ռուբէն Սեւակի գրոմոսօմները և ձեր գրոմոսօմները համեմատելու հարկ չկայ: Անոնք կուգան, նոյն համեմատութեամբ և նախախնամական տնօրինումով, նոյն լուսաղբիւրէն:

Ես՝ Հարաւային Ամերիկա, Պրագիյի մէկ համեստ անկիւնը ակամայ կայք հաստատած գրականութեան, սլաքափայտութեան և ընկերային գիտութիւններու մնալուն ուսանողս, հայ ժողովուրդի ազգային անժխտելի և անուրանալի իրաւունքնե-

րու համեստ բայց անզիջող մարտիկս, ռազմիկը, վա՛ռք կուտամ, որ հայութիւնը ծնած է ձեզ սլէս անբասիր, նուիրեալ ազգայինների որոնք մշտաբար կը հսկեն այս մեծ հնադարեան հանճարեղ ժողովուրդին իրաւունքներու պաշտպանութեան և անոր հզօրացման վրայ: Կորովի զինուորագրեալներն են հայկ. պահանջատիրութեան:

Դուք և ԸՆԿ. Ժիրայր Նայիրի հաստատապէս, գոնէ այս վերջին տասնամեակին [1995-2005], Սփիւռքի և Հայաստանի հայութեան առաջ ակօսեցիք՝ հալքաղաքական մտքի միմչ այդ խոպան մէկ անդաստանը, հոն սերմանելով ճշմարտութեան սերմեր, որ ծիլ նետեն, ծաղկին և բարգաւաճին: Այդ կենսատու, աւշալի սերմերը ճշմարտութեան ու արդարութեան, արդէն ծիլ են բացած, ընծիւղեր են, կը վերածուին բերրի ցորեանի դաշտերու և հիւթեղ, մրգառատ պտղաստանի:

Ինչքա՛ն կը ցամկայի, որ առիթով մը ողջագութի ձեզ և ձեր օրհմեալ աջը սեղմէի ու պաչէի սիրալիր, դեռ այս կեանքէս չհեռացած:

Ես՝ «Ռազմիկ հայրենեայց»ս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան փառապանծ Մայր Կուսակցութեան, համեստ մէկ զինուորեալը, իմ հոգու բազուկներով ուժգին կ'ողջագութեմ ձեզ: Գիտցէք, որ դուք իմ հայու հոգիին պարգեւած էք երջանկութիւններու էն խորունկը, էն ուրախը, և զմայլելիօրէն՝ է՛ն դիւթականը:

Սեմեակս յորդուն է հարիւրաւոր «Նայիրի»ներու խորձերով և ընկերա-քաղաքական գրականութեամբ: Ամէն գիշեր հաճոյքով կը կարդամ յատկապէս ձեր զգայացունց գրութիւնները որոնք հայութեան առաջ կը բանան լոյսի, գիտութեան, զգաստութեան, ինքնաճանաչման և ինքնագիտակցութեան լուսաւոր ուղին, ուրկէ պահանջատէր հայը կրնայ ու սլիտի քալէ ինքնավստահ և մշտաբար:

Փառք ու պատիւ ձեզ՝ հայկական իրաւունքներու արթուն պահակիդ: Ընկերական անսահման սիրոյ զեղուն զգացումներով կ'ողջունեմ ձեզ, կ'ողջագութեմ, գաղափարակիցի հարազատութեամբ:

Ձեր կրտսեր մարտընկերը՝ Ա.ԼՊԷՐ ՔԷՕՍԷԵԱՆ Պրազիլ. (Ծար. 3 և Վեոյ)

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
**24 NİSAN 1915 - DE**  
**TÜRKLERİN GERÇEKLEŞTİRDİKLERİ**  
**ERMENİ SOYKIRIMININ**  
**91. YILDÖNÜMÜ DOLAYISI İLE**  
**LÂNETNAME N. 3**  
**RAHMET OLSUN TÜRKİYE CUMHURİYETİNE**  
**YASASIN YENİ BİRLESİK**  
**KÜRT DEVLETİ**

TÜRKİYEDE NELER OLUYOR.

ANKARADA DANİSTAY KANA BULANIYOR "CUMHURİYET" GAZETESİ 3 KERE BOMBALI SALDIRIYA UGRUYOR....

DURUN HELE. BU DAHA İSİN BASLANGICI...

...19 MAYIS 2006 TARİHLİ TÜRK GAZETELERİNİN BASLIKLARI, İKİ GÜN ÖNCE ÖLDÜRÜLEN DANİSTAY YARGICI MUSTAFA YÜCEL ÖZBİLGİN-İN CENAZESİ İLE ALÂKALI....

18 MAYIS 2006-DA FRANSTZ MECLİSİNDE ERMENİ SOYKIRIMINI İNKAR EDENLERİ CEZALANDIRMA KANUN TEKLİFİNİN ERTELENMƏSİ HABERİ TÜRK GAZETELERİNDE İKİNCİ HABER OLARAK VERİLİYOR.

19 MAYIS 2006 TARİHLİ "HÜRRIYET" GAZETESİ BU HABERİ BİRİNCİ SAHİFESİNİN EN ALTINDA KÜÇÜK BİR BASLIKLA VERİYOR.

"PARIS YASAYI RAFA KALDIRDI" TABİİ. TÜRKLER ÇOK MEMNUN. ÇOK SEVINMEYİN TÜRKLER.

2001-TARİHİNDE İSVİÇRE MECLİSİ. İSVİÇRE MEBUSU JOSEF ZİSYADIS-İN ERMENİ SOYKIRIMINI TANIMA KANUN TEKLİFİNİ SADECE BİR KAÇ OY ÇOĞUNLUKLA KABUL ETMEMİŞTİ.

FAKAT BİR MÜDDET SONRA İSVİÇRE MECLİSİ ERMENİ SOYKIRIMINI RESMEN TANIDI.

ONUN İÇİN DİYORUZ KI, ÇOK SEVINMEYİN SOYKIRIMCI TÜRKLER. FRANSA DA BİR MÜDDET SONRA ERMENİ SOYKIRIMINI İNKAR EDENLERİ CEZALANDIRMA KANUNUNU KABUL EDECEKDIR.

BU DURUMU SİZ DE BİLİYORSUNUZ ZATEN.

...FAKAT BUGÜN SİZİN İÇİN EN MÜHİM MESELE KÜRT PROBLEMİ.

1990 İRAK HARBİNDE BERİ KUZEY İRAKTA BİRLESMİS MİLLETLERİN KARARI İLE BİR KÜRT DEVLETİ KURULDU.

VE BU İRAK-KÜRDİSTANI, BUGÜNKÜ İRAK HARBİNDE AMERİKALILARIN EN GÜVENDİKLERİ MÜTTEFİKLERİ.....

VE SİZ TÜRKLER ÇOK DENEDİNİZ, BU KÜRT DEVLETİNİ ORTADAN KALDIRMAYA.

VE KUZEY İRAKA GİRMEYE ÇALISTINIZ.

SÖZ DE ORDAKI TÜRKMENLERE YARDIM ETMEK İÇİN.

FAKAT HER SEFERİNDE DE AMERİKALILAR ENGEL OLDU.....

BUGÜN İSE TÜRKİYESİNİN İS DURUMU ÇOK KARISIK.

DİĞGUDA KÜRT GERİLLALARI DEVAMLİ TÜRK ASKERİ KÜVVETLERİNE SALDIRIYOR. VE HERGÜN BİR ÇOK TÜRK ASKERİ, KÜRTLERİN KURSUNLARININ VE MAYINLARININ KURBANI OLUYOR.

GÜNEY DİĞG ANATOLYA SEHIRLERİNDE HALK DEVAMLİ ÇALKANTI HALİNDE.

VE ANKARANIN GÖBEGİNDE İSLAMCI GERİLLALAR DANİSTAYI BASIYOR.

BİR YARGIC ÖLÜYOR. DÖRT YARGIC DA AĞIR YARALANIYOR.

ATATÜRKÇÜ LAİKLİĞİN SENBOLÜ İSTANBULDAKI "CUMHURİYET" GAZETESİNE ÜÇ SEFER BOMBALI SALDIRI YAPILIYOR.

BU OLAYLARI BAHANE EDEREK, A.K.P. TAYYİP ERDOĞAN HÜKÜMETİNİ DEVİRMEK İSTİYENLER VAR.

19 MAYIS 2006 TARİHLİ "HÜRRIYET" GAZETESİNDE FIKRACI YAZAR TUFAN TÜRENÇ BASLIK ATMIS. "TÜRKİYE BU İKTİDARDAN KURTULMAK ZORUNDA" DİYOR.

AMA NASIL? TAYYİP ERDOĞANIN PARTİSİ A.K.P. HALKIN OYLARI İLE İS BASINA GELDİ.

SİMDİ DEMOKRAT GEÇİNEN TÜRKİYEDE TAYYİP ERDOĞANIN A.K.P. İKTİDARINI, ASKERİ DARBELERLE AŞAĞI İNDİRMEK ÇOK ZOR MESELE DİR ÇÜNKÜ AMERİKA BIRAKMAZ...

50 SENEDEN BERİ TÜRKİYEDE ASKERİ DARBELERİ YAPTIRAN, AMERİKANIN C.I.A. TESKİLATI İDİ.

27 MAYIS 1960 İHTİLALI, DAHA SONRA KENAN EVREN DARBESİ, TAMAMEN C.I.A.-NİN ESERİDİR.

BUGÜN İSE AMERİKA, TÜRKİYEDE ASKERLERİN İKTİDARA GELMESİNİ İSTEMİYOR.

NİÇİN Mİ DİYORSUNUZ ?

ÇÜNKÜ ARTIK TÜRKİYE AMERİKANIN VAZ GEÇİLMEZ MÜTTEFİKİ DEĞİL.

VE AMERİKA, TÜRKİYESİNİN SALDIRGAN VE GENİŞLEME RÜYALARINI BİLİYOR.

MALUM YA, DÜNYA EMPERYALİSTLERİ KENDİLERİNE RAKİP OLACAK DEVLETLERİ PARÇALAYAR, TEHLİKELİ OLMASINLAR DİYE.

BUGÜNKÜ DURUMDA TÜRKİYESİNİN İSTİKBALI ÇOK PARLAK DEĞİL.

TÜRKİYE, İÇERDEN VE DİŞARDAN İSLAMÇILARIN, KÜRTLERİN VE NE OLDUGU BELİRSİZ KÜVVETLERİN DEVAMLİ HUCUMLARINA MARUZ KALACAK.

ONUN İÇİN DİYORUZ KI- RAHMET OLSUN TÜRKİYE CUMHURİYETİNE

YASASIN YENİ BİRLESİK KÜRT DEVLETİ.



Ն Ա Մ Ա Ն Կ 2 3 8

ԼՆԱՄԱԿ ՄՕՐԵՂՐՕՐՍՂ

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

*Սիրելի՛ մօրեղբայր,*

Վերջին Գամակս, որ յիսուն տարիներու հնութիւն մը ունի, մնաց անպատասխան, որովհետեւ որոշեցիր հրաժեշտ տալ այս անցաւոր կեանքիդ. «անելէդ» ի՞նչ էր. մարդ Աստուծոյ: Բայց մենք չենք կրնար Գախախնամութեան որոշումներուն առարկել:

Վստահ եմ որ հոն ալ, վերը, կը գուրգուրաս ընտանիքիդ անդամներուն վրայ. ինչպէս որ կը գուրգուրայիր հոս՝ վարը: Մայրիկս՝ Տուտուն, արդէն քեզ կը սպասէր: Յետոյ՝ ձեզի միացան քոյրերդ՝ Մերունը և Սանդուխտը. և յետոյ՝ Տիկ. Արուսեակը՝ սիրելի կողակիցդ:

Մեկնելէդ ասդին աշխարհը նոյնն է, միայն մարդիկ անլի չարացած են. եթէ չար չէին արդէն: Կրօնները, անգոր՝ մարդոց բարոյականը բարելաւելու, տեղքայլի մէջ են և երբեմն ալ անհանդուրժողութեան երեւոյթներ կը պարզուին, հակառակ կրօնական ըմբռնումներուն:

Նիւթական յառաջդիմութեան հետ, յետադիմեց մարդկային նկարագիրը, անմահ Յակոբ Պարոնեանցի գրածին պէս.

Կը մնան բառարաններու մէջ:

Միշտ կը փափաքէիր որ Հալէպի ազգային կեանքին մասին գրեմ, ինչ որ կ'ընէի սիրով: Այն ժամանակներուն, կուսակցական պայքար կար. եկեղեցական հարցեր և դպրոցական խնդիրներ: Կացութիւնը գրեթէ նոյնն է այսօր: Կուսակցական պայքար անշուշտ որ կայ. բայց ձեռնոց-

ները տարբեր են: Ի՞նչ կ'արժէ ազգ մը, եթէ կուսակցական պայքար չունի: Վերն ալ նման պայքարներ կա՞ն: «Մենք» ի հոգեբանութիւնը անլի զօրաւոր կերպով ի յայտ կու գայ, երբեմն ալ՝ կը ժայթքի: Հարիւր տարի առաջուան մտայնութեամբ կը գործեն դեռ անոնք. իւրաքանչիւրը մի քանի կտորի վերածուած՝ ոյժ չունին: Չեն ուզեր ըմբռնել, թէ բռնցքաւորութիւն ժամանակն է -մէկ մարմնով և մէկ գլուխով ներկայանալու միջազգային ատեաններուն: Այս ալ մեր դժբախտութիւնն է: Մեր եկեղեցին ալ շատ փայլուն վիճակի մէջ չէ: Դուն մեծ հաւատքով տքնեցար եկեղեցիները ի մի բերելու:

Այսօր մեր եկեղեցին ալ երկուքի բաժնուած է. ողջութեանդ ալ նման դէպքեր պատահեցան: Այժմ ԱՅԹԻ-Իսսի և Սբ. Էջմիածնի վանքերը մեծ զոհողութիւններով կը ջանան եկեղեցականներու նոր սերունդ հասցընել, ինչ որ շատ գնահատելի է: Հոգեպարար է տեսնել երիտասարդ վարդապետներ, որոնք նուիրուածութեամբ աշխատանք կը տանին: Հայաստան և Սփիւռք պէտք ունին իրաւ եկեղեցականներու՝ լուրջ և ծանրագլուխ, ինչպիսին էին անոնցմէ շատ-շատեր 1915-էն առաջ: Ողջ մնացողներ շարունակեցին իրենց գործը նոյն թափով, բայց միշտ ալ կարիքը զգացուած է այդ պատրաստութեամբ եկեղեցականներու: Օրինակ, Խրիմեան Հայրիկ կամ Օրմանեան Արքեպիսկոպոս չունեցանք վերջին դարու ընթացքին:

Ես կը հաւատամ որ եկեղեցական ըլլալ, նախ զոհաբերութիւնն է. և յետոյ ալ՝ ամբողջական նուիրում Հայ եկեղեցիին:

*Սիրելի մօրեղբայր,*

Կը տեսնես որ փիլիսոփայեցի: Կը

Ն Ա Մ Ա Ն Կ 2 3 8

ԼՆԱՄԱԿ ՄՕՐԵՂԲՕՐՍՂ

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

յիշե՛ս. գրած էիր. թե՛ «դուն շատ գրե. իմ քիչ գրելուս մի՛ նայիր»: Ես ալ այդպես կ'ընեմ:

Իսկ դպրոցներու մասին նախընտրելի է չգրել: Հակառակ տարուած աշխատանքին, արդիւնքները գոհացուցիչ չեն: Տնտեսական վիճակը բազմաթիւ աշակերտներ դրկեց պետական ծրիավարժ դպրոցներ: Իսկ մեր ունեւոր դասակարգը, իր զաւակները օտար դպրոց կը դրկէ, կարծելով որ անոնցմէ մէյ մէկ հանճար դուրս պիտի գան: Օտար վարժարանը ոչինչ կու տայ. եթէ ենթական ուշիմ չէ:

Մելգոնեանը, որ քու սիրած միութեանդ կողմէ կը մատակարարուէր, ութսուն տարի ծառայելէ ետք, արդէն փակուեցաւ: Ժողովուրդը մեծապէս ընդվզեցաւ, որ նման ազգապահպանման հսկայ ամբողջ մը պատնէշ մը, փուլ եկաւ անիմաստ տրամաբանութեամբ մը: Մամոնային մահասփիւռ ճառագայթումները կուրցուցած էին ղեկավարութեան աչքերը: Վստահ եմ, որ դուն ալ պիտի մերժէիր նման գործարք մը: Մի քանի տող գրեցինք առ ի բողոք. գէշ մարդ եղանք: Ժողովուրդին խօսքը ե՞րբ արժէք ունեցեր է որ...: Ի միջի այլոց ըսեմ, թէ ես ալ բաներ մը կը գրեմ: Զեզի քաշեր եմ երելի: Ժողովուրդը կը գնահատէ, ոմանք ալ դժգոհ են: Մենք ե՞րբ պիտի հանդուրժենք քննադատութեանց: «Խելքս ալ չի կտրեր կոր», պիտի ըսէր մեր Հալէպի «Ֆըս-Ֆըս» Յակոբը:

Քիչ մըն ալ լաւ լուրեր.

Զաւակդ՝ Եդուարդը, քանի մը տարի առաջ Ա. Մ. Նահանգներու մէջ մեր հանդիպումներէն մէկուն, ինծի յանձնեց տրցակ մը քու՝ «Խելքիս Փչածներէն», գորս այնքան գուրգուրանքով պահած էր: Ասոնք լոյս տեսած են «Պայքար» օրաթերթին մէջ: Բոլորն ալ կարդացի, ու տեսայ որ նոյն ատեն բանաստեղծ ալ ես. ինչ որ մեծ յայտնութիւն մը եղաւ ինծի համար: Կարծես թէ այսօր գրուած ըլլային անոնք: Նախապէս, այդ գրութիւններէդ ինծի տուած էր ընկերդ՝ Պրն. Գրիգոր Պողարեանը, որ գիտես թէ Կրթասիրացի երկարամեայ տնօրէնը եղած էր:

Ուրեմն որոշեցի տրամադրելի բոլոր գրութիւնները հատորով մը լոյս ընծայել և կորուստէ փրկել: Վստահ եմ որ շատ պիտի ուրախանաս:

Ես ալ անսահման ուրախ եմ այս գործով: Խմբագրութիւնը յանձնեցի Փրոֆ. Երուանդ Զասունիին, որ Զասունի Աւետարանական գերդաստանի շառաւիղներէն է, որ իր լաւագոյնը ըրաւ: Կը տեսնես, թէ այս ալ տեսակ մը եկեղեցական գործակցութիւն է, որուն դուն ցանկացած էիր ժամանակին, ամբողջ հոգիովդ:

Այս գիրքէն օրինակ մը հետս պիտի բերեմ քեզի, երբ իմ ալ «վիզա»ն գայ՝ ի վերին Երուսաղէմ ճամբորդելու:

Գիրքը պիտի հաւնիս անպայման:

Տակաւին շատ բաներ կան գրելիք. բայց քիչ մըն ալ յաջորդ նամակին ձգեմք:

Սիրով՝  
ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**  
**2 4 Ա Պ Ր Ի Լ 1 9 1 5 - Ի Ն Ծ**  
**Թ Ո Ւ Ր Թ Ե Ր Ո Ւ Ն Գ Ո Ր Ծ Ա Մ**  
**Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ց Ե Ղ Ա Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն**  
**9 1 - Բ Գ Ց Ա Ր Ե Լ Ի Թ Ի Ն**  
**Պ Ա Տ Ե Հ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ**  
**Ա Ն Է Ծ Ք Ա Գ Ի Ր - Թ Ի Ի 3**

**Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ Ի Ի Ն՝ Թ Ո Ւ Ր Թ Ի Ո Ց Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն -**  
**Շ Ա՛Տ Ա Պ Ր Ի Ն Ո Ր Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ք Ր Տ Ա Կ Ա Ն**  
**Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

Ինչե՛ր կը պատահին Թուրքիոյ մէջ: Անգարայի պետական ատեանը արիւնով ողողուեցաւ: «Cumhuriyet» թերթը 3 անգամ ռումբային յարձակման ենթարկուեցաւ: Դե՛ն՝ սպասեցէք... Այս՝ տակափեւ «գործ»ին սկզբնաւորութիւնն է... 19 Մայիս 2006 թուակիր թրքական թերթերուն վերնագիրները՝ 2 օր առաջ սպաննուած Պետական Ատեանի դատաւոր Mustafa Yücel Özbilgin-ին յուղարկաւորութեան մասին գրութիւններ են... 18 Մայիս 2006-ին, ֆրանսական Ազգ. ժողովին մէջ, հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժելու օրինագիծին քննարկման յետաձգուած ըլլալու լուրը, թրքական թերթերուն մէջ իբր երկրորդական եղելութիւն տրուեցաւ: 19 Մայիս 2006 թուակիր «Hürriyet» թերթը, այս լուրը իր առաջին էջին ամէնէն վարի մասին մէջ, փոքր վերտառութեամբ տուած է՝ «Փարիզը՝ օրէնքը «մթերանոց» դրաւ» ըսելով: Ծառ մի՛ ուրախանաք թուրքեր... 2001 թուականին Ջուիցերիոյ ազգային ժողովը, զուիցերիացի երեսփոխան Josef Zisyadis-ին առաջարկած հայկական ցեղասպանութիւնը ծանչնալու օրինագիծը, միայն քանի մը քուէի տարբերութեամբ մերժած էր: Բայց միջոց մը ետք, Ջուիցերիական Ազգային ժողովը, հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ծանչցաւ: Այդ պատճառաւ կ'ըսենք, որ շատ չուրախանաք ցեղասպան թուրքեր: Ֆրանսան ալ, միջոց մը ետք, հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժող օրէնքը պիտի ընդունի: Այս պարագան դուք ալ գիտէք արդէն... Բայց, ձեզի համար, ներկայի ամէնէն կարեւոր հարցը այսօր, քրտական խնդիրն է: 1990-ի իրաքեան պատերազմէն ի վեր, Միացեալ Ազգերու որոշումով, հիւսիսային իրաքի մէջ քրտական պետութիւն մը հիմնուած է: Եւ այս՝ իրաքեան քիւրտիստանը՝ այսօրուան իրաքեան պատերազմին մէջ, ամերիկացիներուն ամենաշատ վստահած դաշնակիցն է... Եւ դուք, թուրքերդ, շատ փորձեցիք, որ այս քրտական պետութիւնը մէջտեղէն վերցնէք: Եւ հիւսիսային իրաք մտնել աշխատեցաք՝ իբր թէ այդ տեղի թիրաքմէնները պաշտպանելու համար: Բայց, ամէն անգամուան պէս ալ, Ամերիկացիները արգելք եղան ձեզի... ... Մինչդեռ այսօր, Թուրքիոյ ներքին վիճակը շատ խառնակ է: Արեւելքի մէջ քիւրտ մարտիկները, թրքական ուժերուն վրայ տեւական յարձակումներ կը գործեն, և ամէն օր մեծ թիւով թուրք զինուորներ զոհ կ'երթան քրտական փամփուշտներուն և ականներուն: Հարաւ-արեւելեան Անաթոլիոյ քաղաքներուն մէջ, ժողովուրդը յարատեւ խռով վիճակի մէջ է: Եւ Անգարայի կեդրոնը, իսլամական մարտիկներ, պետական ատեանին վրայ յարձակում կը գործեն: Դատաւոր մը կ'սպաննուի: Չորս դատաւորներ ալ ծանր կը վիրաւորուին:



Աթաթիւրքեան Lâique- ութեան խորհրդանիշը եղող Պոլսոյ «Cumhuriyet» թերթին վրայ, երեք անգամ ումթերով յարձակում կը գործուի: Այս դէպքերը պատրուակելով, A.K.P.ի Tayyip Erdogan-ի կառավարութիւնը վառ անելու ռզողներ կան:

19 Մայիս 2006 թուակիր "Hürriyet" թերթի յողուածագիր Tufan Türinc-ի վերնագիրը կը ծանուցանէ. «Թուրքիան, այս իշխանութեանէն, ձերբազատուելու ստիպողութեան տակ է»:

Բայց՝ ինչպէ՞ս: Tayyip Erdogan-ի A.K.P. կուսակցութիւնը, ժողովուրդին բուէներով իշխանութեան եկաւ:

Հիմա, Democrate ձեւացող Թուրքիոյ մէջ, Tayyip Erdogani-ին A.K.P.ի իշխանութիւնը զինուորական հարուածով վար անելը, շատ դժուար հարց է: Որովհետեւ Ամերիկան չի ձգեր:

50 տարիներէ ի վեր Թուրքիոյ մէջ, զինուորական պետական հարուածներ կատարել տուողները Ամերիկեան Սի. Այ. Էյ. կազմակերպութիւնն էր: 27 Մայիս 1960-ի յեղափոխութիւնը, Քենան Էվրէն-ի զինուորական հարուածը, բուրդովին Սի. Այ. Էյ.ի ստեղծագործութիւնն էր: Մինչդեռ այսօր Ամերիկան, Թուրքիոյ մէջ զինուորականներուն իշխանութեան գալը չ'ուզեր: Ինչո՞ւ.- կը հարցնէք:

Որովհետեւ ներկայ Թուրքիան, Ամերիկայի անփոխարինելի դաշնակիցը չէ այլեւս: Եւ Ամերիկան Թուրքիոյ նախադարձակ և ծաւալապաշտ միտումներուն տեղեակ է: Մանօթ ասացուածքը կ'ըսէ.- Աշխարհակալ իշխանութիւնները իրենց մրցակից ըլլալու հակամէտ պետութիւնները կը բաժանեն, որ անոնք, ապագային, վտանգաւոր չըլլան իրենց համար: Այսօրուան կացութեան մէջ, Թուրքիոյ ապագան շատ փայլուն չէ: Թուրքիան «ներսէն և դուրսէն», ծայրայեղ իսլամականներուն, քիւրտերուն ու ինչ ըլլալը անծանօթ ուժերուն տեւական յարձակումներուն պիտի եկնարկուի:

Այդ պատճառաւ կ'ըսենք.- Ողորմութիւն՝ Թուրքիոյ հանրապետութեան: Շա՛տ ապրի նոր-միացեալ քրտական հանրապետութիւնը: Յ. 2.

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

**ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ**

**ՕՐՀՆԱԲԵՐ ԱՅԵՅԼՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻՆ**

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

**ՀԱՅ ԴՊՐՈՅԸ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԴԱՐԲՆՈՅ**

*Հանդիսապետութեամբ՝*

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Զորեքշաբթի, 24 Մայիս 2006, երեկոյեան ժամը 8:30ին, «Էմիլ Լահուտ» համալիրին մէջ, Տըպպայէ:

ՄԱՆՕԹ.- Ժողովուրդին համար փոխադրակառքեր տրամադրուած են երեկոյեան ժամը 7:30ին, հետեւեալ եկեղեցիներու թաղականութիւններուն մօտ.

- ★ Ս. Նշան Մայր եկեղեցի, Ջոնաթ Էլ Պլաթ
- ★ Ս. Սարգիս եկեղեցի, Սիս
- ★ Ս. Աստուածածին եկեղեցի, Նոր Ատուանա
- ★ Ս. Վարդանանց եկեղեցի, Թիւրօ
- ★ Ս. Ք. Մանկանց եկեղեցի, Նոր Մարաշ
- ★ Ս. Յակոբ եկեղեցի, Էշրեֆիէ
- ★ Ս. Յարութիւն եկեղեցի, Ռըմէյլ
- ★ Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի, Հայաշէն
- ★ Ս. Յարութիւն եկեղեցի, Ժունիէ
- ★ Ռաուտայի շրջան, Ժողովրդային տուններ
- ★ Ֆանարի մատուռ, Ֆանարի Ժողովրդային տուններ
- ★ Անթիլիասի շրջան, «Միմիթեան» շէնքեր
- ★ Զալֆայի շրջան, «Գարեգին Նժդեհ» ակումբին առջեւ

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ  
ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

ՊՈԼԻՍ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ՄԷՋ,  
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ 1913-ԻՆ,  
ԻՐ «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ» ՅՕԴՈՒԱԾՈՎ ԳՐՈՒՄ ԷՐ.

**«ՍԱԿԱՅՆ ՍՏՈ՛ՅԳ, ՍՏՈ՛ՅԳ Կ՛ԸՍԵՄ ՉԵԶԻ՝  
ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ԾԱՏ ՄԵԾ, ԱԻԵԼԻ ՄԵԾ՝  
ՔԱՆ ԿՐՆԱՆՔ ԵՆԹԱԴՐԵԼ»**

**ԵՒ ԻՄ ՀԱՄՈՋՈՒՄՆ Է՝  
ԱՐԵՒՍՏԵԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐԻ, ԳՐՈՂՆԵՐԻ  
ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻԾ ՈՉ ՄԷԿԻ  
ՄՕՏ ԱՅՍՊԻՍԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ,  
ԱՅՍՊԻՍԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԵՄ ՏԵՍԵԼ**

**ԵՒ ԵՍ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ Կ՛ԱՆՈՒԱՆԵԻ՝  
«ԱՆՏԵՍՈՒԱԾ ՄԱՐԳԱՐԷ»**

15/2/2005

ԵՐԵՒԱՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԸ - ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)**

15 Փետրուար 2005-ին, երջանկութիւնը ունեցանք դիտելու Երեւանի «Հ-1»ի հեռատեսիլէն սփռուած հաղորդում մը, որ կը կոչուէր՝ «ԾՆՆԴԱՎԱՅՐ», և կը կատարուէր Ռուբէն Սեւակի ծննդեան 120-ամեակի պատեհութեամբ: Եւ հաղորդման հեղինակն էր՝ Տիկ. Ճուլիա Կաժոյեանը:

Այս հաղորդումով ելոյթ ունեցաւ գրականագէտ-գրող Ալեքսանդր Թոփչեան: Նաեւ՝ իր յուշերը պատմեց Ծամիրամ Սեւակ:

Ալեքսանդր Թոփչեան, իրեն յատուկ պերճախօսութեամբ, ներկայացուց Ռուբէն Սեւակը:

Այստեղ պիտի ջանանք տալ Ալեք. Թոփչեանի ելոյթին առաջին մասէն հատուածներ:

«Որքան անելի ծանօթանում ես Ռուբէն Սեւակի կենսագրութեանը, ստեղծագործութեանը, նրա կեանքի մանրամասնութիւններին, այնքան անելի ես համոզուում, որ դեռ քիչ ես ծանօթ նրան, դեռ լաւ չգիտես այդ բանաստեղծին:

Ծարունակում ես պրպտել, նորից կարդալ, երրորդ, չորրորդ անգամ կարդալ մէկ անգամ կարդացուած բանաստեղծութիւնները, նամակները, և գնալով մի զարմանալի զգացում պատում է քեզ:

...Բաւական չափով չես ճանաչել իր բանաստեղծութիւնները. միեւնոյնն է, միշտ մի բան գաղտնի է, որքան էլ դու նոր նիւթեր գտնես, որքան էլ փորձես խորանալ տեքսթ-ի մէջ: Սա բանաստեղծին պոէզիա-յին գաղտնիքն է: Երբեք չես կարողանայ հասնել եզրի:

Այլ՝ ուրիշ հանգամանք կայ- Յանկարծ յայտնագործում ես, որ ուղղակի դժուար է հաւատալ, որ մէկ մարդու մէջ կարող է այնքան ամբողջական կարողութիւններ ներկայանալ: Ե՛ւ մարդը, և՛ բանաստեղծը, և՛ քաղաքացին, և՛ սիրահարը-ամէն ինչը, կապում է մարդու և ֆիզիքական և բարոյական էութեանը, և՛ նրա ստեղծագործութեանը, և՛ նրա շրջապատին, և՛ նրան առնչուող բոլոր հանգամանքներին:

Եւ իրապէս դժուար է հաւատալ, որ կարող է մարդը ամէն ինչի մէջ այդպէս ամբողջական և այդպէս անթերի լինել»:

Ալեքսանդր Թոփչեան իր ելոյթին վերջաւորութեան հետեւեալ գաղափարները յայտնեց. «Պոլիս լոյս տեսնող «Ազատամարտ»ի մէջ, Ռուբէն Սեւակ 1913-ին, իր «Այլասերում» յօդուածին մէջ գրում էր — «Սակայն ստոյ՛գ, ստոյ՛գ կ'ըսեմ ձեզի՛ վտանգը մեծ է, չա՛տ մեծ, անելի մեծ քան կրնանք ենթադրել»:

Եւ իմ համոզումն է՝ Արեւմտեան մտաւորականներից, գրողներից և կուսակցական գործիչներից ոչ մէկի մօտ այսպիսի նախատեսութիւն, այսպիսի գրականութիւն չեմ տեսել:

Եւ ես Ռուբէն Սեւակը կ'անուանեի՝ «ԱՆՅԵՍՈՒԱԾ ՄԱՐԳԱՐԷ»:

Երեւան, 15/2/2005 ԱԼԵՋՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ  
Կը փափաքեմք, որ յառաջիկային, «Նայիրի»ի մէջ հրատարակուի Ալեքսանդր Թոփչեանի այս բացառիկ ելոյթը, իր ամբողջութեամբ:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԳՐՈՒԹՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ**

20-րդ դարու սկիզբը, Եւրոպա ուսանող հայ երիտասարդները, նոր դարաշրջան մը բացին Հայ գրականութեան մէջ:

Այս ուսանող մտաւորականներուն առաջնորդներն էին՝ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ և Ռուբէն Սեւակ:

Իրենց գրութիւններուն տեսակէտով՝ Դանիէլ Վարուժան պերճիմաստ արտայայտութիւններով և բառերու հարստութեամբ ամէնէն ազնուականն էր: Սիամանթօն՝ հայրենասիրական պոռթկումներով՝ ամէնէն ասպետականը: Բայց Ռուբէն Սեւակ, իբր Հայ և իբր Մարդ, ամէնէն զգայուն և իրապաշտ ընկերակականն է:

Ռուբէն Սեւակ միակն է, այդ շրջանի բանաստեղծներէն, որ Եւրոպա 6 տարի գիտութիւն ուսանած և բժիշկ եղած է: «Բանաստեղծ և բժիշկ Ռուբէն Սեւակ»:

Այս միաւորումը Ռուբէն Սեւակի ամէնէն յատկանշական կողմն է: Այս միաւորումով է որ Ռուբէն Սեւակ, բոլորովին տարբեր շունչ մը բերաւ Եւրոպայէն, իր գրութիւններով և իր գաղափարներով:

Այս է թերեւս պատճառը, կարգ մը քննադատ-մտաւորականներու բռնած անիրաւ կեցուածքին, Ռուբէն Սեւակի հանդէպ: Իրենց գիւղին մէջ ինքնաշխատութեամբ զարգացած գրողները, բնական է, պիտի չկրնային հասկնալ և հանդուրժել բժիշկ-բանաստեղծ Ռուբէն Սեւակին:

Ռուբէն Սեւակի գրութիւններուն մէջ, բանաստեղծը և գիտութեան մարդը քով-քովի են: Այսինքն՝ զգացումը և սրամաբանութիւնը. շատ պարզ, շատ հասկընալի, ժողովրդական լեզուով գրուած իր բանաստեղծութիւններէն ամէն մէկը իրական կեանքի տպաւորութիւններ են: Առանց բառերու մթերքի, առանց սյուրհոտախօսութեան, առանց շինծու զգացականութեան:

Ռուբէն Սեւակ իբր Մարդ և իբր Հայ, իր ծնունդին, իր անկեղծ խառնուածքին պատճառաւ չէր կրնար մարդկային և ազգային ցաւերէն հեռու մնալ:

Տառապեցաւ՝ մարդկային անհաւասարութեան և անարդարութեան ցաւերով:

Իբր բանաստեղծ և գիտութեան մարդ՝ տեսաւ, թէ ուր էր ցաւին արմատը, և անոր համար կրցաւ գրել Հայ գրականութեան ընկերային հարցերու ամէնէն խիզախ և ամէնէն տպաւորիչ բանաստեղծութիւնները: Եւ Հայրենիքէն հեռու, անկէ եկած արիւնով լեցուն լուրերու ազդեցութեան տակ, իր պոռթկումը և ցաւը թափեց «Կարմիր Գիրք»-ի բանաստեղծութիւններուն մէջ:

Այս հայրենասիրական բանաստեղծութիւնները, իրենց պարզութեան մէջ, պիտի մնան Հայ դիւցազներգութեան ամէնէն հարազատ և ամէնէն զգայուն էջերը:

Ռուբէն Սեւակի գրականութեան սկզբունքը՝ «Միայն ժողովուրդին օգտին համար գրելու» գաղափարն էր:

«Բժիշկին Գիրքէն փրցուած էջեր» ու շարքէն «Այլասերում» ի մէջ տեսէք, թէ Ռուբէն Սեւակ ինչպէս կը հարուածէ այն գրողները, որոնք ազգին ցաւերուն կոնակ դարձուցած էին: «Չէ՞ք տեսներ արդէն թէ ինչպէս, շատ մը գրագէտներ, լիրբ քաջութիւնը ունին յայտարարելու թէ՛ իրենք ժողովուրդին համար չէ՛ որ կը գրեն: ... Որբուկի մը պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ, բարբառի մըն է ծարաւ. Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մա՛րդ չհասկնայ...:

Հեռո՛ւ մենէ՛ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք: Բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ, քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցընենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք: Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Չուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը... Մեզի նոր Ռսկեդար մը պէտք է, նոր Ռսկեդա՛ր մը:

Այլասերո՞ւմ, ո՛չ, Վերածնո՛ւնդ...»:

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ»

«Ռուբէն Սեւակ եւ Փրցուելիք ուղեղներ»  
1985

Յ. Չ.

\*\*\*

Ինչպէս որ «Նայիրի» ի նախորդ թիւին մէջ նշած էինք՝ Ռուբէն Սեւակի 1910-ին Պոլիս հրատարակուած «Կարմիր Գիրքը» իր ողջութեանը լոյս տեսած միակ մատեանն է:

Եւ մենք կը հաւատանք, որ այս «Կարմիր Գիրքը» հայկական ցաւերը, հայկական իրականութիւնները և նաեւ «Կեանք» ըսուած առեղծուածը՝ ամենէն խոր և իրատեսութեամբ մեկնաբանող հրատարակութիւնն է: Եւ այս գիրքը, մինչեւ այսօր, իր այժմեականութիւնը չէ կորսնցուցած:

Այստեղ պիտի մէջբերենք «Կարմիր Գիրքը»էն հատուածներ, ապացուցանելու համար որ Ռուբէն Սեւակ, հարիւր տարի առաջ, ի՞նչ մեծ իրատեսութեամբ մեկնաբանած էր «Հայկական Ողբերգութիւնը» և «Կեանք ըսուած անվերջ պայքարը՝ դէպի մահ»:

Չ Ա Ր Դ Ի Խ Ե Ն Թ Ր

## ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

Բոլոր խելացի մարդիկներն ահա,  
 Ահա խելօքներն այս ապուշ կեանքին  
 Ու նուիրումով մը աստուածային՝  
 Կիրակին անգամ մը բերանով ծոմ  
 Տիրամօր առջեւ կ'սպառէին մոմ,  
 Ծաբաթ մը ամբողջ անվախ, անհամար  
 Ծնալու, ստելու, գողնալու համար:

\*\*

«Ոչ Աստուած, ոչ ափ մը հայրենի հող...  
 Եւ որ կը մուրան պատառիկ մը հաց՝  
 Հեռուէն պժգանքով իրենց կարկարուած...  
 Եւ որոնք Մարդուն մէջը սրբազան  
 Ոչինչ գտան այլ վայրագ մի գազան...»:

\*\*

«Ձե՛զի՛ որ քերծուած մեր մորթերէն ձիգ  
 Հարսնիքի, մեղքի վրաններ կառուցիք...  
 Ու ձեզ եւրոպեան դիք որ շնագին  
 Սակարկեցիք մեր արեան լուսեան գին»:

\*\*

Կ'ըսէիր, հայրիկ, «Դրախտ երթալու  
 Կարճագոյն ճամբան ըլլալն է հըլու,  
 Հետեւող խաչի սուրբ արահետին»  
 – Հայր, է՛ն կարճ ճամբան խանջերն է Զուրդին,  
 Խանջերն է Զուրդին»:

\*\*

Բայց դուն բարձր ես, վերն, քու խիղճդ մաքուր,  
 Ու չես հաճիր աչքըդ անկարեկիր  
 Ուղղել մարդկութեան գոր յերկիր թուքեր...  
 .....Խեղճ յիմար: Որո՞ւ կը խօսիմ- փրփրա՞ծ:  
 Չէ՞ որ դուն վաղուց մեռեր ես, Աստուած:

\*\*

– Վարդե՛րը մեռան,  
 Վարդե՛րը մեռան,  
 Իրենց բիւր-բուրան,  
 Յօղիկին վըրան  
 Վարդե՛րը մեռան,  
 Վարդե՛րը մեռան:

«Արիւնոտ, մանրիկ,  
 Ոտներըս բոպիկ,  
 Դիակներու վըրան  
 Դողդո՛ջ կ'երերան:  
 Վարդե՛րը մեռան,  
 Վարդե՛րը մեռան:

ՈՌԻՔԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ... (Ծար. էջ 2-էն)

Ո՞ր Օրէնքէն, ո՞ր Աստուծմէն, ո՞ր մուկ  
Արդարութիւնէն, ո՞ր գութէն անգութ,  
Ո՞ր մէկ ոճիրիդ քաւութեան համար՝  
Կարմիր շղթայիդ օղերուն անհամար...:

\*\*

Ու սո՛ւրի մէջէն, ու բոցի մէջէն,  
Ու արեան մէջէն, մահը կ'ընդմիջեն...  
Ձեռքերդ՝ վեր բռնած մանուկ մը վայրի  
Չայնով լալով «Ա՛գգը պիտի ապրի»:

\*\*

Մ Ա Ր Դ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Անցեալ տարի էր: Յոգնած ապաքէն:  
Ծատ քաղաքակիրթ այս Արեւմուտքէն՝  
Ուր խիղճը բառ մէ, մարդը՝ մեքենայ  
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընայ,  
Սէրը հաշիւ մ'է. Կրօնքը՝ դրամ.  
Երջանկութիւնը՝ ծանծրալի մի տռամ,  
Մահն անմտութիւն. կեանքն անհաշտ մի կռիւ:  
Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխոխ  
Որ ամէն րոպէն իր մանրակրկիտ  
Մուրճի հարուածով կը զարնէ մտքիդ...  
Այսպէ՛ս, հել ի հե՛ւ, յոգնած, յուսահատ,  
Անմի՛տ այս վազքէն անդուլ անընդհատ,  
Կարօտն ունեցայ հին հին դարերու.  
Եւ հիւանդ հոգիս տարի ես հեռու:  
Հեռո՛ւ, խնկաւէ՛տ, լո՛ւռ, մշտնջե՛նցի  
Արեւելքի իմ գիւղըս հայրենի...:

\*\*

Եկեղեցւոյն մէջ մտայ լռելեայն:  
Ծէնքը փոքրիկ էր, բայց բաւական լա՛յն՝  
Աստուածն ու դարերը ամփոփելու...:  
Զար քարի վրայ, ծներ էր հըլո՛ւ,  
Առանց արուեստի, առանց մեծ ոճի,  
Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ'ածի.  
Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,  
Հոն, հին դարերու բոյրն ունէին գաղջ...:  
Ու առաստաղի աղքատ ջահերէն  
Կախուած՝ ժամանակը մեռելօրէն  
Կը ննջէր անշարժ, դարե՛ր քնեած.  
Ջշոցին ձայնէն երբեմըն շոյուած...  
Հոն ո՛չ հելք, ո՛չ վազք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան.  
Անսահմա՛ն, անխոռ՛վ, անծալ, յաւիտեա՛ն  
Չո՞րս պատերու մէջ՝ Անհո՛ւն մը խորին,  
Ուր ծեր գեղջուկներ մեռնի՛լ կը սովրին...:

\*\*

Պատարագէն վերջ, քով քովի անծայն,  
 Երկու թափօրներ իրար քսուեցան:  
 Ան չէր դասական հանդիպումը հին՝  
 Կնունքի թափօրն՝ մահուան թափօրին—  
 Մէկ կողմ ծնունդ, խինդ. միւս կողմ մա՛հ ու լալ.  
 Ու եկեղեցին կ'օրհնէ երկուքն ալ...:  
 Ո՛չ: Երկու թափօր, երկուքն ալ ժպտուն.  
 Մէկը նորածին որդին մեծատուն.  
 Միւսը աղքատի ծնունդը անտուն:  
 Մէկը բեհեզով քնած, միւսն արթուն.  
 Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,  
 Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն.  
 Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,  
 Երկրորդին ճակտին փուշի սել պսակ.  
 Մէկը Տէ՛ր արդէն, միւսը Գրա՛ստ:  
 Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...:

\*\*

Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ'է խորին  
 Որ յղփացած, ճո՛խ մեծերը երկրին  
 Իրենց արգանդին մէջ կը հարուածէ:  
 Հաւասարութեան խո՛ւլ պէտք մ'է գուցէ  
 Որ վիժածընունդ սերմերը Մեծին  
 Իր որովայնին իսկ գոգը հիւծին...:

\*\*

Չե՛մ համարձակիր վերցնել մէկդի  
 Կարմիր-վարդագոյրն որ Օրէնք կ'ըսուի,  
 Դիտելու ըմբոստ այն կեանքերն հսկայ,  
 Որ բանտերու մէջ, կառափնատի վրայ,  
 Կախաղաններով մեռան անհամար,  
 «Կեանքի Իրաւունք»... պողալնուն համար:

\*\*

Երկուքն ալ երկա՛ր, երկա՛ր դիտեցի:  
 Այլեւս բնաւ մի խօսիք ինծի  
 Արժանիքին վրայ, ու տարբերութեան...  
 Ու ազնուական զարմին վրայ արեան:  
 Ահա՛ երկուքն ալ, անկերպ բզէզներ,  
 Ծիւղ մը իսկ զիրենք պիտի մեռցներ,  
 Կ'ուզեն անուն տալ: Ի՛նչ պէտք անունի...  
 Իւրաքանչիւրն ալ իր անունն ունի,  
 Մին Ոյժն է անգութ, միւսն Ստրկութիւն:  
 Ոյժ չունի կ'ըսէք խլէզն անարիւն.  
 Ի՛նչ պէտք արիւնի.— անյագ բորեցի՛  
 Հացի մը փոխան, կարմիր, ծիրանի,  
 Ան պիտի ծըծէ Արիւնը միւսին,  
 Ու պիտի մխէ ժանիքն իր միսին.  
 – Օրէնքը՝ իրեն անքոյթ օթեւան:  
 Ողջունեցէք - զայն, Իշխանն է վաղուան...:



\*\*

Ծնրադրած դողդոջ, աչքերս ծեռքիս,  
 Կուրծքիս տակ զսպել կ'ուզէի հոգիս:  
 Հազար նկարներ կ'անցնէին մտքէս:  
 Արեան շողոյն պէս, նոճիներու մէջ  
 Բիւր կախաղաններ անգութ մեծերու...  
 Ու հրդեհներու մէջ հեռուէ հեռու,  
 Ստրուկներու կո՛ւռ, բարբարո՛ս գունդեր.  
 Որ տաճար, Աստուած, կո՛ւռք, իշխա՛ն ու տէ՛ր  
 Տապալելով վար, կ'երթային հեռո՛ւ  
 Հաւասարութեան սե՛րմը ցանելու,  
 Ու լա՛յն բաշխելու Արդարութի՛ւն, Հաց...:  
 Այտիս վրայ հրաշէկ արցունք մը դողաց.  
 Աչքերըս բացի, տեսիլք էր միայն.  
 Ամէնքն ալ գացա՛ծ, ժամն էր լռելեայն...:  
 Ու ես ալ գացի իմ սուգիս դարման՝  
 Հաւասարութեան դաշտը - գերեզման...:

\*\*

### ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Եկեղեցիէն մինչեւ գերեզման  
 Տանող ճամբուն վրայ, քարի մը վրան  
 Նստեցայ տրտում, ու լո՛ւտ դիտեցի  
 – Հոգւոյս ծարաւովը արեւելքի –  
 Հեռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,  
 Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք լռելեա՛յն:

\*\*

Բա՛ն մը կար կեանքէն անջատ, կեանքէն վեր,  
 Բան մը որ կեանքէն բնա՛ւ չէր ազդուեր,  
 Որ կը նմանէր երէկին, վաղուան...  
 Այդ՝ Մահուա՛ն իսկ մէջ ժխտումն էր մահուան...:

\*\*

– Ինչո՞ւ շտապել, չէ՞ որ ամէնքս ալ  
 Ոմանք հեւ ի հեւ, ու ոմանք դանդաղ  
 Անվրիպօրէն պիտի հասնինք մահ...  
 Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւէ.  
 Մէկը հագի՛ւ թէ միւսին չափ տեւէ...:  
 Ծառաչող ծովուն ալիքներուն վէս,  
 Կը ծնինք ամէնքս, կը բարձրանանք վէս,  
 Բայց հագի՛ւ, ատեն մը կայ փրփրելո՛ւ  
 Պէտք է կորսուիլ. կորսուի՛նք հըլո՛ւ...:

\*\*

### ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

... Ինկայ ու մտիկ ըրի սգահար  
 Չայնի մ'որ քարին ներքեւ կը դողար...  
 Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս քեզ եղբա՛յր, քեզ քո՛յր.  
 Ե՛ս տիեզերքին հսկայ ա՛ջքը կո՛յր.  
 Ե՛ս սկիզբ և վերջ, երա՛խ ու արգանդ.  
 Ե՛ս վի՛հ անյատակ ու ծոց արգաւանդ.  
 Ե՛ս ա՛յն եմ որ քեզ ծընաւ, նաեւ ա՛յն  
 Ջոր պիտի ծընիս: Ե՛ս ծայն լռելեայն:  
 Ե՛ս օրհնութիւնն եմ, բարիքը վերջին:  
 Ե՛ս այն եմ որմէ ամէնք կը փախչին  
 Եւ որմէ փախչիլ չի կա՛յ: Հաւասար  
 Ներո՛ւմն եմ անոր որ ինձ կը յուսար,  
 Անո՛ր որ հեզնեց առանց խղճի:  
 Ամէնո՛ւն ալ վրայ իմ մարգըս կ'աճի...:  
 Մանգաղս ո՞վ պիտի համբուրէր անա՛հ...  
 – Ինձ ԱՍՏՈՒԱԾ ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ...:  
 «Կարմիր Գիրքը» 1910 – ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ

\*\*\*

Վերի կարճ յապաւումներով ջանացինք ներկայացնել Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրքը»ին բովանդակութիւնը:

Եւ այժմ կ'ուզենք այս գիրքի մասին անվերապահօրէն և սրտաբաց մեր գաղափարը յայտնել ըսելով... Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրքը» հայ գրականութեան մէջ, մեր մինչեւ հիմա կարդացած մատեաններէն ամէնէն իրատեսականը և իր պարզութեամբ ամէնէն խորիմաստն է:

Եւ հայկականութեան ու «Կեանք»ը վերլուծելու մարզի մէջ, մեզի համար, «Կարմիր Գիրքը» իսկական ուղեցոյց մը եղած է:

Բայց դժբախտաբար, 1910-ին այս գիրքը, շատ մը հայ մտաւորականներ չկրցան գնահատել և մանաւանդ՝ չկրցան հասկնալ:

Որովհետեւ անոնք գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը կը նկատէին՝ երազային թռիչք ու բառերու ճոխութիւն:

Այստեղ պիտի ներկայացնենք, այն տարիներուն մեծ կարծուած գրագետներէն՝ Արշակ Չօպանեանի կողմէ «Կարմիր Գիրքը»ին մասին Ռ. Սեւակին ուղղած, 1910 թուակիր նամակէն հատուած մը:

Ռուբէն Սեւակ՝ Արշակ Չօպանեանին ծանօթացած էր 1907-ին Լոզանի մէջ: Այստեղ կը հրատարակենք նաեւ պատմական նկար մը, ուր կ'երեւին Ռուբէն, Արշակ Չօպանեան և Կոմիտաս Վարդապետ՝ նկարուած 1907-ին Լոզանի մէջ»:

Ահա, Արշակ Չօպանեանէն Ռուբէն Սեւակին ուղղուած տխրահուչակ նամակէն տողեր:

*«Կրակ ունիք, և ճիրք, բայց դեռ պատրաստ չէք. շատ կարդալու, ոճերնիդ յղկելու, գրական զարգացումնիդ կրթելու պէտք ունիք: Մի՛ աճապարէք. շատ գրէք. ատեն շատ ունիք. երիտասարդ էք. օր մը անշուշտ աւելի կատարեալ պիտի գրէք»:*

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

\*\*\*

Մենք կը կարծենք, որ Արշակ Չօպանեանի այս քննադատական նամակը շատ ժխտական ազդեցութիւն գործած է Ռուբէն Սեւակի վրայ:

Որովհետեւ 1910-էն մինչեւ 1915 Ռուբէն Սեւակ, իր ապրած շրջանին, ուրիշ գիրք չէ հրատարակած:

Հակառակ որ Ռուբէն Սեւակ ուներ, անտիպներ՝ արձակ ու քերթուած (→ յ. 4)

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՐԻՆՆԵՐԸ**  
**24 ԱՊՐԻԼ 1915 - ԻՆ՝**  
**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**  
**91 - ԲԳ ՏԱՐԵԼ ԻՅԻՆ**  
**ՊԱՏԵՀՈՒԹԵԱՄԲ**  
**ԱՆԷՄՔԱԳԻՐ - ԹԻԻ 4**

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԿԻՐԱՐԿԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ**  
**ԻՐԵՆՑ ՆԵՐԿԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՐՑԸ ԵՂՈՂ**  
**ՔՐՏԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՀԱՆԴԵՊ**

Անհերքելի իրականություն մըն է, որ 1915-ի հայկական ցեղասպանության մէջ թուրքերը՝ քիրտերուն դահիճի պարտականություն կատարել տուին:

Այսինքն՝ 1915-ի հայկական ցեղասպանության որոշումը տուողը՝ Օսմանեան պետության մէջ իշխանութիւնը ձեռք անցուցած «Իթթիհատ Վէ Թերաքքի» կուսակցության կառավարության ներքին գործոց նախարար Թալաթ Փաշան էր:

Բայց Անաթոլիոյ քաղաքներուն և գիւղաքաղաքներուն մէջ, աքսորի համար ծամբայ հանուած խեղճ հայերու կարաւաններուն վրայ յարձակելով զանոնք սպաննողները՝ մեծամասնութեամբ քիրտեր էին:

1915-ին Անաթոլիոյ հողերուն վրայ սպաննուած հայերուն հարստութիւնները սեփականացնողները, մեծամասնութեամբ քիրտեր էին:

Արեւմտեան Հայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ նահանգներուն մէջ, 1915-ին սպաննուած հայերուն հողերուն վրայ տեղաւորուողները՝ ամբողջութեամբ քիրտեր էին:

Այս իրականութիւնները գիտցող այսօրուան թրքական պետության ղեկավարները, շատ վտանգաւոր ըլլալ սկսող քրտական հարցին դէմ, հայկական «քարտ»ը խաղալ կը ջանան:

Եւ թուրքերը, ատենէ մը ի վեր, հայերուն դէմ շատ բարեացակամ քաղաքականութիւն մը վարել սկսան:

Թուրքերը, վերջին շրջաններուն, Ափիւզքի հայերուն իրենց հայրենիքը եղող Արեւմտեան Անաթոլիա այցելութիւնը՝ զանազան ձեւերով քաջալերել սկսան:

Հազարումէկ եկեղեցիներու քաղաք, հայոց պատմական մայրաքաղաքը եղող Անին՝ թուրքերը վերջերս [իբր թէ] նորոգել սկսան:

Վանայ Լիճին վրայ գտնուող Ախթամար կղզիին մէջի հայկական եկեղեցին պոլսահայ ծարտարապետները վերանորոգել սկսան:

Թուրքիոյ վարչապետ TAYYIP ERDOGAN Հայաստանի նախագահ Քոչարեանին պաշտօնական նամակ մը կ'ուղարկէ և համաձայնելու համար բանակցութիւններու սկսիլ կ'առաջարկէ:

Թուրքերուն, հայոց դէմ վերջին «բարեկամական» արտայայտութիւնը՝ 2006-ի Euro-vision-ի երգի մրցումին թուրքերու կողմէ Հայաստանը ներկայացնող հայ երգիչ Անտրէյին 10 կէտ տուած ըլլալին է:

Թուրքերուն հայոց դէմ գործադրած այս «բարեկամական» քաղաքականութեան բուն պատճառը՝ հայերը քիրտերուն դէմ հանելու հեռանկարն է:

պատճառը ուսյորը քուրտսորուս դէս ուսսլու ոսուսպարս է:

Այսինքն՝ Արեւելեան Անաթոլիոյ հայկական հողերուն վրայ քրտական պետութիւն մը ստեղծել ուզող քիւրտերուն դէմ հայերը գրգռել:

Եւ թուրք-քրտական պայքարը՝ քիւրտ-հայկական պայքարի վերածել:

Թուրքերուն այս նենգամիտ քաղաքականութիւնը կը յաջողի՞ արդեօք: Չենք կրնար գիտնալ:

Ճատ բնական է որ թուրքերը, քիւրտերուն Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրտական պետութիւն մը ստեղծելուն արգելք ըլլալու համար, բոլոր միջոցներու պիտի դիմեն:

Բայց, ի վերջոյ, քիւրտերը յաղթական պիտի ելլեն:

Որովհետեւ Արեւմտեան Հայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ հողերուն վրայ այսօր ապրող ժողովուրդին մեծամասնութիւնը քիւրտերն են:

Եւ այսօրուան Աշխարհի քաղաքական իրավիճակներուն համեմատ՝ երկրի մը տէրը՝ այդ երկրին հողերուն վրայ ապրող ժողովուրդն է:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ Արեւելեան Անաթոլիոյ մէջ ապրող քիւրտերը, ի վերջոյ այդտեղ քրտական պետութիւն մը պիտի հիմնեն...

...Ո՛վ ցեղասպան թուրքեր, եթէ 1915-ին հայերը ցեղասպանութեան չենթարկէիք՝ հայոց շնորհիւ արեւելեան Անաթոլիոյ մէջ Սսմանեան պետութիւնը կրնար գոյատեւել:

Բայց դուք Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ ձեր կատարած ցեղասպանութեան պատիժը պիտի կրէք:


Այդ պատճառաւ կ'ըսենք. — *Ողորմեցէ՛ք թուրքիոյ Հանրապետութեան: Ճա՛տ ապրի նոր Միացեալ Քրտական Պետութիւնը:*

Յ. Չ.

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ... (Ծար. էջ 3-էն)**

որոնք պատրաստ էին տպագրուելու:

Այս մասին կը վկայեն Ռուբէն Սեւակի բարեկամները ըսելով, որ անոր տան մէջ տեսած են անտիպ գրութիւններ, հրատարակութեան պատրաստ վիճակի մէջ, որոնց անունները պիտի ըլլային «Զառուր» և «Վերջին հայերը»: Եւ մենք կը հաւատանք որ Ա. Չօպանեանի ըննադատութեան ստուերը արգելք եղած է Ռուբէն Սեւակին այս գիրքերու հրատարակութեան:



*Չախէն աջ՝ Ռուբէն Սեւակ, Արշակ Չօպանեան և Կոմիտաս Ժընեւի մէջ:*

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
**24 NİSAN 1915 - DE**  
**TÜRKLERİN GERÇEKLESTİRDİKLERİ**  
**ERMENİ SOYKIRIMININ**  
**91 YILDÖNÜMÜ DOLAYISI İLE**  
**LÂNETNAME N. 4**

**TÜRKLERİN BUGÜN EN BÜYÜK SORUNU OLAN KÜRT PROBLEMİNE KARSİ GÜTTÜKLERİ YENİ TILKI SİYASETİ.**

INKAR EDİLMEZ BİR GERÇEKTİR Kİ 1915-ERMENİ SOYKIRIMINDA TÜRKLER KÜRTLERE CELLAT VAZİFESİNİ GÖRDÜRDÜLER.

YANI 1915 ERMENİ SOYKIRIMININ KARARINI VEREN, OSMANLI DEVLETİNDE İKTİDARDA OLAN İTTİHAT VE TERAKKİ PARTİSİ HÜKÜMETİNİN DAHİLİYE VEKİLİ TÂLAT PASA İDİ.

FAKAT ANATOLYA SEHİR VE KASABALARINDA VE SÜRGÜNE GİTMEK İÇİN YOLA ÇIKARILAN ZAVALLI ERMENİ KAFİLELERİNİN ÜZERİNE HÜCUM EDEREK ERMENİLERİ ÖLDÜRENLER, BÜYÜK ÇOGUNLUKLA KÜRTLER İDİ.

ANATOLYA TOPRAKLARINDA 1915-DE ÖLDÜRÜLEN ERMENİLERİN MALLARINA, MÜLKLERİNE EL KOYANLAR BÜYÜK ÇOGUNLUKLA KÜRTLER İDİ.

BATI ERMENİSTAN DENİLEN DOĞU ANATOLYA İLLERİNDE 1915 DE ÖLDÜRÜLEN ERMENİLERİN YERİNE YERLESENLER TAMAMEN KÜRTLER İDİ.

BU GERÇEĞİ BİLEN BUGÜNKÜ TÜRK DEVLETİNİN İDARECİLERİ, ÇOK TEHLİKELİ OLMİYA BASLIYAN KÜRTLERE KARSİ ERMENİ KOZUNU OYNAMAYA ÇALISIYOR.

VE BİR MÜDDETEN BERİ TÜRKLER ERMENİLERE KARSİ ÇOK DOSTÇA DENİLEBİLEN BİR SİYASET UYGULAMAYA BAŞLADILAR.

DIYASPORA ERMENİLERİNİN KENDİ ÖZ VATANLARI OLAN DOĞU ANATOLYAYI ZİYARET ETMELERİNİ TÜRKLER MUHTELİF ŞEKİLDE TESVİK EDİYORLAR.

BİNBİR KİLİSE SEHİRİ, ERMENİLERİN TARİHİ BASKENTİ ANI HARABELERİNİ TÜRKLER (SOZUM ONA) OHARİYORLAR.

VAN GÖLÜNDEKİ AHTAMAR ADASINDAKİ ERMENİ KİLİSESİNİ, İSTANBULLU ERMENİ MİMARLARI RESTORE ETMİYE BAŞLADILAR.

TÜRKİYE BASBAKANI TAYYİP ERDOĞAN ERMENİSTAN BASKANI KOÇARYANA RESMİ BİR MEKTUB GÖNDEREREK ANLAŞMA GÖRÜŞMELERİ YAPMAYI ÖNERİYOR.

BİR MÜDDETEN BERİ DE TÜRK VE ERMENİ HÜKÜMETLERİ ARASINDA GİZLİ GÖRÜŞMELER YAPILDIĞI SÖYLENTİLERİ DOLASIYOR.

TÜRKLERİN ERMENİLERE KARSİ SON DOSTLUK GÖSTERİSİDE 2006 EUROVISION SARKI YARISMASINDA ERMENİSTANI TEMSİL EDEN ERMENİ SARKICI ANDRE-YE TÜRKLERİN ON PUAN VERMELERİ.

TÜRKLERİN, ERMENİLERE KARSİ UYGULADIKLARI BU DOSTLUK POLİTİKASININ ASIL SEBEBİ, KÜRTLERE KARSİ ERMENİLERİ DEVREYE SOKMAK.

YANI DOĞU ANATOLYA ERMENİ TOPRAKLARINDA BİR KÜRDİSTAN DEVLETİ KURMAK İSTİYEN KÜRTLERE KARSİ ERMENİLERİ KISKIRTMAK.

VE TÜRK-KÜRT MÜCADELESINI, KÜRT-ERMENİ MÜCADELESİNE ÇEVİRMEK. TÜRKLERİN BU SINSİ SİYASETİ YÜRÜR MÜ ACABA. ?

BİLEMEYİZ, TABİATIIYLE TÜRKLER, KÜRTLERİN DOĞU ANATOLYADA BİR KÜRT DEVLETİ KURMALARINA ENGEL OLMAK İÇİN HER ÇAREYE BASVURACAKLAR.

FAKAT EN SONUNDA KÜRTLER GALİP GELECEKTİR.

ÇÜNKÜ BATI ERMENİSTAN DENİLEN DOĞU ANATOLYA TOPRAKLARINDA YASİYAN HALKIN BUGÜN BÜYÜK ÇOGUNLUGÜ KÜRTLER.

VE BUGÜNKÜ DÜNYA GERÇEKLERİNE GÖRE, BİR MEMLEKETİN SAHİBİ, O MEMLEKETTE YASİYAN HALKTIR.

ONUN İÇİN DİYORUZ Kİ DOĞU ANATOLYADA YASİYAN KÜRTLER, EN SONUNDA ORDA BİR KÜRT DEVLETİ RURACAKLARDIR.

EY SOYKIRIMCI TÜRKLER, EĞER 1915-DE ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATMASAYDINIZ, DOĞU ANATOLYADA ERMENİLER SAYESİNDE OSMANLI DEVLETİ DEVAM EDEBİLİRDİ.

FAKAT SİZ ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATTINIZ. VE BU SUÇUNUZUN CEZASINI ÇEKECEKSİNİZ.

ONUN İÇİN DİYORUZ Kİ- RAHMET OLSUN TÜRKİYE CUMHURİYETİNE. YASASIN YENİ BİRLİK KÜRT DEVLETİ.

**Յ. Չ.**

**ԱՆՆԱՒԱՏԱԿԻ ԹՈՒԵԼՈՒ ԶԱՓ... ԻՐԱՊ... (Շար. էջ 1-էն)**

տնօրէն, Ակադեմիայի նախկին նախագահ Ֆ. Սարգսեանի դուստր՝ Թամար Սարգսեանին, իսկ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի տրամադրած աւելի քան 128 հազար ԱՄՆ տոլարի արժողութեան սարքաւորումները պիտի վերադարձուին Կիւլպէնկեան Հիմնարկի, և որուն հաշուեկշռային արժէքը կը կազմէ ընդամենը 7,5 հազար ԱՄՆ տոլար...

Ի՞նչ կատարուած է մինչեւ վերջերս լրիւ ծանրաքեռնուածութեամբ աշխատող այդ թանկարժէք սարքաւորումներու հետ՝ անյայտ է ու անբացատրելի:

Լուրջ կասկածներ կան, որ սկսած են խախտուիլ սահմանուած օրէնքները նաեւ հիւանդանոցներուն մէջ, առողջապահական այլ հիմնարկներու մէջ, ժողովուրդի համար կենսական նշանակութիւն ունեցող դեղորայքի և սննդամթերքի ստուգման կեդրոնի մէջ և այլն, որոնց սարքաւորումները ձեռք բերուած են Կիւլպէնկեան Հիմնարկի նիւթական միջոցներով: Որո՞շ հիւանդանոցներու մէջ նոյնիսկ այդ սարքաւորումները սեփականաշնորհուած են:

Մեր մտահոգութիւններու մասին քանի մը անգամ տեղեակ պահած ենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն: Յոյսով ենք, որ վերահսկողական մարմինները անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկեն և կը շարունակուի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի Յիսնամեայ քարեգործական օգնութիւնը Հայաստանի Հանրապետութեան կրթական, գիտական, առողջապահական հիմնարկներուն՝ ի քարօրութիւն հայ ժողովուրդի՝

**ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ԵԿԱԻԵԱՆ**

**Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական Բաժանմունքի Տնօրէն**

\*\*

Արշակ Չօպանեանի կողմէ Ռ. Սելակին գրուած այս տխրահոչակ նամակէն ի վեր գրեթէ դար մը անցած է: Եւ այսօր ո՞վ կը ճանչնայ Արշակ Չօպանեանը՝ քանի մը Ռամկավարներէ և մտաւորականներէ ուրիշ:

Բայց իսկական հայրենասէրները լաւ գիտեն Արշակ Չօպանեանին ո՞վ ըլլալը: Ան է որ, մահաւանդ 1918-թ.էն յետոյ, իր արեւմտեան սպետութեանց կարգ մը երեւելիներուն հետ (մահաւանդ՝ Ֆրանսացի) ունեցած մտերիմ կապերուն վրայ յոյս դնելով, հայ ժողովուրդին ապագան Նախ. Ուիլսոնի սպարաճալից դաշնագրին (Սելրի) կապեց: Որուն արդիւնքը եղաւ «Մեծ Յուսախաբութիւն», և կորուստը Արեւմտեան Հայաստանի մեծ մասին:

# ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ - ԵՐԿՈՒ ԿԵՑՈՒԱԾՔ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ 1905-ԷՆ ՄԻՆՉԵՒԻ 1914  
ԵՒՐՈՊԱ ԱՊՐԵՑԱԻ  
ԵՒ 1914-ԻՆ ՊՈԼԻՍ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ-  
1915-ԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ

ԱՐԾԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ 1895-ԷՆ ՄԻՆՉԵՒԻ ԻՐ  
ՄԱՀԱՆԱԼԸ [1954-թ.] ԵՒՐՈՊԱ ԱՊՐԵՑԱԻ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒՐՈՊԱ ԱՊՐԵԼԷ 5 ՏԱՐԻՆԵՐ  
ՅԵՏՈՅ, ՀԱՍԿՅԱԾ ԷՐ ԱՐԴԷՆ ԵՒՐՈՊԱՅԻՆԵՐՈՒՆ  
ԻՆՉ ԸԼԼԱԼԸ, ԵՒ 1910-ԻՆ, ԻՐ  
«ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔ»ԻՆ ՄԷՋ, ՍԱՊԷՍ ԳՐԱԾ ԷՐ՝  
«ՈՒ ՋԵՋ ԵՒՐՈՊԵԱՆ ԴԻՔ, ՈՐ ՇՆԱԳԻՆ  
ՄԱԿԱՐԿԵՑԻՔ ՄԵՐ ԱՐԵԱՆ ԼՌՈՒԹԵԱՆ ԳԻՆ»:

ՄԻՆՉԴԵՌ ԱՐԾԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ ԵՒՐՈՊԱ 35 ՏԱՐԻ  
ԱՊՐԵԼԷ ՅԵՏՈՅ, ԴԵՌ ՉԷՐ ՀԱՍԿՅԱԾ  
ԵՒՐՈՊԱՅԻՆԵՐՈՒՆ ԻՆՉ ԸԼԼԱԼԸ, ԵՒ 10-8-1920-  
ԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ՍԵՒՐ-Ի ԴԱՇՆԱԳՐՈՎ՝  
ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՅՈՅՍ  
ԴՐԱԾ ԷՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

\*

Միամիտ և անհեռատես Արշակ Չօպանեան, ինչպէս որ չէր հասկցած Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրք»-ին արժէքը, նոյնպէս ալ չէր հասկցած սկզբունքը Արեւմտեան պետութիւններու քաղաքականութեան, որ ո՛չ թէ արդարութեան, այլ միայն «Ծահու» վրայ հիմնուած էր... ու կը մնայ:

Եւ պատրանախաբ Արշակ Չօպանեանի «Բարեկամները» եղող ֆրանսացի ղեկավարներն էին, որ Արեւմտեան Պետութիւններուն մէջ առաջիկները եղան 1921-ին, Անգարայի մէջ, Մուստաֆա Էեմալի հետ համաձայնութիւն ստորագրողները: Ֆրանսացիները, հայութեան դաւաճանելով, դրժելով իրենց խոստումը (Հայկական Անկախ Կիլիկիա հիմնելու), Կիլիկիան ծախեցին թուրքերուն:

Այստեղ կը հրատարակենք Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրք»-ի մասին [այս անգամ] գնահատական նամակ մը՝ Պոլսոյ «Ազատամարտ» թերթի խմբագրապետ և ծանօթ գրող Ռուբէն Զարդարեանի կողմէ գրուած: Ահա՛ այդ նամակը՝

Ռուբէն Սեւակին

1910, Նոյեմբեր 10/23, Կ. Պոլիս

Ազնիւ եղբայրակից

Շատ շնորհակալութեամբ ստացած եմ Ձեր «Կարմիր Գիրքը», որ պատիւ ըրած էք ինձի նուէր դրկելու:

Անկեղծութիւնն ունիմ ըսելու, թէ Ձեզմէ քիչ բան կարդացած էի, և հատուկ տորներ միայն: Գիտէ՞ք ի՞նչ մեծ հաճոյքով և հոգեկան բաւականութեամբ էր, որ աւարտեցի Ձեր «Կարմիր Գիրքին» ընթերցումը: Եւ դուք, իբրեւ արժէքի տէր բանաստեղծ, յայտնութիւն մը եղաք ինձի: Ձեր տաղանդին վրայ կասկած չունիմ, և եթէ «Կարմիր Գիրք»-ին մէջ կան երկրորդական դիտողութիւններ, անոնք երբեք բան մը չեն նուազեցներ անոր քերթողական խոր ու ճշմարիտ դրոշմէն:

Ուստի, թոյլ տուէք, որ սեղմեմ Ձեր ձեռքը և շնորհաւորեմ Ձեզ Ձեր գեղեցիկ հրատարակութեան առթիւ:

Յարգալիր բարեւներով,

Ձերդ՝

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Յ. Գ. – Բարի եղէք իմացնելու, թէ Կ'ստանա՞ք արդեօք «Ազատամարտ» շաբաթաթերթը, որուն մէջ Ձեր աշխատակցութեանը այնքան բաղձանք ունինք ամէնքս:

Նոյն



## ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԵԳՆԱՆՔ

ԹԷ՞

### ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԻԺ

Հակառակ, որ Արշակ Չօպանեան, ծանօթացած էր Ռուբեն Սեւակին 1907-թ.ին Լոզանի մէջ, (որքան մեզի ծանօթ է) ան, իր Փարիզ լոյս տեսնող «Անահիտ» պարբերաթերթին մէջ, Ռուբեն Սեւակէն ոչ մէկ գործ հրատարակած էր: Աւելին՝ Ա. Չօպանեան Ռուբեն Սեւակին «Կարմիր Գիրք»ին արժեքը չէր հասկըցած:

Բայց, ճակատագրի ի՞նչ հեգնանք և կամ Աստուածային պատիժ է, որ Արշակ Չօպանեանին կը վիճակի 1919-թ.ին, իր «Վերածնունդ» հանդէսին մէջ, առաջին անգամ ըլլալով հրատարակել Ռուբեն Սեւակի ամէնէն ծանօթ բանաստեղծութիւններէն մէկը եղող «Հայաստան»ը:

Այս քերթուածին հրատարակութեան պատմութիւնը, Ռուբեն Սեւակի կեանքին նման զգայացունց է: Ահա, այս «Հայաստան» բանաստեղծութեան ողիսականը:

13 Դեկտեմբեր 1918-ին ժընեւէն, Աւետիք Իսահակեան Փարիզ, Արշակ Չօպանեանին նամակ մը կը գրէ...

*«Սիրելի բարեկամ Արշակ Չօպանեան.*

*Այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանաւոր, որ 1913-թ. Լոզանում մեր եղերաբախտ բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրեան-Սեւակն գրեց իմ ծոցատետրիս մէջ: Այս ծոցատետրս միայն վերջերս հնարաւոր եղաւ ստանալու [մօտս չէր՝ ուրիշ ձեռագիրներիս հետ]:*

*Ուստի և պարտք եմ համարում տպագրութեան յանձնելու, մի գուցէ չկորի այս գեղեցիկ բանաստեղծութիւնը: Որքան յիշում եմ՝ ոչ մի տեղ չի տպուած դա: [Ա. Իսահակեան «Երկերի ժողովածու» վեցերորդ հատոր: Էջ 172]:*

\*\*

### ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞Վ ԿՈՒ ԼԱՅ ԱՅՍՊԷՍ ԽԾՏԵԱԿԻՍ ԾԵՄԻՆ,

– ԶՈՅՐ, ՂԱՐԻՊՆ Է, ԲԱ՛Ց:

ԿՄԱ՞Ն ՄԸ Կ՛ԱՆՅՆԻ ԴՈՒՐՍԷՆ ԼԱԼԱԳԻՆ.

– ՍՈՎՆ Է, ԴՈՒՌԸԴ ԲԱՑ:

ՏԱՊԱ՞ՐՆ Է ՋԱՆՋԱՆ ԴՐԱՆՍ ԿՈՒՐԾՔԻՆ:

– ՋԱՐԴՆ Է, ԴՈՒՌԸԴ ԲԱ՛Ց:

1913

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

\*\*

«Նայիրի»ի նախորդ թիւին մէջ [6 Յունիս 2006-թ.] գրած էինք, որ «Կարմիր Գիրք»ին համար Արշակ Չօպանեանին կատարած քննադատութիւնները շատ ժխտական ազդեցութիւն գործած են Ռուբեն Սեւակի վրայ»: Եւ այս պատճառաւ է կը կարծենք, թէ Ռուբեն Սեւակ իր այդ գործէն յետոյ, մինչեւ 1915, իր նահատակութիւնը, ուրիշ գիրք չէ հրատարակած: Հակառակ, որ Ռուբեն Սեւակի շատ բանաստեղծութիւններ, պատրաստ էին տպագրուելու:

Այստեղ պիտի ջանանք նշել, Ռուբեն Սեւակի «Կարմիր Գիրք»էն յետոյ

գրուած բանաստեղծութիւններէն քանի մը հատուածներ՝

ՍԷՐՈ՛Վ, ՍԷՐՈ՛Վ...

ՍԷՐՈ՛Վ, ՍԷՐՈ՛Վ ԽՈՅԵՅԻՐ ՋԻՍ,  
ՍԻՐՏԸՍ ՍԷՐՈ՛Վ ԽՈՅԵՅԻՐ,  
ՍԻՐՏԸՍ ՋԱՀԻՆ, ՎԱՐԴԻ ՊԷՍ ԲԱՅ,  
ԴԱԳԱՂԻ ՊԷՍ ԳՈՅԵՅԻՐ...:

Այս «Սերո՛վ, Սերո՛վ» բանաստեղծութիւնը, Ռուբէն Սեւակի ընկերը եղող Ծահան Պերպերեանի կողմէ, երգի վերածուած է:

\*\*

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ  
ԻՍ ԿԵԱՆԶՍ ԹՈՂ ԿՈՐԱԾ ՆԱԻՈՒՆ  
ՊԷՍ ԸԼԼԱՅ,  
ԾՈՒՆՉԴ ՈՒՌԵՅՆԷ ԾԵՐ  
ԱՌԱԳԱՍՏԸՍ ԱՆԱ՛Ն,  
ՄԻ՛-ՄԻ՛ ԼՍԵՐ ՅՈԳՆԱԾ ՀՈԳԻՍ ՈՐ  
ԿՈՒ ԼԱՅ,  
ՏԱ՛Ր ՋԻՍ ՍԻՐՈՅ ԿՂԶԻՆԵՐԷՆ ԴԷՊԻ  
ՄԱ՛Ն,  
ԻՍ ԿԵԱՆԶՍ ԹՈՂ ԿՈՐԱԾ ՆԱԻՈՒՆ  
ՊԷՍ ԸԼԼԱՅ...:

«Սիրոյ եւ Մահուան Երգը» Հայաստանի մէջ, երգահան Դաւիթ Հալաճեանի կողմէ 1991-ին երաժշտութեան վերածուած և հայկական Ռատիո-ի երգչախումբի խմբավար Տիգրան Հէքէքեանի կողմէ «CD» ձայնապնակի վրայ արձանագրուած է:

\*\*

ԻՆՉՈ՛ՒԻ

ԻՆՉՈ՛ՒԻ, ԻՆՉՈ՛ՒԻ ՋԻՍ ՍԻՐԵՅԻՐ,  
ՓՈՔՐԻԿ ԱՂԶԻԿ, ԶԵՋԻ ՄԵՂԶ ԷՐ,  
ՓՈՔՐԻԿ ԾՈՅԻԴ ԹԻԹԵ՛Ռ ՊԷՏԶ ԷՐ,  
ԴՈՒՆ ԾԵ՛Ր ԱՐԾԻԻ ՄԸ ԲԱՆՏԵՅԻՐ...:

\*\*

ԵՐԹԱ՛Ն

ԵՐԹԱ՛Ն, ԵՐԹԱ՛Ն, ՉԸ ՃԱՆՉՆԱԼ ՄԱ՛ՐԴ ՈՒ ԱՍՏՈՒԱ՛Ծ,  
ՋՈ՛ՅԳ ԵՐԹԱ՛Ն՝ ՉԵՌԵԸԴ ԶՈ՛ՅՐ ՉԵՌԵԻ ՄԷՋ ԴԸՐԱԾ  
ԱՆՐՋԱՆԵՐՆ ՈՒ ՍԻՐՈՅՆ ՊԷՍ - ԱԶՍՈՐՈՒԱ՛Ծ...:

Ֆրանսահայ միլիառատեր Նափոլէոն Պուլուքեանի յուղարկաւորութեան ատեն Լիոնի գերեզմանատան մէջ- [Պուլուքեան ֆարմատն մը ըլլալուն՝ հայկական եկեղեցի չէ տարուած], միայն Ռուբէն Սեւակի «Երթալ» բանաստեղծութեան ֆրանսերէն թարգմանութիւնը կարդացուած է:

\*\*



\*\*

### ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Այս ի՛նչ դարերու հասեր ե՞նք, Աստուա՛ծ,  
 Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտուած,  
 Թէ դեռ սի՛րտ ունիք՝ թաղելո՛ւ տարէք,  
 Ոսկիի՞ն ցեցօ ձայնն է ամէնուրեք:  
 Մի՛ միայն մե՛նք ե՞նք որ դեռ անարգել  
 Սիրե՛լ կ'երազե՞նք, ո՛վ կ'ուզէ սիրե՛լ  
 Թրուպատուրները:

\*\*

### ԱՅՍ ԴԱՆԱԿԸ

- Ի՛նչ կ'ընէ երբ Ա՛զգ ՄԸ ՄՆԱՅ ՆՕԹԻ,  
 Չե՞նքէն բազ ո՞ր բրի՞զ ԿԸ ՆԵՏԷ ՄԷԿԴԻ,  
 Կ'երթա՞ն շարժողո՞ւտի մասնի՞ն մ'անխո՞րհ,  
 ԿԸ ՋԻՆՈՒԻ ՏԷԳՈՎ, ԿԸ ՋԻՆՈՒԻ ՍՈՒՐՈՎ.  
 Ո՞ր Կ'երթա՞ն ասէն միջոցներով ՎԱՏ  
 ԱՋԳԻ ՄԸ ԿՈՒԻ ՄԸՂԵԼ ՅՈՒՍԱՀԱՏ...:  
 Թէ ՅԱՂԹՈՒԵՅԱԻ՝ ԱԻԱ՛ղ է ԻՐԵՆ,  
 ԻՍԿ ԵԹԷ ՅԱՂԹԵՅ՝ ԱՇԽԱՐՀ ՀԱՄՕՐԷՆ  
 ԳՈՎԵՍՏԻ ԵՐԳԵՐ Կ'ԵՐԳԷ ԱՄԷՆ ՕՐ,  
 ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՈՍԿԻ Է՛Ձ ԿՈՒ ՏԱՅ ԱՆՈՐ...:

\*\*

### ՓՈՂՈՑ ԱԻԼՈՂԸ

ՍԱԿԱՅՆ Ո՛Ղ, Ո՛Ղ, Ո՛Ղ: ՉԻՆԻՆ ՅՈՒՐՏԻՆ ՄԷՉ  
 ԱԻԼԷ՛ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՅԵՒՆ ՈՒ ԿԵՂՏՆ ԱՆՎԵՐՉ,  
 ԱԻԼԷ՛ ՈՒ ԳԻՏՅԻՐ ՈՐ ՄԻՇՏ Կ'ԱՂՏՈՏԻ...:  
 ՄԻ՛ ԽՈՐՀԻՐ, ՄԻՏԶԸ ՋԱՐԴ Մ'Է ՍՆՈՏԻ...  
 ԱԻԼԷ՛, ՈՐԲԻԿՆԵՐԴ ՀԱՅԻԴ ԿԸ ՍՊԱՍԵՆ:  
 ԱԻԼԷ՛, ՍՈՒՐԲ Է ՊԱՐՏԶԵՆ, ԻՆՉ ՈՐ ԱԼ ԸՍԵՆ:  
 ԱԻԼԷ՛, ՈՐՊԷՍՋԻ ԻՐԻԿՈՒԱՆ ԵՐԲ ՏԱՆ  
 ՆԻՀԱՐ ՍԱԿԱԳԻՆ ԶՈՒ ԸՍՏՐԿՈՒԹԵԱՆ՝  
 ՆԸՋՈՎԵՍ ԱՅԴ ՉԵ՛ՌԶԸ ՍՐՐՏԻԴ ԽՈՐԷՆ...  
 ՄԱՐԴԵՐՆ ԱՆԻԾԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ...:

\*\*

### ԱՌՋԻ ՀԱՅԵՐԸ

ԴՐԱԽՏԻՆ ՄԷՁ ԻՍԼԱՄ ՄԻՆԱՐԷԻՆ ԶՈՎ  
 ԳԵՐՄԱՆ ԾԽՆԵԼՈՅՉԸ Կ'ԵԼԼԷՐ...  
 ՀՈՍ, ՀՈՆ, ԲԻԻՋԱՆԴԻԱ... ՏԱԿ ՅԱԾ  
 ԴԵՌ ԶԱՆԻ ՄԸ ՀԱՅ ԳՏԱՅ ՊՈՒՆԿԱՅԱԾ...  
 ԱՐԱՐԱՏԻՆ ՎՐԱՅ՝ ՆՈՐ ԱՋԳ Մ'Է ՕՏԱՐ  
 ՉՀԱՍԿՅԱԻ ԻՄ ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՌ  
 ՀԵԳՆԵՅ՝ «ՀԱՅԵՐԸ...»:

**ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ - ԵՐԿՈՒ ԿԵՅՈՒԱԾԸ... (Շար. էջ 2-էն)**

ԱՌՈՒՐԵԱՆԻ ԶՈՎ՝ ԶԱՐ ԷՐ ԱԻԵՐԱԿ  
ԶԱՂԱԸ ՄԸ, ԱԾԽԱՐՀ ՄԸ ԳՏԱՅ ՃԵՐՄԱԿ,  
ՉԱՅՆ Մ'ԵՐԳԵՑ՝ «ՄԻ ԼԱՐ ՓԱՌԶԵՐՈՒՆ ԿՐԱՅ ՍԻՆ,  
ՆԱՅԷ ՏԱՊԱՆԻՍ ՄԻՒՍ ԵՐԵՍԻՆ  
ԱՉԳԵՐԸ ԿՆԶԵՐ ԵՆ ԿՐԱՆ՝ «ՄԱՂ ՀԱՅՈՒՆ»  
ԲԱՅՑ ՄԻՒՍ ԵՐԵՍԻՆ ԿՐԱՅ «ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ»  
ԳՐԵՐ ԵՆ ՀԱՅԵՐԸ...:

\*\*

**Ո՛Վ ԻՄ ՀԱՅՐԵՆԻԶՍ**

«ՄԵ՛ՆԶ ԵՆԶ, ԴԻՒԱՀԱՐ ԾՆՈՂՆԴ ԱՐԻՒՆԻ,  
«ՀԻ՛Ն, ԾԶԵ՛Ղ ՅԵՂԻ ՋԱԻԱԿՆԵՐ ՅԵՏԻՆ,  
«ԲՈՊԻԿ ԵՐԱԽԱ՛Յ, ԴՈՂԴՈՋ ԾԵՐՈՒՆԻ՛,  
«ՄԵ՛ՆԶ ԵՆԶ, ՈՂՋ ԳԱՆԿԵՐՆ ՈՐ Կ՛ԻՅՆԱՆ ԳԵՏԻՆ...  
«ՄԵ՛ՆԶ ԵՆԶ, ԴԻՒԱՀԱՐ ԾՆՈՂՆԴ ԱՐԻՒՆԻ...:

«ՀՈՒ, ՆՋՈ՛ՎԸ, ՆՋՈ՛ՎԸ: ՄԵՐ ՎԷՐԶԻՆ ՓՐՓՐՈՒՆ  
«ՇՈԳԻՆ ԽԱԻԱՐԷ՛Ր ՉԵՐ ԱՉԶԵՐԸ, Ա՛Ը.  
«ՄԵՐ ԱՐԻՒՆԸ ՉԵՐ ՋԱԻԱԿԱ՛Յ ԳԼԽՈՒՆ.  
«ԹՈ՛ՅՆ ԾՆՉԷԻԶ ԴՈՒԶ, ՈՒ ԸՄՊԷԻԶ ՄԱ՛Ը...  
«ՀՈՒ, ՆՋՈ՛ՎԸ, ՆՋՈ՛ՎԸ ՉԵՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ...»:

\*\*

**ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ**

ՄԻ՛ԴՊԻՐ ԱՆՈՆՑ ՀՈԳԻՈՅՆ ՓԼՈՒՅՈՒՆ  
ԱՆՈՆԸ Կ՛ԱՆՅՆԻՆ ԼՈ՛ԻՒ ԳԱՂՏՆԻԶՈՎ ԼԵՅՈՒՆ,  
ԱՆՈՆԸ ԳԻՏԵՆ ԲԻ՛ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՈՒԹ,  
ԱՆՈ՛ՆՑ ՈՐ ԿՈՐԱՆ ԱՐԵԱՆ ՄԷՋ ՏՂՄՈՒՏ,  
ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ԶԱՋԵ՛Ր ՀԱՄՕՐԷՆ...:  
- ՀԱՋԱՐ ՄԱՀՈՎ ԾԱՆՐ՝ ԿԵՆԴԱՆԻ - ՄԱ՛ՂՆ ԵՆ  
՝ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԸ...:

ԵԱՐԻՆԱՂ, ՀԱ՛Յ, ԿՕ՛Յ... ՍԱԿԱ՛ՅՆ ԾԵՐՈՒՆԻ  
ՊԱՆԴՈՒԽՏՆ ՅՈԳՆԵՐ Է. ՎԱ՛ՂԸ ՊԻՏ՝ ՄԵՌՆԻ՛  
ՈՐԴԻՆ ԵՐԿԻՐ Է ՂՐԿԵՐ ԿՌՈՒԵԼՈՒ.  
ՎԱՂՆ Ա՛Ն ԱԼ ՊԻՏԻ ԽՈՂԽՈՂՈՒԻ, ՀԼՈ՛Ի...  
ՈՒ, ՎԱ՛Խ, ՄԻ՛ ԱՌ ՄԻ ԱՅՍՊԷ՛Ս ՊԻՏ ԿՈՐՉՈՆ  
ԴԻՒՅԱՋՈՒՆՆԵՐՈՒ ՅԵՂԻ ՄԸ ՎԵՐՋԻ՛Ն,  
ՎԵՐՋԻ՛Ն ՀԱՅԵՐԸ...:

Ո՛Չ, Ո՛Չ: ԱՐԾԱԼՈՅՄՆ ԻՐԵՆՑ ՊԻՏԻ ԳԱՅ...:  
ՈՒ ԵԹԷ՛ ՉԻ ԳԱՅ ԱԻՕՏՆ ԱՊԱԳԱՅ՝  
ՊԻՏ՝ ԿՌՈՒԻՆ: ՄԻՆՉ Ե՛ՐԲ...: ՄԻՆՉԵԻ ՅԱԻԻՏԵԱՂ:  
ՈՒ ԵՐԲ ԴԵՌ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ ՄԵՌՆԻՆ Ա՛Փ ՄԸ ՄԱՐԴԵՐ ՉՆՉԻՂ,  
ԱՆՈՆԸ ՊԻՏ՝ ԸԼԼԱՆ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻ՛Ն,  
ՎԵՐՋԻ՛Ն ՀԱՅԵՐԸ...:

\*\*

\* \*

Երբ կը կարդանք Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները՝ չենք ուզեր հաւատալ, որ այս քերթուածները հարիւր տարի առաջ գրուած են: Անոնք այնքա՛ն այժմէական են, մարդկային ցաւով լի և այնքա՛ն հայկական ներկայ իրավիճակին մարմնացումներն են, որ Ալեքսանդր Թոփչեանի նման մենք ալ կը կրկնենք. «Ռուբէն Սեւակ իսկական մարգարէ մըն էր»:

\* \* \*

Արշակ Չօպանեանի Ռուբէն Սեւակի «Կարմիր Գիրք»ին համար կատարած քննադատութիւնները մենք կը հաւատանք, որ բանաստեղծին հոգւոյն մէջ լեղաշրջման մը պատճառ եղած են:

1910-էն յետոյ Ռուբէն, իբր բժիշկ, աւելի արձակ գրութիւններու վրայ կեդրոնացաւ քան թէ բանաստեղծութիւններու: Թէեւ ան, 1910-թ.էն առաջ ալ, խոր վերլուծումներով յագեցած արձակ գրութիւններ հրատարակած էր:

Այստեղ մէջբերենք Ռ. Սեւակի Պոլսոյ «Օտէօն» թատրոնին մէջ, 22 Օգոստոս 1908-ին կատարած բացառիկ ելոյթը, որ 18 Փետրուար 2005-ին Նիւ Եորք, «Համազգային»ի սրահին մէջ, Ռուբէն Սեւակի մասին տրուած դասախօսութեան մ'ընթացքին, Դոկդ. Հրանդ Մարգարեան, շատ խոր մեկնաբանութեամբ մը, զայն ներկայացուց հանրութեան:

Պոլսոյ «Օտէօն» թատրոնին մէջ, 22 Օգոստոս<sup>1</sup> 1908-ին, Պոլսոյ հայութեան մասին Ռուբէնի ըսածները, մարգարէական իրականութիւններ են:

Ահաւասիկ այդ խօսքերը... Թատրո՛նը, հայաշո՛ւնչ թատրոնը...: Այն թատրոնը զոր Հէքիմեաններ, Պէշիկթաշլեաններ, Թէրզեաններ, Թղլեաններ, Ծիրվանգատէներ կանգնեցին... ա՛յն թատրոնը զոր Վարդովեաններ, Գարապաշեաններ, Ֆասուլեաններ, Սիրանոյշներ, Մնակեաններ փառաւորեցին... ա՛յն թատրոնը ուր Թրեանցներ, Ռշտունիներ, Ադամեաններ անմահացան... թատրոնը՝ հայաշունչ թատրոնը, մե՛ր թատրոնը...:

Ոհ, փառաւոր հայ անուններու ոսկեճոյլ համաստեղութիւնը...:

Ու բնա՛ւ զարմանալի չէ որ մեր մէջ, ուր այնքան ապերախտ ու այնքան թշուառ նկատուած է այս բեմի ասպարէզը,-- մե՛ր մէջ՝ համեմատօրէն բոլոր միւս արուեստագիտական ասպարէզներուն-- ամէնէ՛ն աւելի ուռճացող ու պտղաբերող ճիւղը բա՛ռորոնը եղած ըլլայ միշտ: Ասիկա ունի իր որոշ պատճառները:

Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ գտնուի տակաւին մէկ ուրիշ ազգ՝ որ ամէ՛ն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր, ստրկացած թրքահայերուս կեանքը...: Տառապի՛՛, ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուով, բռնաբարով, գետնաքարշ տապալիլ, ու ստիպուա՛ծ ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտի՛՛ այնպիսի մէկ վայրկեանիդ, ուր արիւն-արցունք պիտի սյոռթկար աչերէդ... մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար որ զքեզ կը խեղդէ... մեռնի՛՛ - հոգեպէս մեռնիլ - ու ապրիլ ձեւացնել... ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մե՛րը եղաւ այնքա՛ն երկար տարիներ...: Այդ ինչպէ՞ս կ'ուզէիք որ այսպիսի պայման-

ներու մէջ, ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չըլլար, ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը...

Ազգի մը թատրոնին յաջողութեան համար կա՛յ տակաւին մէ՛կ երկրորդ պայման. ա՛յն է՝ թատրերգութեան նիւթը, պատմութեան առանցքը, խաղին կմախքը: Արդ մոռցէք անգամ մը ներկան. վայրկեան մը դէպի ետ երթանք, մեր ժողովրդեան կեանքին պատմութեան մէջ, ե՛տ, շա՛տ ետ, մինչեւ Յիսուսի ժամանակները, ու անկէց ալ ետ՝ մինչեւ մեր հեթանոսական շրջանները: Անցեալի մշուշին մէջ թաղուած այդ ոսկեկուռ բարձունքներէն դիտենք անգամ մը լեռն ի վար սողոսկող այն ահաւոր ու արիւնլուայ ճամբան որ մեր ազգինն է: Ի՛նչ ահաւոր դասեր, ի՛նչ հսկայ ատաղձներ թատերագրի մը համար՝ այդ պատմութեան զանազան էջերուն մէջ: Մեր ամէնուս հայր՝ Հայկէն մինչեւ մեր օրերը, դիցաբանական հիանալի աւանդավէպերու քով ի՛նչ ահաւոր իրականութիւններ...: Ու Արշակը, ու Վասակը, ու Զաջ Վարդանը, ու Մեծն Արտաշէսը...: Ու տակաւին նո՛ր, դեռ շատ նոր, մեր ամէնուս սրտին մէջ արիւնող յիշատակները այն ահռելի կոտորածներուն որոնք մահը ու սարսափը ու սովը ցանցցին մինչեւ Ակնայ սարսափահար հովիտները, Վանայ արիւնաներկ լիճէն մինչեւ Ոսկեղջիւրի հայակով անդունդները...:

Ազգային, զուտ ազգային թատրոնի մը համար ինչ ատաղձներ, ի՛նչ հերոսներ, ի՛նչ նիւթեր...: Խաւարչտին բանտերու մէջ ժողովուրդէն անգիտուած, մարդկութենէ վատօրէն լքուած «Ազատութիւն» հեծկլտալով քանի-քանի մեռնողներ, զորս Հայ բեմը պիտի անմահացներ՝ անձնութեան դասը տալու համար ժողովրդեան...: Ու ամէն տեղ, յաւիտենական սարսափի ու սպառնալիքի տակ՝ դիցազնօրէն ու լուռօրէն գործող քանի վեհանձն կեանքեր՝ զոր Հայ թատրերգութիւնը բեմ պիտի հաներ՝ մեզի հերոսաբար մեռնիլ սորվեցնելու համար...: Ու դեռ ինչե՛ր, ու դեռ ինչե՛ր...:

Ո՛հ... ո՛չ... դժբախտաբար նիւթերը չեն որ կը պակսին հիմներու համար ջղուտ ազգային թատրոն մը: Եւ ահա թէ ինչո՞ւ ես այս գիշեր համեստօրէն պիտի ուզէի յանգիլ սա գաղափարին, թէ օտար թատերախաղերէ աւելի - զոր մեր ժողովուրդը չի՛ կրնար ըմբռնել - պէտք է Հայութիւնը իր ծոցէն ծնի Հայ թատրոն մը, Հա՛յ, ոչ միայն լեզուով, այլ՝ ոգիով ալ, նպատակով ալ...:

Հայ թատրոն մը՝ Հայ իրականութեան համար:

Կեցցէ՛ հայութիւնը, կեցցէ՛ թատրոնը:

Բերա, 22 Օգոստոս 1908

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

\*\*

1913-թ.էն սկսեալ Պոլսոյ «Ազատամարտ» թերթին մէջ Ռուբէն Սեւակի արձակ գրութիւնները հրատարակուիլ սկսան «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» խորագրով, որ բացառիկ հետաքրքրութիւն և ոգեւորութիւն ստեղծեցին հայութեան մէջ:

«Ազատամարտ» թերթի խմբագրապետ և ծանօթ գրագէտ Ռուբէն Զարդարեան Պոլսէն Լոզան՝ Ռուբէն Սեւակին ուղղուած նամակին մէջ, տեսէք, թէ ինչպէս իր հիացումը կը յայտնէ՝ «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» ու գրութիւններուն համար՝

«Ծնորհաւորութիւններս այն զմայլելի ձեւին համար, որով կը գրէք ձեր Բժիշկի Էջերը: Չէք կարող երեւակայել թէ որպիսի՛ խանդավառ ընդունելութիւն գտած են անոնք ընթերցող հասարակութեան մէջ, թէ՛ հոս ե՛րբ՛ արտասահման: Ասիկա նախ կ'ապացուցանէ այն անտարակուսելի գրական ճարտարութիւնը, որով կը գրէք ձեր յօդուածները՝ քերթուածի մը չափ թրթռուն. երկրորդ՝ մանկավարժական այն մեթոտը, որով հիւանդութեանց սարսափն ու գարշանքը կը ներշնչէք, առանց խրատի ու քարոզութեան հին պանալ մեթոտին, և երրորդ՝ ա՛յն որ «ասիսո՛ս, ա՛յնքան տառապանք կայ մեր հասարակութեան ծոցն ալ՝ ու ա՛յնքան հիւանդ, ա՛յնքան վիրաւոր»:

21 Փետրուար 1911 Պոլիս - ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Ռուբէն Սեւակի «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» գրութիւններու մասին, ուրիշ գնահատական «բաց» նամակ մը, որ գրուած է 1914-թ.ին, Պոլսոյ ծանօթ երգիծաբաններէն Յ. Ալիիարին կողմէ:

Այս նամակը աւելի ուշ հրատարակուած է 1952-ին, «Աստղաբերդ»ին մէջ:

Յ. Ալիիարին երգիծական ոճով գրուած այս նամակը պատմական մեծ արժէք ունի:

Ահա՛ Յ. Ալիիար-ի Ռուբէն Սեւակին ուղղած շատ հետաքրքրական նամակէն հատուածներ, պահելով անոր լեզուական հարազատութիւնը:

### Յ. ԱԼՓԻԱՐԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ ՏԶԹ. Ռ. ՍԵՒԱԿԻՆ

Եւտի-Գուլէ, 4. Պոլիս.

Ազգ. Հիւանդանոց. 2-15 Մարտ 1914

Սիրելի Պարոն,

...Քանի մը Կիրակի, իրարու վրայ, Լօզանէն ձեր գրածները կը կարդամ կոր, անսպասում հրճուանքով մը:

Ծատ քիչ անգամ կը պատահի որ հայ լեզուաւ գրուած բան մը այնքան խոր տպաւորութիւն գործէ վրաս և գրաւէ հաւանութիւնս: Տիրացութիւններէ կը խորշիմ և կը սոսկամ *liux communs*-ներէ: Եւ ընդհանրապէս ատոնցմով խճողուած է մեր ողորմելի գրականութիւնը:

Երբ կը տեսնեմ մէկը որ անոր մէջ նորութիւն մը կը մտցնէ և քիչ մը աւելն կը դնէ այդ աւշային դպրութեան մէջ, ես այդ մարդուն համար հոգի կու տամ և իբր բարեկամ կ'ընդունիմ զինքը, եթէ նոյնիսկ անոր երեսը տեսած չըլլամ:

Ըմբռնչանած հաճոյքս մեծ է երբ ձեզ կը կարդամ. որովհետեւ դուք մեր բոլորին պէս չէք մտածեր և եղանակ մը ունիք գրելու, որ պարզապէս *électique* հով մը կը կրէ վրան: Ձեզ համար չեն *les chemins battus* և կ'ուզէք բուն՝ եւրոպական *tournaire* մը տալ մեր շինական հայերէնին: Եւ կը յաջողիք կոր փառաւորապէս:

Ատ ինչ *superbe* ոճ է, ի՞նչ յղկուն լեզու և ի՞նչ նոր և գեղեցիկ գաղափարներ:

Ներեցէք, որ թօթուեմ ձեր ձեռքը և անվերապահօրէն յայտնեմ Ձեզի սքանչաջումս:

Բժշկութիւնը այդքան յաջող և *attrayant* կերպով *vulgarisé* չէր եղած երբեք:

Գրական նոր ճիւղ մը կը ստեղծէք կոր, որուն վրայ հիացողներէն մէկը ներեցէք, որ ես ըլլամ:

Ո՛վ ըլլալնիդ չեմ գիտեր, բայց կայնեցէք ձեզի ըսեմ, թէ ի՞նչ էք: Ջգացումներու փափկազգած նկարիչ մը: Լեզուի *ciseleur* մը և բառին ամբողջ ուժովը հաճելի գրագէտ մը:

Հաւատացէք, խնդրեմ, զգացումներուս անկեղծութեանը և անսահման համակրանքներուս արտայայտութեան:

Յ. ԱԼՓԻԱՐ

(Ծարունակելի)

**Ա.Լ. ԹՈՓՉԵԱՆԻ**  
**«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ» ՎԷՊԻ**  
**ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ**

Մեր օրերուն, երբ, ցաւօք սրտի, զգալիօրէն նուազած է հետաքրքրութիւնը հայ գրողի, հայերէն ընթերցանութեան և ընդհանրապէս հայ գրչի հանդէպ, հազուադէպ է, որ հայրենիքի մէջ լոյս տեսած արձակ երկ մը այսպիսի բուռն ընդունելութիւն գտնէ Սփիւռքի մէջ, ինչպիսին ապրեցանք Ապրիլ 21-ի երեկոյեան, Մարսէլի «Մահակ-Մեսրոպ» մշակոյթի կեդրոնի «Ս. Զրբաշեան» սրահը:

Երեկոյքը բացաւ կեդրոնի տնօրէն՝ Խաչիկ Ելլմազեան, որ ի մէջ այլոց ըսաւ. «Այսօր մեր բոլորին համար նշանակալից օր մըն է, քանի մը պատճառներով. առաջինն այն է որ, այս յարկէն ներս կը վայելենք ներկայութիւնը յայտնի գրաքննադատ և արձակագիր Ալեքսանդր Թոփչեանի և հանրածանօթ դերասանուհի՝ Հայաստանի վաստակաւոր արտիստուհի՝ Անահիտ Թոփչեանի, ինչպէս նաեւ նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակի Գանլը Սիւր Մէր գտնուող «Տուն Թանգարան»ի

հիմնադիր-տնօրէն Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանի: Այո՛, ուրախ ենք և հպարտ, քանի որ դեռ երկու օրեր առաջ տեղեակ դարձանք, թէ Ա.Լ. Թոփչեանի «Եւ Անգամ Մահից Յետոյ» վէպը արժանացած է Հայաստանի հանրապետութեան Նախագահի պատուաւոր մրցանակին, որուն պարգևատրումը տեղի



*Զախէն աջ՝ Փրոֆ. Ռուպերտ Տէր Մերկերեան, Ալեքսանդր Թոփչեան, Տիկ. Անահիտ Թոփչեան, Ռուպերտ Ազելազեան, Խաչիկ Ելլմազեան, Ֆրեուի Զամանթեան:*

այիտի ունենար Մայիս 4-ին, Երեւան, ձեռամբ Պրն. Քոչարեանի»:

Խ. Ելլմազեան իր ելոյթի ընթացքին, բարձր գնահատեց այս ստուար վէպը, յատկապէս նշելով, որ ան գրուած է բարձրորակ արուեստով, վարպետ արձակագրի հմտութեամբ և կ'ընթերցուի լարուած հետաքրքրութեամբ: Այս վէպը լայն և ջերմ ընդունելութիւն գտած է Սփիւռքի թէ Հայաստանի մէջ, և բազմաթիւ հեղինակներ, միաձայն՝ վէպը որակած են ոչ միայն որպէս վերջին տարիներու, այլև ընդհանրապէս հայ գրականութեան ուշագրաւ երեւոյթներէն մէկը: Օրինակ՝ բանասիրական գիտութիւններու թեկնածու Վահէ Արսէնը կը գրէ. «Ա.Լ. Թոփչեանի վէպն անակնկալ յայտնութիւն է: Ան կը զարմացնէ ամէն ինչով, և կարող ենք ըսել, որ իր տեսակի մէջ եզակի է, եզակի է հայ արձակի պատմութեան մէջ»: Բանասիրակաւ գիտութիւններու տոքթօր-բանաստեղծ Արտեմ Յարութիւնեանն «Ազգ» թերթի մէջ տպագրած իր խոր վերլուծական յօդուածով կ'արտայայտուի, որ «Նման վէպ դժուար է յիշել մեր գրականութեան պատմութեան մէջ»: Իսկ



բանաստեղծ Սարգիս Կիրակոսեանը «Ազդակ» թերթի մէջ [Լիբանան] կը գրէ. «Պայծառ մտայղացումով, գրողական բարձր հմտութեամբ, բարձրարուեստ ճաշակով, ջերմ ու վարակիչ շունչով, բայց մանաւանդ՝ պատումին հեղեղային թափը իր ամրակուռ կառոյցին մէջ արձանացուցած բազմահորիզոն և բազմախաւ վէպ մը, որ իրաւամբ կը դառնայ հեղինակային հոսուն վարպետութեամբ ամրագրուած դասական գործ մը»:

Լեզուաբան, թարգմանիչ Ռոպէր Տէր Մերկերեանը կարգաց նահատակ բանաստեղծի աղջկան՝ Շամիրամ Սեւակի նամակը ուր ան կը յայտնէր, որ առողջական պատճառով բացակայ է. և այս առթիւ կ'ողջունէ երեկոյթի կազմակերպիչներն ու մասնակիցները:



*Չամիւրամ աջ՝ Փրոֆ. Ալեքսանդր Թովչեան, Տիկ. Անահիտ Թովչեան, Խաչիկ Եղլմազեան:*

Այնուհետեւ խօսքը տրուեցաւ երեկոյթի հիմնական մասնակիցներուն՝ Տէր և Տիկին Թովչեանին, որոնք կրցան իրենց տպաւորիչ անհատականութեան տակ պահել լեզուներուն սրահը: Արձակագրի և գրականագէտի խոր և յագեցած խօսքին կը յաջորդէր հանրաճանաչ դերասանուհիի բարձրարուեստ արտասանութիւնը: Սեւակի քերթողութիւնը կը ներկայանար ոչ միայն գրականագիտական խորունկ վերլուծութեամբ, այլեւ տողի, հնչիւնի և յոյզի առաւել քան համոզիչ մօտեցումով:

Ալ. Թովչեան հանգամանօրէն խօսեցաւ վէպի վրայ կատարուած աշխատանքի, վիսյասանին սպասող որոգայթներու և վտանգներու մասին, յատկապէս նշելով, որ դիւրին բան չէ յօրինուածքի հերոս դարձնել Եղեռնի նահատակ բանաստեղծը, ստեղծել անոր սիրոյ, անոր ստեղծագործութեան և նահատակութեան վաւերական պատմութիւնը, որ նման դէպքերուն միշտ «վտանգ կայ մէկ կողմէն միտքով գոեհկութեան ճահիճը կամ իյնալ իրատարանութեան գիրկը»: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն» հաստատութեան հիմնադիր-տնօրէն Յ. Զիլինկիրեանին, գրքի աջակցութեան համար: Ալ. Թովչ-

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ՓԱՅԼՈՂ ՆՈՐ ԱՍՏՂ ՄԸ՝  
ԻՐԱՔԻ ՀԻՒՍԻՍԸ ԳՏՆՈՒՈՂ ՔՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ**

Ամերիկացիներուն 1990-ին շղթայագերծած Իրաքի առաջին պատերազմին, Իրաքի Հիւսիսային մասին մէջ, [Իբր Թէ] Միացեալ Ազգերու որոշումով [իրականութեան մէջ սինիստներուն փափաքովը] քրտական շրջան մը ստեղծուած էր:

Սատտամ Հիւսէյնի կառավարութեան այս շրջանը մտնելուն առջեւ արգելք դրուած էր:

Միացեալ Ազգերուն այս որոշումը՝ իրականութեան մէջ, Հիւսիսային Իրաքի մէջ քրտական պետութիւն մը ստեղծելու առաջին քայլն էր...:

1990-թ.էն մինչեւ այսօր՝ 2006-թ.ը, Իրաքեան Քիւրտիստանի շրջանին մէջ ի՞նչ է կացութիւնը:

Այսօր, 16 տարիներ յետոյ Իրաքեան քրտական շրջանը, ամէն օր աւելի բարգաւաճող քրտական իսկական պետութեան մը վերածուեցաւ:

Քրտական Ազգային ժողովը, քրտական կառավարութիւնով, քրտական բանակով և քրտական դրամով իսկական պետութիւն մը եղաւ:

**\*\***

Այսօր, Իրաքի այս քրտական պետութիւնը՝ Քարիւղի օրը կը տօնէ: Ինչո՞ւ:

Որովհետեւ Իրաքեան Քիւրտիստանի մէջ [Թրքական սահմանէն 15 քմ. հեռաւորութեան վրայ] TAVKE-ի շրջանը, Նորվեկիական D.N.O. քարիւղի ընկերութիւնը հարիւր միլիոն տակառ (պահեստի քանակութեամբ) քարիւղ գտած և արդէն արտադրել սկսած է:

Քիւրտերը ահա՛, այս քարիւղին արտադրութիւնը կը տօնեն:

Քիւրտիստանի քարիւղի նախարարը՝ DR. HAVRAMI-ն քրտական քարիւղի եկամուտին քրտական կառավարութեան կողմէ շահագործուիլը յայտարարեց:

Եւ Քիւրտիստանի մէջ, քարիւղի նոր հորեր գտնելու համար, եւրոպական քարիւղի ընկերութիւններուն հետ նոր պայմանագրութիւններու ստորագրուած ըլլալուն լուրը տուաւ:

Այս որոշումները՝ Իրաքեան Քիւրտիստանին դէպի ինքնավարութիւն յառաջանալուն փաստերն են:

Բոլորին ծանօթ է, թէ քարիւղի եկամուտը պետութեան մը տնտեսական ինքնավարութիւնը ըսել է:

Եւ Իրաքեան Քիւրտիստանին իր ինքնավարութիւնը հռչակելը, ասկէ յետոյ, պարզ ձեւակերպութեան հարց մը կը դառնայ:

Տեսնուած իրականութիւնը այն է, որ Ամերիկացիներուն [աւելի ճիշդ Ամերիկեան-Սիոնական Լոպի-ին] նոր Միջին Արեւելք մը ստեղծելու ծրագիրը՝ ժամացոյցի ճշգրտութեամբ կը յառաջանայ:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ՛ Միջին Արեւելքի մէջ, նոր աստղ մը կը ծնի՝ Իրաքին Հիւսիսը, քրտական պետութիւնը նոր գտնուող քարիւղի իր հանքերով, Միջին Արեւելքի մէջ մեծ դեր մը պիտի սկսի խաղալ:

Եւ Իրաքեան Քիւրտիստանի հողերը՝ աշխարհի քարիւղի ամենամեծ պահեստներուն շրջանը եղող՝ MOUSUL - KERKÜK - TAVKE-ի եռանկիւնին մէջ կը գտնուին:

Եւ քարիւղով հարուստ այս հանքերուն տեղը եղող Իրաքեան Քիւրտիստանը՝ Արաբներուն և Թուրքներուն կոնակը գտնուող, Ամերիկեան գործակալ պետութեան մը դերը պիտի կատարէ:

Ահա, Ամերիկայի Իրէական-սիոնական Լոպի-ին, Միջին Արեւելքի ծրագիրներուն մէջ, Թրքական և արաբական վտանգին դէմ ստեղծուող նոր զէնքը՝ Միջին Արեւելքի նոր աստղը, միացեալ և հարուստ քրտական Պետութիւնը:

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**  
**ORTA DOGUDA PARLIYAN**  
**YENİ BİR YILDIZ**

**IRAKIN KUZEYİNDEKİ KÜRT DEVLETİ**

AMERİKALILARIN 1999-DA BASLATTIKLARI BİRİNCİ IRAK HARBİNDE, IRAKIN KUZEYİNDE (SÖZDE) BİRLESMİS MİLLETLERİN KARARI İLE (GERÇEKTE SİYONİSTLERİN İSTEGI İLE) BİR KÜRT BÖLGESİ KURULMUSTU.

VE SADDAM HÜSEYİN HÜKÜMETİNİN BU BÖLGEYE GİRMESİ YASAKLANMISTI.

BİRLESMİS MİLLETLERİN BU KARARI, GERÇEKTE KUZEY IRAKTA BİR KÜRT DEVLETİNİN KURULMASI İÇİN İLK ADIM İDİ.

1990 DAN BUGÜNE KADAR, 2006 SENESİNDE IRAKTAKİ KÜRDİSTAN BÖLGESİNDE DURUM NEDİR ?

BUGÜN, 16 SENEDEN BERİ BU KÜRT BÖLGESİ, HERGÜN BİRAZ DAHA GELİSEN GERÇEK BİR KÜRT DEVLETİNE DÖNÜSTÜ. KÜRT MECLİSİ İLE, KÜRT HÜKÜMETİ İLE, KÜRT ORDUSU İLE, KÜRT PARASI İLE, HAKIKİ BİR DEVLET OLDU.

BUGÜN, IRAKTAKİ BU KÜRT DEVLETİ PETROL BAYRAMINI KUTLUYOR.

NİÇİN? ÇÜNKÜ KÜRDİSTANIN (TÜRK SINIRINA 15 KİLOMETRE MESAFEDE) TAVKE BÖLGESİNDE NORVEÇİN D.N.O. PETROL SİRKETİ YÜZ MİLYON VARİL REZERV-LİK PETROL BULMUS. VE PETROL ÇIKARMAYA BASLAMIS BİLE. İSTE KÜRTLER BU PETROLÜN BAYRAMINI KUTLUYOR.

KÜRDİSTANIN PETROL BAKANİ DR. HAVRAMI KÜRT PETROLÜNÜN GELİRİNİN KÜRTLERİN KONTROLÜNDE OLUCAGINI SÖYLEDİ.

VE KÜRDİSTANDA PETROL ARAMAK İÇİN AVRUPALI PETROL SİRKETLERİYLE YENİ ANLASMALAR İMZALANDIGINI BILDİRDİ.

BU KARARLAR, IRAK KÜRDİSTANININ, BAGIMSIZLIGA DOGRU İLERLEMESİNİN DELİLİDİR.

MALÜM YA PETROL GELİRİ, BİR DEVLETİN EKONOMİK BAGIMSIZLIGI DEMEKTİR.

VE IRAK KÜRDİSTANIN ÖZGÜRLÜĞÜ İLE İLAN ETMESİ, BUNDAN SONRA BİR FORMALİTE MESELESİDİR.

GÖRÜNEN GERÇEK SU KI AMERİKANIN (DAHA DOGRUSU AMERİKAN MUSEVİ LOBİSİNİN) YENİ BİR ORTA DOGU YARATMA PLANLARI, BİR SAAT DAKIKLIGI İLE İLERLİYOR.

ÖNUN İÇİN DİYORUZ KI, ORTA DOGUNDA YENİ BİR YILDIZ DOGUYOR IRAKIN KUZEYİNDEKİ KÜRT DEVLETİ.

BU KÜRT DEVLETİ YENİ BULUNAN ZENGİN PETROL YATAKLARI İLE ORTA DOGUDA BÜYÜK BİR ROL OYNIYACAKTIR.

BU IRAK KÜRDİSTANIN TOPRAKLARI, DÜNYANIN EN BÜYÜK PETROL REZERVLERİNİN BULUNDUGU MUSUL - KERKÜK- TAVKE UÇ GENİ ÜZERİNDE BULUNUYOR.

VE BİJ ZENGİN PETROL YATAKLARINA SAHIP IRAK KÜRDİSTANI, ARAPLARIN VE TÜRKLERİN SIRTINDA AMERİKALILARIN PİYONU VAZİFESİNİ GÖRECEKTİR.

İSTE AMERİKAN MUSEVİ LOBİSİNİN YENİ ORTA DOGU PLANLARINDA, TÜRK VE ARAP TEHLİKESİNE KARSİ YARATTIKLARI YENİ SİLAHI. ORTA DOGUNUN YENİ YILDIZI, BİRLESİK VE ZENGİN KÜRT DEVLETİ.

**Յ. Չ.**

Եւան երախտագիտական խօսքեր ըսաւ նաեւ իր կնոջ՝ Անահիտ Թովչեանի հասցէ- ին՝ վէպի ձեռագրի վրայ կատարած բազմաթիւ և արժէքաւոր խմբագրական դի- տողութիւններու համար: «Գրեթէ համա-հեղինակի աշխատանք կատարեց և առանց անոր օգնութեան՝ վէպը ներկայ տեսքը չէր ունենար»:

Երեկոյթը շարունակուեցաւ «Սահակ Մեսրոպ Կեղրոն»ի Տիկնանց յանձնա- խումբի սլաւորաստած ճոխ սեղաններու շուրջ, «Վարուժան Պոզահեան» սրահը:

ԽԱԶԻԿ ԵՂԼՄԱԶԵԱՆ

## ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ...

ԱՐԾԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ ԵՒ ՅԱԿՈՔ ՕՇԱԿԱՆԻ  
ԽՕՍԹԵՐԸ ԿՐԿՆՈՂ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԹՈՒԹԱԿ-  
ՆԵՐՈՒՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՅԱՅՏՆԱԾ  
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ, ՄԻՆՉԵՒ 1986-թ.ՆԵՐԸ,  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՀԵՏԵՒԵԱԼ ԽՕՍԹԵՐՈՎ Կ'ԱԻԱՐՏԷԻՆ:

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԾԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ:

ԱՅԴ ՊԱՏՃԱՌԱԻ ԻՐ ԳՐԱԿԱՆ ՏԱՂԱՆԴԸ  
ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ԱՏԵՆ ՉՈՒՆԵՑԱԻ»:

ՆՈՅՆԻՍԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ  
ԱՄԷՆԷՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱԻԱՔԱԾՈՆԵՐԷՆ ՄԷԿԸ ԵՂՈՂ,  
1986-թ.ԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ «ՌՈՒԲԷՆ  
ՍԵՒԱԿ - ԵՐԿԵՐ» ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ  
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԻ ԲԱԺԻՆԸ  
ՀԵՏԵՒԵԱԼ ԽՕՍԹԵՐՈՎ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՅ՝

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ  
ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆՆ ԷՐ: ԿԱՂԱԺԱՍ ՄԱՀԸ  
ԽԼԵՑ ԻՐՄԷ ԻՐ ՏԱՂԱՆԴԸ ԽՈՐԱՅՆԵԼՈՒ,  
ՀԱՍՈՒՆԱՅՆԵԼՈՒ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆԸ, ՈՒ  
ԱՉԹԵՐԸ ՓԱԿԵՑ ՎԵՐՋԻՆ ԽՕՍԹԸ  
ՉԸՍԱԾ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Մենք կը կարծենք, որ Ռուբէն Սեւակի մասին յայտնուած գաղափարները, և յատկապէս այն վարկածը թէ՛ «Ան իր գրական տաղանդը զարգացնելու ատեն չունեցաւ» – Ռուբէն Սեւակի գրական վաստակի մասին կատարուած ամէնէն ծանրակշիռ անիրաւութիւնն է:

Ասիկա գլխաւոր ապացոյցն է, որ այս կարծիքին տէրերը Ռուբէն Սեւակի գրութիւններուն արժէքը լաւ չեն հասկըցած:

Եւ մտածել՝ որ այդ ժամանակ, գրեթէ բոլոր նահատակ մտաւորականներուն տարիքը 35-ի շուրջ էր.– Դանիէլ Վարուժան՝ 31 տարեկան, Սիամանթօն՝ 37 տարեկան, Գեղամ Բարսեղեան՝ 32 տարեկան, Տիգրան Չեօկիւրեան՝ 31 տարեկան:

Եւ զարմանալին այն է, որ ո՛չ Դանիէլ Վարուժանի, ո՛չ Սիամանթոյի և ո՛չ ալ միւս երիտասարդ նահատակ մտաւորականներուն իրենց տաղանդը «խորացնելու» մասին չի խօսուիր, և միայն կը խօսուի Ռուբէն Սեւակի երիտասարդ տարիքի մէջ նահատակուելուն մասին: Եւ մենք այս անիրաւութիւնը կը վերագրենք՝

1.– Հայ յետ-եղեռնեան մտաւորականներուն մեծամասնութեան տհասութեան, որոնք կաղապարուած գաղափարներ կը կրկնեն տեւապէս,

2.– Նաեւ՝ այս կարգի մտաւորականութեան մէջ հայրենասիրական և մարդասիրական անբիծ զգացումներու պակասին:

Բնական է, որ այս ձեւով մը այլասերած մտաւորականները պիտի չկրնային հասկնալ Ռուբէն Սեւակի գրութիւններուն արժէքը, որոնցմէ ուժգին կ'արտացոլան հայկական ոգին և մարդասիրական զգացումները:

**\*\***

2004-ին էր, որ Վահագն Տատրեանի միջոցաւ, հաճոյքը ունեցանք ծանօթանալու բացառիկներու շարքին դասուած հայու մը, մտաւորականի մը՝ վաւերական հայրենասէր Դոկտ. Հրանդ Մարգարեանի:

Եւ մեզի համար մեծ նորութիւն կազմեց տեղեկանալը, որ Հրանդ Մարգարեան, դեռ 1970-թ.ներուն, Ռուբէն Սեւակի մասին գրութիւններ հրապարակած է:

Մենք՝ Նիս, Դոկտ. Մարգարեան՝ Նիւ Եորք: Հակառակ այս հեռաւորութեան, մէկ քանի ամսուայ թղթակցութենէ և հեռաձայնային խօակցութիւններէ յետոյ, արդէն շատ մօտ էինք իրարու:

... Եւ Մարտ 2005-ին՝ «Վիտէօ-քասէթ» – մը ստացանք: Եւ այս ձայներիգի վրայ մենք դիտելու հաճոյքը ունեցանք Դոկտ. Հրանդ Մարգարեանի 18 Փետրուար 2005-թ.ին, Նիւ Եորքի «Համազգային»-ի սրահին մէջ Ռուբէն Սեւակի մասին կատարած բանախօսութիւնը, որու մէջ ան, իր գնահատումներով կը նոյնանար, գրեթէ նոյն օրերուն, Ալեքսանդր Թօփչեանի 15 Փետրուար 2005-ին, Հայաստանի «Հ-1»ով սփրուած և Ռուբէն Սեւակին վերաբերող գաղափարներուն հետ:

Այստեղ պիտի ջանանք մէջբերել այդ բանախօսութենէն կարգ մը հատուածներ.

«Ո՞վ է Ռուբէն Սեւակ... Բազմակողմանի անհատականութիւն մըն է՝ բժիշկ, գրող, բանաստեղծ, արձակագիր, նկարիչ, դաստիարակ:

Եւ մանաւանդ՝ ազգային ոգիով լի շիտակ և խիզախ մտաւորական մը:

Հասարակ մարդու մէջ այսքան առանձնայատկութիւններուն մէկ անձի մէջ միանալը՝ շատ դժուար է:

Բայց Ռուբէն Սեւակի մէջ այս յատկանիշները շաղկապուած են իրարու:

Ի՞նչ է արարքը Ռուբէն Սեւակի անհատականութեան:

Առաջին հերթին գերզգայուն հոգի մըն է, արարքներու խորքը տեսնելու բացառիկ կարողութեամբ, և մանաւանդ՝ հարցերը արդար և ճիշդ դատելու ընդունակութեամբ:

Եւ ի՞նչ է Ռուբէն Սեւակի մտահոգութեան առարկան:

Հայ Ազգն է: Հայ կեանքն է, հայրենիքը, հայուն իրաւունքները, և ազգային արժանապատուութիւնը»:

Լարուած և մագնիսացած կը դիտենք Դոկտ. Հրանդ Մարգարեանը: Եւ ան, Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն հատուածներ ներկայացուց.

«Թրուպատուրները», «Ջանգակներ՝, Ջանգակներ», «Փողոց Ալլոը», «Դրամին Աղօթքը»: Եւ կարդաց Ռուբէն Սեւակի 1908-թ.ին Պոլսոյ «Օտէօն» թատրոնին մէջ կատարած խօսքերէն.

«Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ գտնուի ՏԱԿԱԻՆ ՄԵԿ ՈՒՐԻՇ ԱԶԳ՝ ՈՐ ԱՄԷՆ ՕՐ ՈՒ ԱՄԷՆ ՎԱՅՐԿԵԱՆ ԱՊՐԷՐ ԴԵՐԱՍԱՆԻ ՃՇՄԱՐՏԱՊԷՍ ԿԵՂԾ ՈՒ ԳԵՐԵԶՄԱՆՕՐԷՆ ԾԻՏԱՂԵԼԻ ԱՅՆ ԿԵԱՆԶԸ ՈՐ, ԴԱՐԵՐԷ Ի ՎԵՐ, ՄԵՐ ԿԵԱՆԶԸ ԵՂԱԻ, ՄԵՐ ՍՏՐԿԱՑԱԾ ԹՐԶԱՀԱՅԵՐՈՒ ԿԵԱՆԶԸ»:

Միայն բանաստեղծ մը, թատերագիր մը, դերասան մը այսքան զգացումով կրնար արտասանել Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները և խօսքերը:

Եւ իրապէս ալ, քանի մը ամիս յետոյ, կրկին «Վիտէօ -քասէթ» մը ստացանք:

Այս անգամ ստացուածը, թատերագիր Հրանդ Մարգարեանին հեղինակութեամբ և բեմադրութեամբ, 17 Ապրիլ 2005-ին, Նիւ Եորքի «Համազգային»-ի սրահին մէջ ներկայացուած «Երբ Արեւը Կը Լռէ» թատերգութեան տեսաերիզն էր, Ռուբէն Սեւակի ողբերգա-հերոսական կեանքին, անոր իրական պատմութիւնը պատկերացնող:

\* \*

Յունուար 2006-ի վերջին օրերուն էր, երբ Նիւ Եորք-ի «Հայկական Ռատիօ»-ի հիմնադիր Տնօրէն՝ Վարդան Ասլո-էն ստացանք Զալիֆորնիա լոյս տեսնող «Նոր Կեանք» թերթի մէկ թիւին պատճենը, որով կը տեղեկացուէր, թէ UCLA-ի

մէջ 3-12-2005-ին, եօթը նահատակ գրողներու համար գրական գիտաժողով մը կազմակերպուած է:

Եւ այս գիտաժողովին Դոկտ. Անահիտ Զեշիշեան-Արամունի, ներկայացուցած է Ռուբէն Սեւակ մարդը, բժիշկն ու բանաստեղծը, նահատակին «Չարդի Խենթը» ստեղծագործութեան ընդմէջէն:

Եւ դիմեցինք Զալիֆորնիա բնակող մեր բարեկամ Արմէն Արոեանին խընդրելով, որ մեզի դրկէ այս գիտաժողովին տեսաերիզը, զոր ստացանք միջոց մը ետք:

Այս տեսաերիզին մէջ, ուրիշ բանախօսներու շարքին, Անահիտ Զեշիշեան Արամունի կը խօսէր Ռուբէն Սեւակի մասին, և անոր «Չարդի Խենթը» կը ներկայացներ: Ծատ հաճելի էր զինք ունկնդրելը:

Ծատ հանգամանօրէն և անգիր կը խօսէր Ռուբէն Սեւակի և «Չարդի Խենթ»ի մասին, ըլլալով Հայաստան ուսանած գրականագէտ մը:

Եւ ոչ մէկ առթիւ և ակնարկով չկըրկնեց, որ Ռուբէն Սեւակ, երիտասարդ տարիքին նահատակուելուն պատճառաւ, իր տաղանդը չէ կրցած կատարելագործել»:

Ընդհակառակը՝ կրցաւ, մեծ յաջողութեամբ, հերոս նահատակին իսկական արժէքը ցոյց տալ:

Եւ մանաւանդ՝ եղերաբախտ գրողին «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր»ու մասին իր ըսածները շատ յատկանշական էին. «Այստեղ կ'ուզեմ, իմ համեստ կարծիքս յայտնել, Ռուբէն Սեւակի «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր» գրութիւններու մասին:

Անձնապէս, համաշխարհային գրականութեան մէջ, չեմ կարդացած ուրիշ

գրող մը, որ Ռուբէն Սեւակի «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր»ու

նման, հիւանդներու և հիւանդութիւններու մասին այսքան իրատես և, նոյն ատեն, այնքան զգայուն գրութիւններ գրած ըլլայ»:

20 Յունիս 2006-ին էր. Հայաստանի հեռատեսիլէն («Հ-1») բախտը ունեցանք դիտելու շատ հետաքրքրական հաղորդում մը:

Ֆրանսական ասացուածքով՝ ժողովուրդի մասնակցութեամբ “DEBAT” մըն էր տեղի ունեցողը, բանավէճ մը:

Նիւթն էր՝ «Սեռային խնդիրներու մասին տղոց տեղեկութիւն պէ՞տք է տալ, և ինչպէ՞ս...»:

Ակադեմիկոսներ, բժիշկներ, մանկավարժներ, ուսուցիչներ, մայր ու հայրեր, պարման-պարմանուհիներ զարմանազան կարծիք-տեսակետներ յայտնեցին:

Ի զուր սպասեցինք, որ այս մեծապատիւ ակադեմիկոսներէն, բժիշկ ու մանկավարժ և ուսուցիչներէն մէկը, Ռուբէն Սեւակի այս մասին հարիւր տարիներ առաջ գրած «Վեցերորդ զգայարանք» անունը կրող՝ և «Բժիշկին Գիրքէն Փըրցըւած Էջեր»-ու շարքին տեղ գտած հրաշալի գրութիւնը յիշէ և անկէ տող մը մէջբերէ: Անոնցմէ ոչ մէկը անդրադարձաւ բժշկական ճարտար ախտաճանաչումներ բովանդակող և իրենց տեսակին մէջ անգերազանցելի այդ բժշկական ու գիտա-առողջապահական տեսութիւններուն մասին:

Մինչդեռ Սփիւռքի մէջ, հայ ուսուցիչները լաւատեղեակ էին Ռուբէն Սեւակի «Վեցերորդ զգայարանք» գրութեան:

1989-ի Դեկտեմբերին, Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Եկեղեցիի հանդիսասըրահին մէջ, Հիւսիս. Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի (Այժմ՝ Երուսաղէմի Պատրիարք) ներկայութեամբ, Սրբոց Նահատակաց Վարժարանի տնօրէնուհի Տիկին Ջարմինէ Պօղոսեան կարդացեր էր Ռուբէն Սեւակի «Վեցերորդ Ջգայարանք» գրութիւնը, զոր կը մէջբերենք այստեղ իր ներկայացուցած կարեւորութեան և այժմէականութեան համար, զայն վերցնելով «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր»-ու շարքէն:

## Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Զ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Թ

Հանդիպած առաջին աշակերտին հարցուր, թէ որո՞նք են մարդկային զգայարանքները: Առանց տարիքի խտրութեան նո՛յն պատասխանը պիտի ընդունին:

– Տեսանելիք, հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք, շօշափելիք...:

Եւ սակայն ամէն մարդ գիտէ, թէ ուրիշ զգայարանք մ՛ալ կայ, վեցերորդը. այն, որուն մասին չի խօսուիր և որ աշխարհ կը կենսաւորէ:

Դպրոցները կը լռեն. իր անունը անպատշաճ է: Ազատօրէն կարենալ խօսելու համար՝ իր պաշտօնին յարմար անուն մը տանք, ու համարձակօրէն կոչենք զայն սիրելիք:

Բոլոր ճաշակելիքներէն ու հոտոտելիքներէն աւելի կարեւոր է ան: Իրմէ՛ կախում ունի որ երջանիկ կամ թշուառ, առողջ կամ տխեղծ մարդկութիւն մը ծնի:

Կեանքի բոլոր հարցերուն մէջ ամէնէն առաջինն է սեռական հարցը: Բնագետներն ու ընկերաբանները կը համաձայնին կրկնելու, թէ է՛ն ոչժուար խնդիրն է ան:

Բայց ի՞նչ կ’ընենք մենք, ընտանիքի հայրերս:

Կը թողունք որ տղան ինքնիրենը լուծէ այդ կնճռոտ հանգոյցը: Ու մեր կողմէ կը բաւականամանք միայն իր մէջ ներմուծելով զգուանքի ու ամօթխածութեան գաղափարը: Սեռային տգիութիւնը իբրեւ անհրաժեշտութիւն և իբրեւ սրբութիւն կը նկատենք:

Սակայն օր մը պիտի գայ – անխուսափելի՛ օրը – երբ մեր չըսածը փողոցին տղաքները պիտի ըսեն, ու որքա՛ն յոռի կերպով...:

Վա՛յ այն ատեն այդ տղուն:

Ծնողքին դաւադիր լռութիւնը, ընկերներուն ոճրապարտ մեղսակցութիւնը, (→ էջ 3)



**ՈՌԻՔԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ... (Շար. էջ 2-էն)**

արգիլուած բան մը ընելու գիտակցութիւնը իրար միանալով՝ երէկուան հրեշտակը այսօրուան իժիմ պիտի վերածեն:

THE WORLD'S DAILY NEWSPAPER PUBLISHED BY THE NEW YORK TIMES COMPANY PRINTED IN THE USA www.nytimes.com

AMELIA GENTLEMAN  
Anti-poverty, Gandhi-style

PAGE TWO



Torture in Chechnya:  
A Journalist's last report

INTERNATIONAL 13



YouTube whiz.kid  
goes back to school

TECHNOLOGY 11

VENDREDI 13 OCTOBRE 2006 - PREMIERE EDITION N° 1910 - W

tentations Prêt-à-porter printemps-été 2007: au nom de la robe G

# Libération

## Arménie: une loi inutile

La proposition de loi socialiste punissant la négation du génocide arménien a été adoptée hier par l'Assemblée. Page 2

1,10 € 13 OCTOBRE 2006 N° 1910

# LE FIGARO

## Génocide arménien : surenchère à l'Assemblée

Թուրքիոյ Երոպական Միութեան անդամակցութեան: Եթէ Թուրքիա Երոպական Միութիւն մտնէ՝ Երոպայի... «խերը կ'անիծուի»:

Արդէն Երոպայի մէջ ապրող իսլամներուն համարկումը մեծ հարց է:

Այս շատ վտանգաւոր հարցը անտեսել՝ կը նշանակէ քոշարկել իրականութիւնները: Եթէ հարիւր միլիոն իսլամ թուրքերն ալ ընդունուին, ի՞նչ կ'ըլլայ Երոպայի կացութիւնը: Աշխար-

## France acts to outlaw denial of genocide

Turkey denounces preliminary vote on killings of Armenians

Այստեղ կը հրատարակենք, Ֆրանսայի Ներքին գործոց Լախարար և 2007-թ-ի ֆրանսական նախագահական ընտրութեանց աջակողմեան-ներուն առաջնակարգ թեկնածուն NICOLAS

SARKOZY-ի թուրքերուն մասին կատարած շատ յատկանշական յայտարարութիւնը:

«Ես դեմ եմ,



# Hürriyet

13 Eylül 2007 Cuma

Kuruluş: 20 Eylül 1948



**Erivan'dan  
Oyğulor**

# Düşünce soykırımı

հազրական տեսակետով ալ՝ Թուրքիան Ասիա է»:-

Բնական է, որ իբր ֆրանսայի Աերկայ Ներքին Գործոց Նախարար, բոլորէն աւելի ինք՝ Նիքոլա Սարքոզի առիթ ունեցած էր տեսնելու Թուրք-իսլամական վտանգը ֆրանսայի և Եւրոպայի մէջ:



# Milliyet

BASINDA GUVEN

9 Ekim 2005 Pazartesi

# Fransa'ya gidip 'Soykırım yok' diyecek



**Türkiye'de 'Soykırım var' dediği için yargılanıyor**

TRTÜRK'ten 11 Temmuz 2005 de 'Soykırım var' dediği için yargılanıyor. 30 Eylül'den itibaren TRT'de bu ifadeyi kullanmak 3 yıla kadar hapisle yargılanıyor.

27 Հոկտեմբեր 2005-թ.ին, իսլամ-թուրք խուժաններուն ֆրանսական բոլոր քաղաքներուն և մանաւանդ Փարիզի մէջ կատարած բարբարոսութիւնները այսօր, բոլորին յիշողութեան մէջ են:

Եւ 27-10-2005-թ.ին տարեդարձն է այս օրերուն: Եւ այս ցաւալի ու տխրալուշ տարեդարձը, մանաւանդ ֆրանսական կառավարութեան համար, մեծագոյն մտահոգութիւն է:

Եւ նկատի ունենանք որ վերջերս, թուրքերը ամբարտաւանօրէն սպառնացած էին, որ եթէ ֆրանսան հայկական ցեղասպանութիւնը ժխտողները պատժող օրէնքը ընդունի, իրենք, ֆրանսայի մէջ, 27-10-2005-թ.ին եղածին նման, իսլամ խուժանները ոտքի պիտի հանեն և ֆրանսան պիտի կործանեն:

Եւ դժբախտաբար՝ թուրքերուն այս սպառնալիքը սկսաւ իրագործուիլ:

12 Հոկտեմբեր 2006-ին, ֆրանսայի Ազգային Ժողովին կողմէ հայկական ցեղասպանութիւնը ժխտողները պատժող օրէնքին ընդունելէն յետոյ [27-10-2005-], բարբարոսութիւնները սկսան կրկնուիլ ֆրանսայի մէջ:

Այստեղ կը հրատարակենք ֆրանսական "LE MONDE" թերթին 27 Հոկտեմբեր 2006 թիւին Ա. Էջին նկարը, որ գրուած է մեծ տառերով. «Օթոպիւսները յարձակման ենթարկուեցան և հրկիզուեցան Փարիզի արուարձաններուն (→ էջ 12)»

ԱՐԴԵՕՔ ԻՆՉՈՒԻ ԵԻՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ... (Շար. էջ 2-էն)

# Le Monde

www.lamonde.fr

STAMPÉ - N°1930 1.30 € - FRANCE MÉTROPOLE

VENDREDI 27 OCTOBRE 2006

FOUNDATEUR HENRI DE TOULOUSE

## Des autobus attaqués et brûlés en banlieue parisienne

Violences Ces agressions nocturnes semblent avoir été commises par des bandes organisées

Վէջ: Գիշերային այս բարբարոսութիւնները կատարուեցան՝ կազմակերպուած խուժաններու կողմէ»:

\*\*

Եւ խորհիլ, որ թուրքերուն կողմէ այս բարբարոսութիւնները կը կատարուին անոնց Եւրոպական Միութիւն դէռ չմտած:

Կրնա՛նք պատկերացնել ասկէ մեկնելով, որ եթէ թուրքերը Եւրոպա մտնեն, ինչե՛ր և ի՛նչ ողբերգութիւններ կրնան կատարուիլ: Մանաւանդ՝ եթէ վերյիշենք թուրքերուն կատարած ցեղասպանութիւնը Աշխարհի քաղաքակրթութեան կեդրոնը եղած Անաթոլիոյ և Արեւմտեան Հայաստանի մէջ:

Այսօր Անաթոլիան և Արեւմտեան Հայաստանը, հարիւր առ հարիւր թուրք իսլամներով և ասոնց ցեղակիցներով բնակուած երկիր մըն է:

Հակառակ այս զարհուրելի իրականութիւններուն, դէռ կան Պոլսոյ ու Նաեւ (բնական է) Եւրոպայի մէջ իբր թէ «Հայկական ոգի»ով մտաւորականներ և Սինիստ Ամերիկեան և թրքական խմբակին կողմէ ծախու առնուած քաղաքական անձնաւորութիւններ որոնք կը կարծեն, որ թուրքերը Եւրոպական Միութիւն եթէ մտնեն՝ հոն անոնք «Պիտի մարդանան»: Այսինքն՝ գայլը գառնուկի պիտի վերածուի:

Գրիգոր Զօհրապ ըսուած իմաստուն-տխմարը, տաղանդը՝ հաւատացած էր այս առասպելին: Անոր այս ցնորքի հաւասարող միամտութիւնը պատճառ եղաւ, որ թուրքերը... իր գլովսը քարերով ջախջախեն:

Բայց ամէնէն զարհուրելին և անդարմանելին՝ թուրքերուն հետ «Խաղաղ ու եղբայրական» համակեցութիւն հաստատելու գաղափարին իր և ուրիշներուն հաւատալնուն պատճառաւ, Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկուեցաւ, և 3000 տարուան Արեւմտեան Հայաստանը՝ թուրքիայի վերածուեցաւ:

\*\*\*



«Պատմութիւնը կրկնութիւն է» կ'ըսեն: Այո, ճիշդ է... Բայց միայն պատմութեանն դաս չառնող միամիտ-տխմարներուն համար է այս «Իրականութիւն»ը: Մենք, հայերս՝ 11-էն մինչեւ 19-րդ դար, ենթարկուեցանք Օսմանցի թուրքերուն բարբարոսութիւններուն:

... Բայց 1870-թ.ներուն, հաւատացինք Օսմանցի-թուրքերուն "TANZIMAT" ըսուած «Բարենորոգում»ներուն, և Ազգային Սահմանադրութեան գծով բոլորովին Օսմանցիներուն կասյուեցանք:

... Յետոյ՝ Համիտեան ջարդերը կատարուեցան... և պայքարեցանք Ապտիվ Համիտի դէմ...:

Բայց 1908 թուականի կեղծ «Հիւրիյէթ»ի ազատութեան շրջանին, Դաշնակ կարգ մը մոլորած ղեկավարներու և Գրիգոր Զօհրապի պէս իմաստուն-միամիտներու «շնորհիւ», «Եղբայրացանք» օսմանցի-թուրքերուն հետ: ... Եւ այս «Եղբայրութիւն»ը 1915-ի ցեղասպանութեան հասցուց մեզ...:

Եւ կարծեցինք պահ մը, որ այս ցեղասպանութիւնը հայերուն դաս կ'ըլլայ, և անոնք կը հասկնան, թէ ո՞վ է իրենց բարեկամը և ո՞վ՝ իրենց թշնամին:

Բայց՝ ո՛չ: 1918-ին, հերոսական Սարդարապատէն ետք դարձեալ, նոյնպիսի ղեկավարներու «շնորհիւ», բարեկամացանք թուրքերուն հետ և թշնամացանք Ռուսերուն:

Եւ այս՝ թուրքերուն հետ հաստատուած բարեկամութիւնը և Ռուսերուն հետ թշնամանալը, 1915-ին սկսած ցեղասպանութեանէն ետք, Արեւմտեան Հայաստանի արեւելեան կարգ մը շրջաններու կորուստին ալ պատճառ եղաւ:

Եւ 1920-էն մինչեւ 1991-թ.ը՝ 70 տարիներ ամբողջ, փոխանակ միացեալ ուժերով Խորհրդային Հայաստանի կողքին կենալով թուրքին դէմ պայքարելու, դարձեալ «շնորհիւ» նոյն Կուսակցութեան որոշ ղեկավարներուն որոնք կը գործէին Արեւմտեան տէրութիւններու պատուէրով, պայքարեցանք Ռուսերուն դէմ:

... Եւ 1991-թ.ին ունեցանք [իբր թէ] «Ազատ ու Անկախ» Հայաստան մը: Եւ այդ «Ազատութիւն»ի շրջանէն ասդին, սկսանք պարպել Հայաստանը արտագաղթով, որ դե՛ռ կը շարունակուի:

Եւ Հայաստանը առաջին լքողները [ողբերգա-երգիծական ի՛նչ իրականութիւն] 1989-էն մինչեւ 1991-երը Երեւանի հրապարակներուն վրայ «Ազատ Անկախ Հայաստան» պոռագող Տօն Քիշոտ ազգասէրներն էին:

1991-էն մինչեւ 1999-թ.ը Հայաստան շատ դժուար շրջան մը անցուց: Մանաւանդ Արցախի սպտերազմի տարիներուն: Արցախի պատերազմին յաղթական ելան հայերը: Ինչպէ՞ս կատարուեցաւ այս հրաշքը: Որովհետեւ Սպարապետ Վազգէն Սարգսեանը, ներքին գծով, Ռուսերուն օգնութիւնը ապահոված էր:

Եւ շնորհիւ այս թիկունքին և վերածնող հայկական հերոսական պայքարին՝ հայերը յաղթեցին Արցախի մէջ:

Եւ այս յաղթանակէն յետոյ, ստեղծուեցաւ Վազգէն Սարգսեան-Կարէն Տէմիրճեան «Հայրենասիրական Միութիւն»ը:

Եւ Կարէն Տէմիրճեանի և Վազգէն Սարգսեանի միջեւ սկսած սերտ գործակցութիւնը, ազգային-հայրենասիրական առողջ քաղաքականութեան մը շուրջ կազմուած միութիւնը, վերածնունդի մեծ յոյսեր ստեղծած էր որքան Հայաստանի, նոյնքան և աւելի Սփիւռքի հայութեան մէջ:

Բայց, 27 Հոկտեմբեր 1999-ին, Արեւմտեան ծանօթ հետազօտական կազմակերպութեան հայ գործակալները, դաւադրաբար սպաննեցին Կարէն Տէմիրճեանը և Վազգէն Սարգսեանը Ազգ. Ժողովին մէջ:

Բայց, նախ սպաննեցին՝ Սփիւռքի հայութեան մէջ ստեղծուած ՎԵՐԱԾՆՈՒՆ-ԴԻ ՅՈՅՍԵՐԸ:

Եւ այսօր՝ Արեւմտեան պետութիւնները, իրենց դրան առջեւ հասնող թուրք-իսլամական վտանգին դէմ կը շահագործեն հայկական ցեղասպանութիւնը, որ, գրեթէ հարիւր տարիներէ ի վեր, զայն բարձիթող ըրած, մոռցած էին:

Եւ թուրքերուն Եւրոպական Միութիւն մուտքին արգելք ըլլալու համար, հայկական ցեղասպանութեան խնդիրը թուրքերուն առջեւ իբր պատնէշ կը բարձրացնեն:

Բայց ո՞ր ենք մենք այսօր: Հայոց համար ճակատագրական հանգրուաններ եղող 1870-1908-1915-1918-1920-1991-1999- տարիներէն ետք: Ո՞ր ենք այսօր՝ 2006 տարուան աւարտին...:

Այսօր, 1918-թ.ի մահամերձ Օսմանեան կայսրութեան տեղ՝ 2006-ին, 75 միլիոնի հասնող զօրաւոր Թուրքիա մը կայ:

Եւ այս Թուրքիան՝ ուրանալով 1915-թ.ին իր ցեղակիցներուն կատարած հայկական ցեղասպանութիւնը և ասոր պատճառաւ իր բնիկներէն պարպուած Արեւմտեան Հայաստանի հողերուն գողութիւնը իր կողմէ, որպէս [իբր թէ] քաղաքակիրթ պետութիւն, կը պատրաստուի Եւրոպական Միութիւն մտնել ...

Թուրքերը ո՞ր էին, այսօր ո՞ր հասան: Մենք ո՞ր էինք, այսօր ո՞ր ենք:

Թուրքերը վիթխարի պետութիւն եղան: Մինչդէռ մենք՝ հայերս, բոլորովին թուրքերով և կեղծ դաւանակիցներով շրջապատուած, անստոյգ ասպագայի առջեւ կեցած, ժայռերու և քարքարոտ երկիր, փոքր ու աղքատ սպտուրեան վերածուեցանք:

Եւ ովքե՛ր են հայ Ազգին այս ողբերգութիւններուն պատասխանատուները:

Պատմութենէն դաս չառնող, տխմար և մեծամիտ, երբեմն ալ օտարին սայլին լծուած, անոնց կամակատարները եղած հայ առաջնորդները...:

Եւ մենք այս գաղափարները տեսաբար կը կրկնենք և միշտ պիտի կրկնենք՝ իբր մեր ազգային ցաւերէն բարձրացող հառաջանքներ, մինչեւ մեր վերջին շունչը:

**«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ ԿԸ ԶԳԱՄ  
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԽՈՐ ՏԵՆԶԸ»  
ԸՍԱԻ ՀԻՒՊԸՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
«ԱԻԵԼԻՆ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳԾՈՎ»  
ԸՍԱԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2006-ին, Անթիլիասի Մայրավանգ ժամանեց Գերմանիոյ Աւետարանական Եկեղեցիներու պետ Ուֆկանկ Հիւլլըր Եպիսկոպոս, գլխաւորելով գերմանական Եկեղեցիները ներկայացնող պաշտօնական անդամակազմը: Եպիսկոպոսին կ'ընկերասար նաեւ Լիբանանի մօտ Գերմանիոյ դեսպան՝ Դոկո. Մարիուս Հասա:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս և Հիւլլըր Եպիսկոպոս, երկուստեքնորս բարեկամներ ըլլալով, Վեհափառին մէջ տեղի ունեցած շուրջ երկու ժամուան հանդիպումը անցաւ մտերմիկ մրցոյթի մէջ: Արծարծուեցան ընդհանրապէս ժողովուրդներու, Եկեղեցիներու և կրօններու կեանքը յուզող իրավիճակները, Լիբանանէն ներս թէ Եւրոպական ու Արեւմտեան զանազան երկիրներու մէջ: Խօսակցութեանց առանցքը հանդիսացաւ հայ ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու վերադարձումը հարցը. և այդ ծիրէն ներս՝ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցելու հրատարակած ինքնաշարժը: Քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան անհրաժեշտութիւնը եւս շեշտուեցաւ. աշխարհի քաղաքական նոր դրուածքը նկատի ունենալով: Միջին Արեւելէն ներս քրիստոնէական Եկեղեցիները սամբազնուելու և քրիստոնէական Եկեղեցիներու անցեալի թէ ներկայի բերած վկայութիւնը լուսարձակի տակ բերելու անհրաժեշտութիւնը եւս խօսակցութեան նիւթ դարձաւ:

Հիւլլըր Եպիսկոպոս իր կարգին, Վեհափառ Հայրապետին հետ բաժնեց Լիբանանէն ներս իր ունեցած հանդիպումներէն քաղած տպաւորութիւնները: Նշեց, որ ան, նոյն օր հանդիպում ունեցած էր նաեւ Լիբանանի Վարչապետին հետ:

Անթիլիասի Կաթողիկոսարան տուած այս երրորդ այցելութիւնը, Հիւլլըր Եպիսկոպոս սլաւոնական որակեց, ի սլաւոն իրեն Վեհափառ Հայրապետին տուած պաշտօնական ճաշկերոյթին ընթացքին: Մայրավանգի սեղանատան մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, Միաբան հայրեր, պետական նախարարներ և երեսփոխաններ, սրբային քաղաքական կուսակցութեանց և Միութեանց ներկայացուցիչներ, Միջ-Եկեղեցական և այլ յանձնարարներու անդամներ և սրբային կառոյցներու պատասխանատու անձնաւորութիւններ:

Ուղղյնի եղբայրական իր խօսքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս, հպանցիկ ակնարկով յիշեց երկուստեքնորս իր գործակցութիւնը Հիւլլըր Եպիսկոպոսին հետ. միջ-Եկեղեցական գործունէութեան շրջագծէն ներս: Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ անդրադարձաւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցին մէջ Գերմանիոյ Եկեղեցիներու որդեգրած յանդուգն բանաձեւին և կատարած յայտարարութեան, գլխաւորութեամբ Հիւլլըր Եպիսկոպոսին, և այս առիթով իր խօսքը ուղղելով ճաշկերոյթին մասնակից Գերմանիոյ դեսպանին, ըսաւ, թէ հայ ժողովուրդը աւելին կը սպասէ Գերմանիայէն, իրրեւ մարդկային իրաւանց պաշտպան երկիր: Այս առիթով Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոսին նուիրեց Անթիլիասի մէջ Հայկական Ցեղասպանութեան 90-ամեակի առթիւ հրատարակուած «Ձայներ Գերմանիայէն» գերմաներէն լեզուով հատորը. ուր ներկայացուած են շուրջ 50 գերմանացի աստուածաբաններու, քաղաքագետներու, մտաւորականներու, ցեղասպանագէտներու, մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութեանց ներկայացուցիչներու արտայայտութիւնները Հայկական Ցեղասպանութեան մասին:

Ճաշկերոյթի սուարտին, Հիւլլըր Եպիսկոպոս խօսք անցնելով, անդրադարձաւ այն նուիրումին ու երախտարժան աշխատանքին, զոր Արամ Ա. Կաթողիկոս ընծայած էր միջ-Եկեղեցական շարժման ընդհանրապէս, և Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին՝ մասնաւորաբար: «Միջ-Եկեղեցական գործունէութեան ծիրէն ներս, երեսուն տարիներ ետ պէտք է երբայ տեսնելու համար մեր բարեկամութեան սկիզբը: Այս շարժման առաջնութեան նկատմամբ Արամ Ա. Կաթողիկոսի բարձրագոյն աստիճանի լրջութիւնը, արժանի է ամէն բարձր գնահատման» ըսաւ ան: Ասլա, Եպիսկոպոսը խօսեցաւ Հայ ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն վերադարձումը գծով կատարուած ճիշդութեան մասին: Անձնապէս տուած ըլլալով Համաշխարհային Բ. սլաւոնաբազմի տարիներուն, իր ընտանիքին և բնակած գիւղին դառն փորձառութիւնը օրինակ բերաւ, ցոյց տալու թէ ինք կը զգայ հայ ժողովուրդին ցաւն ու սրտաբարեան հասնելու դատին անձամանցելիութիւնը. «Հայ ժողովուրդին հետ կը զգամ արդարութեան հասնելու խոր տենչը» ըսաւ ան. շեշտելով Հայ Դատին իր գորակցութիւնը:

Տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում Վեհափառ Հայրապետին և Հիւլլըր Եպիսկոպոսին միջեւ: Ապա, Գերմանիոյ Եկեղեցիներու Պետը իր շխտումով այցելեց Ապրիլեան Նստաւանակաց Ցուշարձան, ուր Հիւլլըր Եպիսկոպոս աղօթք արտասանեց հայ ժողովուրդի մէկ ու կէս միլիոն նստաւանակաց հոգիներուն խաղաղութեան համար:

Հայ և գերման, ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան և Գերմանիոյ Աւետարանական Եկեղեցիներուն միջեւ գործակցութեան նոր հեռանկարները ուրուագծուեցան սոյն այցելութեամբ, որոնք հետագային սլաւոն արդիւնաւորութիւն երկու ժողովուրդներու կեանքէն ներս:



**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
SÖZDE TÜRKİYE**

**YALANLAR ÜZERİNE KURULMUS TÜRKİYE DENİLEN  
UYDURMA DEVLETİ AYAKTA TUTAN GÜÇLER  
KİMLERDİR?**

**VE BU UYDURMA DEVLET NASIL OLDU DA  
BUGÜNE KADAR AYAKTA KALABILDI?**

TÜRKİYE-Yİ AYAKTA TUTAN EN BÜYÜK KUVVET, YALCIN KÜÇÜĞÜN DE DEDİĞİ GİBİ. TÜRKİYE DENİLEN DEVLETİN KURULMASINDA EN BÜYÜK ROLÜ OYNIYAN DÜNYA PARA BABALARI TESKİLATIDIR.

DÜNYA PARA BABALARI TESKİLATI TÜRKİYEYİ BUGÜNE KADAR İKİ KUVVET SAYESİNDE İDARE EDİYOR.

1.- TÜRK ORDUSU

2.- TÜRK BASINI

1.- TÜRK ORDUSU- GERÇEKTE İTTİHAT VE TERAKKİ PARTİSİNİN DEVAMI OLAN ATATÜRKÇÜ İNANCIN UYGULAYICISIDIR. VE ATATÜRKÇÜLÜK İNANCI: ALMAN NAZİLERİNDEN DAHA ASIRI İRKÇİ BİR İDEOLOJİDİR.

2.- TÜRK BASINI- TÜRK GAZETELERİNDE YAYINLANAN KASITLI VE GÜDÜMLİ HABERLERİN YANINDA HER BİR GAZETEDEN EN AZINDAN YIRMI KADAR FIKRA YAZARI DEVLETİN SİYASETİNE AYAK UYDURAN YAZILARLA TÜRK KAMUOYUNU OLUSTURURLAR.

VE BU FIKRA YAZARLARININ SON SENELERDEKİ BASLICA KONULARI :

1.- ERMENİ SORUNU

2.- KÜRT SORUNU

1.- ERMENİ SORUNU

GERÇEKTE TÜRKİYEDE BİR ERMENİ SORUNU OLMAMASI LÂZIMDI.

ÇÜNKÜ TÜRKLER 1915-DE ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATARAK ERMENİ SORUNUNU KÖKÜNDEN HALLETTİLER.

VE DOĞU ANADOLU DEDİKLERİ, VE 1915-E KADAR BÜTÜN DÜNYA HARİTALARINDA BATI ERMENİSTAN OLARAK GÖSTERİLEN TOPRAKLARDA ETNİK TEMİZLEME YAPARAK ERMENİLERİ YOK ETTİLER.

VE BOSALAN ERMENİ TOPRAKLARININ ÜZERİNDE : BUGÜNKÜ UYDURMA TÜRK DEVLETİNİ YARATTILAR.

VE 1915 ERMENİ SOYKIRIMINDAN BUGÜNE KADAR 91 SENE GEÇTİ.

VE NİHAYET BATI DEVLETLERİ ERMENİ SOYKIRIMINI RESMEN TANIMAYA BAŞLADILAR.

ERMENİ SOYKIRIMINI BATILI DEVLETLERİN RESMEN TANIMASI: TÜRKLERİ ÇOK ZOR DURUMA SOKTU.

TÜRK RESMİ MAKAMLARI VE YAYGARACI TÜRK GAZETELERİ ERMENİ SOYKIRIMI SORUNUNU SAVSAKLAMAK VE UYUTMAK İÇİN: "MESELEYİ TARİHÇİLERE BIRAKALIM" DİYORLAR.

SÖZDE, GERÇEKLERİ TARİHÇİLER ORTAYA ÇIKARACAKMIS.

FAKAT GERÇEKLER NASIL ORTAYA ÇIKABILIR ?

SİZ “ERMENİ SOYKIRIMI OLMUSTUR” DİYEN ORHAN PAMUK, HRANT DINK GIBI YAZARLARI, VATAN HAINI DİYEREK HAPSE MAHKÛM EDİYORSUNUZ.

BU DURUMDA HANGİ TÜRK TARİHÇİSİ RESMİ TÜRK GÖRÜSÜNE KARSİ ÇIKABILIR, VE “ERMENİ SOYKIRIMI OLMUSTUR” DİYEBİLİR.

SIZIN, ERMENİ SOYKIRIMINI INKAR ETMENİZE, VE ERMENİ SOYKIRIMI OLMAMISTIR DİYEN YALANLARINIZA KARSİ HER ZAMAN SÖYLEDİGİMİZ SÖZLERİ TEKRAR EDECEGİZ:

SIZIN DOĞU ANADOLU DEDİGİNİZ, FAKAT BÜTÜN DÜNYA HARİTALARINDA, 1915-E KADAR BATI ERMENİSTAN DENİLEN TOPRAKLARDA DÖRT BİN SENEDENBERİ VE 1915-E KADAR ÇOGUNLUKLA ERMENİLER YASİYORDU.

BUGÜN BU TOPRAKLARDA BİRTEK ERMENİ YOK.

NE OLDU BATI ERMENİSTANDAKİ ERMENİLERE ?

DÖRTBİN SENELİK BİR MİLLETİ İKİYÜZBİN KİLOMETRE KARELİK VATANINDAN ÇIKARARAK ETNİK TEMİZLEMeye VE SOYKIRIMINA UGRATAN TÜRK VAHSETİNİN BENZERİNİ: DÜNYA TARİHİNİN HIÇ BİR DEVRİNDE BULAMAZSINIZ.

VE SİZ “YAVUZ HIRSIZ EV SAHİBİNİ BASTIRIR ZİHNİYETİ İLE BÜTÜN GERÇEGLERİ INKAR EDİYORSUNUZ.

VE SONUNA KADAR DA INKAR EDECEKSİNİZ. NE ZAMANA KADAR ?

SON ZAMANLARDA UYDURMA TÜRKİYE TOPRAKLARININ ETRAFINDA BÜYÜK DEĞİŞİKLİKLER OLUYOR.

SIZIN GÜNE DOĞU HUDUDUNUZDA, İRAKIN KUZEYİNDE BÜYÜK BİR KÜRDİSTAN DEVLETİ KURULDU.

VE BU KÜRT DEVLETİNİ KURANLAR KİMLER, BİLİRMİSİNİZ ?

UYDURMA TÜRK DEVLETİNİ YARATAN BÜYÜK PARA BABALARI TESKİLATI.

YANI BUGÜNE KADAR SİZİ AYAKTA TUTAN VE BÜTÜN TEHLİKELERE KARSİ KORUYAN TESKİLAT.

VE BİR MÜDDET SONRA BU YENİ KURULAN KÜRT DEVLETİ, SIZIN TÜRKİYE DEDİGİNİZ UYDURMA DEVLETTE YASİYAN 30 MİLYONDAN FAZLA KÜRTLERLE BİRLESECEK.

VE TÜRKİYE PARÇA PARÇA OLACAK. NİÇİN Mİ ?

ÇÜNKÜ SİZ HIÇ DEĞİŞMEDİNİZ.

SİZ BUGÜN HÂLÂ, VİYANA KAPILARINA KADAR İLERLİYEN YAGMACI VE BARBAR OSMANLILARSINIZ.

VE FIRSATINI BULURSANIZ, OSMANLI TARİHİNİN İLK GÜNLERİNDEN 1915-E VE 1923-E KADAR GERÇEKLEŞTİRDİGİNİZ SOYKIRIMLI EMPERYALİST YAYILMA SİYASETİNE DEVAM EDERSİNİZ.

ÇÜNKÜ SİZ BUGÜNE KADAR İŞLEDİGİNİZ SUÇLARIN CEZASINI HIÇ ÇEKMEDİNİZ.

EVET, DÜNYA PARA BABALARI TESKİLATI O UYDURMA TÜRK DEVLETİNİ YARATTI.

FAKAT AYNI PARA BABALARI TESKİLATI, ÇOK BÜYÜYEN VE OSMANLI YAYILMA SİYASETİ RÜYALARI GÖREN TÜRKİYEYİ CEZALANDIRACAK.

YANI TÜRKİYE DENİLEN UYDURMA DEVLET: PARÇA PARÇA OLACAK..

Յ. Չ.

**ԿԸ ԿՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
[ Ի Ր Ր Թ Է ] Թ Ո Ւ Ր Ք Ի Ա**

**ՍՈՒՏԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ԹՈՒՐԹԻԱ ԿՈՉՈՒՈՂ  
ՇԻՆԾՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՈՏՔԻ ՊԱՀՈՂԸ ՈՐ ՈՒԺԵՐՆ ԵՆ  
...ԵՒ ԱՅՍ ՇԻՆԾՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ  
ԻՆՉՊԷՍ ԿՐԾԱԻ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼ**

Թուրքիան կանգուն պահող ամենամեծ ուժը YALÇIN KÜÇÜK-ին ալ ըսածին պէս՝ Թուրքիա ըսուած պետութեան հիմնարկութեան մէջ մեծագոյն դեր կատարողը Համաշխարհային Դրամատէրերու կազմակերպութիւնն է:

Այս Համաշխարհային Դրամատէրերու կազմակերպութիւնը՝ Թուրքիան, հետեւեալ երկու ուժերուն շնորհիւ կը ղեկավարէ.

1.- Թրքական բանակը:

2.- Թրքական մամուլը:

1.- Թրքական բանակը- իրականութեան մէջ “İTTİHAT VE TERAKKI” կուսակցութեան շարունակութիւնը եղող Աթաթիւրքին գաղափարախօսութեան գործակատարն է:

Եւ Աթաթիւրքեան գաղափարախօսութիւնը՝ գերմանական NAZI-ներէն աւելի ծայրայեղ-ցեղապաշտ մտայնութիւն մըն է:

2.- Թրքական մամուլը- Թրքական թերթերուն մէջ հրատարակուող կանխամտածուած և կաղապարուած լուրերու կողքին՝ ամէն մէկ թերթի մէջ քսանէ աւելի հրապարակագիրներ, ժողովուրդին մէջ հասարակաց կարծիք կը ձեւաւորէ:

Եւ այս հրապարակագիրներուն վերջին տարիներուն առաջնակարգ նիւթն է՝

1.- Հայկական հարցը:

2.- Քրտական հարցը:

1.- Հայկական հարցը- իրականութեան մէջ, Թուրքիոյ տարածքին, հայկական հարց մը պէտք չէր որ ըլլար: Որովհետեւ Թուրքերը, 1915-ին հայերը ցեղասպանութեան ենթարկելով՝ հայկական հարցը հիմնովին «լուծեցին»:

Եւ Թուրքերը՝ Արեւելեան “ANADOLU” կոչուող և մինչեւ 1915 թուականը բոլոր քարտէսներուն մէջ «Արեւմտեան Հայաստան» ըլլալով ցուցադրուող հողերուն վրայ, ցեղային ամբողջական մաքրագործում կատարելով, բոլոր հայերը բնաջնջեցին:

Եւ պարպուած հայկական հողերուն վրայ, այսօրուան շինծու Թրքական պետութիւնը ստեղծեցին:

Եւ 1915-ի հայկական ցեղասպանութեան թուականէն ի վեր, մինչեւ այսօր, 91 տարիներ անցան...

...Եւ վերջերս Արեւմտեան պետութիւնները, հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ծանչնալ սկսան:

Արեւմտեան պետութիւններուն հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ծանչնալը՝ Թուրքերը շատ դժուար վիճակի մատնեց:

Թրքական պաշտօնական հաստատութիւնները և պոռոտախօս Թրքական մամուլը, հայկական ցեղասպանութեան հարցը յետաձգելու և մոռցնելու համար, «Այս հարցը պատմաբանները թող ուսումնասիրեն» ըսել սկսան:

Իբր թէ իրականութիւնները՝ պատմաբանները մէջտեղ պիտի հանեն եղեր:

Բայց իրականութիւնները ինչպէ՞ս մէջտեղ կրնան ելլել, երբ դուք «Հայկական ցեղասպանութիւն եղած է» ըսել համարձակող ORHAN PAMUK-ի և Նիւ Իորքի Նման գրողները դաւաճանութեան յանցանքով բանտարկութեան կը դատապարտէք:

Այս վիճակին մէջ ո՞ր մէկ թուրք պատմաբանը թրքական պաշտօնական տեսակէտին դէմ կրնայ ելլել և «ցեղասպանութիւն եղած է» ըսել:

Ձեր հայկական ցեղասպանութիւնը ուրանալուն և «հայկական ցեղասպանութիւն չէ եղած»ի նման սուտ յայտարարութիւններուն դէմ՝ մեր միշտ տուած պատասխանը ջանանք կրկնել՝

«Ձեր Արեւելեան “ANADOLU” ըսած, բայց բոլոր բարտէսներով մինչեւ 1915 թուականը «Արեւմտեան Հայաստան» ըլլալով ներկայացուած հողերուն վրայ, չորս հազար տարիներէ ի վեր և մինչեւ 1915 թուականը, մեծամասնութեամբ հայեր կ'ապրէին:

Այսօր, այդ հողերուն վրայ, մէկ հատ հայ չկայ:

Ի՞նչ եղան Արեւմտեան Հայաստանի մէջ ապրող հայերը:

Չորս հազար տարուան Ազգ մը, իր երկու հարիւր հազար բառ. քիլոմէթր տարածքով հայրենիքին մէջ ցեղասպանութեան ենթարկող և այդ հողերուն վրայ ամբողջական ցեղային մաքրագործում կատարող թրքական վայրագութեան նմանը՝ Աշխարհի պատմութեան ոչ մէկ շրջանի մէջ կրնաք գտնել:

Եւ դուք «Ամբարտաւան գողը՝ տանտէրը կը վախցնէ» մտայնութեամբ, այս բոլոր իրականութիւնները կ'ուրանաք:

Եւ մինչեւ վերջ ալ պիտի ուրանաք... մինչեւ ե՞րբ...:

Վերջին շրջաններուն, շինծու Թուրքիոյ հողերուն շուրջ, մեծ փոփոխութիւններ կատարուիլ սկսան:

Ձեր հարաւ-արեւելեան սահմանին վրայ, Իրաքի հիւսիսային մասին մէջ, մեծ քիւրտիստան մը կազմուեցաւ:

Եւ այս քրտական պետութիւնը ովքե՞ր հիմնեցին. գիտէ՞ք:

Ձեր շինծու թրքական պետութիւնը ստեղծող Համաշխարհային Դրամատէրերու կազմակերպութիւնը:

Այսինքն՝ ձեզ մինչեւ հիմա ոտքի բռնող և բոլոր վտանգներուն դէմ պաշտպանող կազմակերպութիւնը:

Եւ միջոց մը յետոյ, այս նոր կազմուած քրտական պետութիւնը՝ ձեր Թուրքիա կոչուած շինծու պետութեան մէջ ասորող 30 միլիոնէ աւելի քիւրտերուն պիտի միանայ:

Եւ Թուրքիան կտոր-կտոր պիտի ըլլայ:

Ինչո՞ւ, գիտէ՞ք:

Որովհետեւ դուք, բնաւ չէք փոխուած: Դուք, նոյնիսկ այսօր, մինչեւ Վիէնայի դռներուն առջեւ յառաջացող, թալանող և բարբարոս Օսմանցիներն էք:

Եւ եթէ առիթ գտնէք, Օսմանեան կայսրութեան առաջին օրերէն սկսեալ մինչեւ 1915 և 1923 թուականները ձեր կատարած ցեղասպանութիւններով յառաջացած ծաւալողական քաղաքականութիւնը կը շարունակէք:

Որովհետեւ դուք, մինչեւ այսօր, ձեր գործած բարբարոսութիւններուն պատիժը չէք կրած:

Այո. Համաշխարհային Դրամատէրերու կազմակերպութիւնը՝ այդ շինծու թրքական պետութիւնը ստեղծեց:

Բայց, նոյն Համաշխարհային Դրամատէրերու կազմակերպութիւնը՝ շատ մեծցող և Օսմանեան ծաւալման երազներ տեսնող Թուրքիան պիտի սպտժէ:

Այսինքն, Թուրքիա կոչուող շինծու պետութիւնը կտոր-կտոր պիտի ըլլայ:

Ն Ա Մ Ա Ա 2 5 1

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ուրեմն, շարունակելով մեր պտոյտը «Մարմարա»-յի «Տիրոջը Այգիին Մէջ», «գով առուակներու եզրին», կը հանդիպինք մեր վաղեմի բարեկամին՝ Կարպիս Վարդանեանի որդւոյն՝ բանաստեղծ Յարութ Վարդանեանին [14/9/06]: Խմբագիրը, Պրն. Ռ. Հատտէճեան հանգամանօրէն կ'անդրադառնայ, մեր հայրենակիցին, Յ-րդ էջը ամբողջովին իրեն տրամադրելով, և ուր կ'ըսուի՝ «Նորոգի բանաստեղծը, կը թուի թէ իր մտահոգութիւնն է ինքնատիպ ըլլալ - և քալել ուրիշներու չգործածած ուղիներու վրայէն... գործածելով անսովոր բառեր... նոր բարդ բառեր ստեղծել, և երբեմն ալ գործածել երկրաչափական պատկերներ...» եւայլն:

Պէտք է յիշել, որ Պրն. Յարութ Վարդանեան երկրաչափ է և նոյն առեւն ալ շնորհալի դաշնակահար, և իր ոսպնեակները իրար բաղադրելով, ստացած է բոլորովին նոր ոսպնեակ մը, և այդպէս ալ կը դիտէ աշխարհը, մեզմէ բոլորովին տարբեր տեսանկիւնէ: Առաւել՝ Հալէպցի է և Այնթապցի ծնողքի գաւակ, որոնք իրենց ազդեցութիւնները ձգած ըլլալու են մեր երիտասարդ, նորահնար և նորահրաշ բանաստեղծին վրայ:

Երբեմն թիւեր ալ կը գործածէ. օր. մՑ = մութ, որ սկիզբը հաճելի և ախորժելի կրնայ թուիլ - բայց քիչ ետք մեզի կը յիշեցնէ Յ. Պարոնեանի նշանաւոր խօսքը - «Հրաժարիմք ի թիւաբանութենէն և ամենայն կոտորակաց նորա»: Նկատելով որ Պրն. Յարութը երկրաչափ է, ունի կարգ մը վերնագիրներ - Ալճեպրայի հաւասարութիւնները (equation) յի-

շեցնող: Օրինակ - Սէր = Ամպ, Մարդ = Ձուկ, եւայլն: Հատ մըն ալ մենք աւելցնենք - Հայր + Մայր = Զաւակ, ինչ որ կրնայ ծառայել իբր խորագիր ասպագայ բանաստեղծութեան մը: «Մարմարա»-յի նոյն թիւին մէջ կը կարդանք երկու շատ գեղեցիկ կտորներ համբոյրի մասին: Կը փափաքիմ յիշեցնել մեր Յարութին որ մոռցած է տարբադարել այս բարդ բառը - և երեւան հանել «համ» և «բոյր» բառերը, միշտ հաւատարիմ նորարարութեան - որուն սիրահարն է ան:

Իսկ կարգ մը բանաստեղծութիւններ ալ կան, զոր մէկ կողմ դրի, և երբ օր մը Հալէպ երթամ, միասին պիտի տանիմ որ միասին ընթերցենք և բացատրուինք:

Ամենայն դէպս, ջերմօրէն կը շնորհաւորենք մեր երիտասարդ հայրենակից Յարութ Վարդանեանը, որ տակաւին ջերմացնէ մեր բանաստեղծութեան ածուն, ազգային և գիտական ներշնչումներով - հոգ չէ թէ՛ «Եռանկիւն Արեւով»:

\* \*

Օսմանեան շրջանի թափուներուն հրապարակումը անպատեհ է եղեր: [20/9/06]: Անշուշտ՝ պիտի ըսենք՝ «Գող սիրտը դող»: Հայրս և շատ ուրիշներ - շատ փոքր էին «թափուի» մասին մտածելու համար - Իսկ անոնք որոնք կրնային իրենց հետ ունենալ այդ «թափու»ները - մի քանի կայան ետք - արդէն մտած էին իրենց յաւիտենական հանգիստը: Ենթադրենք, որ մի քանի «թափու» ունեցողներ կան - պիտի կարենայի՞ն վերստանալ իրենց ստացուածքները: Թրքական կառավարութիւնը - շատ վարպետ է ջուրին վրայ օրէնքներ շարադրելու մէջ:

\*

## Ն Ա Մ Ա Ա 2 5 1

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեր ազգային օրհներգի մասին ալ յօդուածներ կան: Ըստ իս, ասիկա «բազում աղմուկ՝ վասն ոչինչի» է- թէև Շէյքսպիրեան խորք չունի: Ինչ որ ունինք այժմ, բացարձակապէս անընդունելի է- թէև մեզի «կլլեցուցին» օրին: Ականջը խօսի Լ. Ճգնաւորեանին: Յուսամ, որ մէկն ալ անոր ականջը քաշէ: [Պրն. Ե. Ազատեանը արդէն ականջը քաշեր է]:

Իսկ ՀՀ-ի կառավարութեան մրցում կազմակերպելն ալ ազգային «ղարմաղալ» մըն է- և ժամանակի և նիւթի կորուստ: Ունինք Ա. Խաչատուրեանի փառաւոր երաժշտութիւնը - իսկ բառերն ալ կարելի է յարմարցնել- կարգ մը ականջի զգայուն թմբուկներ ունեցողներուն համար:

Ուրեմն, եթէ... լսող ականջներ կան- այն ատեն մեր այրերը հայրենի երկրին, աւելի օգտակար և անմիջական գործեր ունին կատարելիք:

Յիշատակութիւն կայ նաեւ Խ. Պապիկեան Հիմնադրամին մասին, որ 4<sup>1/2</sup> միլիոն տոլար է, և որուն տոկոսը՝ 250,000 տոլար, Արամ Վեհափառը արդէն դպրոցներու յատկացուց: Չենք գիտեր ի՞նչ ծելով: Մենք արդէն օրին, մեր խօսքը ըսած էինք և կը յուսանք, որ «Չայն բառբարոյ յանապատի» չմնայ ան, [Սահարա թէ՞ Կօպի - անապատ- յայտնի չէ]: Ըստ ընկալելալ սովորութեան: Ծնորհակալութիւն այն ճարտար մատներուն, որոնք մեր գրութիւնը կը դնեն Վեհափառին սեղանին վրայ:

Եւ լաւ լուր մըն ալ - 26/8/06- Լաս Վեկասի մէջ, ցեղասպանութեան արձան մը պիտի կանգնեցնէ տեղւոյն հայութիւնը: Բայց այնպէս մը շինեն - որ ան չգողցուի- ինչպէս վերջերս պատահեցաւ Ֆրանսայի

մէջ, ի յարգանս ֆրանսական խորհրդարանին առած այն որոշման մասին, թէ կարելի չէ ժխտել ցեղասպանութիւնը: Ի դէպ՝ այս որոշման, դարձեալ մերկացանք ծովափ չհասած: Այս որոշումը, տակաւին սէտք է վաւերացուի Ծերակոյտին կողմէ և ապա ստորագրուի Պրն. Ծիրաքի կողմէ: Մեզմէ անոնք որոնք դեռ կը հաւատան, թէ Պրն. Ծիրաքը իրենց գրպանն է- «Չենթէտէ քէքլիկ» [կագաւը՝ պայուսակին մէջ]- կը սխալին:

Այսքանն ալ՝ մեր ազգային շուտիկութեան մասին:

Իսկ մեր հայրենակիցներէն անոնք որոնք գումարներ պիտի կորսնցնեն կամ շահին Լաս Վեկասի մէջ- առիթը պիտի ունենան արձանին մօտ փութալ և յիշել իրենց... հայութիւնը:

Ծնորհակալութիւն այս գաղափարը յղացողներուն:

\*\*


Վերջերս կորսնցուցինք յետ-պատերազմեան մեր լաւագոյն բանաստեղծուհիներէն մին՝ Սիլվա Կապուտիկեանը, որուն «Խօսք Իմ Որդուն»ը՝ մեր երիտասարդութեան - «Հայր Մեր»ին պէս բան մըն էր- և որ պիտի դիմանայ դարերու հոլովոյթին: Մեր տեղական մամուլը շատ «ժլատ» էր [մեղմ ասած]- իր գեղումներուն մէջ, այս առասպելական բանաստեղծուհիին մահուան առթիւ: Իսկ «Մարմարա» գոնէ 7-8 թիւերու մէջ հանգամանօրէն և բծախնդրօրէն կ'անդրադառնայ այս մեծ կորուստին, ինչպէս վայել է: Գրութիւն մըն ալ ունի Զ. Պօղոսեան, որ «20-րդ դարու Հայոց Մայր Իշխանուհին» կը կոչէ Սիլվան:

Հայաստանի մէջ աւելի ողբալի եղած է «յարգանքը»- այս «Մեծ Տիկնոջ» հանդէպ: Նախագահը՝ բացա-

Ն Ա Մ Ա Կ 2 5 1

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեծ Եղեռնի Չոհեբու Յիշատակից՝ 91-Ամեակի Առթիւ



«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ»-ԻՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
Երեք անգամ գիրքեր՝

Թրքերեն - Հայերեն - Ֆրանսերեն

Իրաֆանջիրին մեջ՝ 110 գրուփուցներ (2001-2005):

Մեկ կը հաւատանք, որ անոնց մէջ տեղ գտած ամէն մէկ գրուփուց  
ցեղասպան բուրփին կուրծփին մխրճուած դաշոյն մըն է:

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇ .ՏԱԿԻ ՏՈՒՆ»

Ն Ա Մ Ա Ա 2 5 1

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

կայ: Իսկ Գրողներու Միութեան Նախագահը՝ սլարգ շառիկով մը «Պատուոյ պահակ» կեցած: Ճշմարիտ է, որ այդ օրերուն -օղը շոգ էր- տօթակէզ տեսակէն, բայց... յարգանքի ջերմաչափը սառուցեալ գօտի ցոյց կու տար -Ափսո՛ս- մէյ մըն ալ ե՞րբ պիտի մահանայ կենսայորդ և հայրենասէր այս բանաստեղծուհին...:

\*\*

31/8/06 Պրն. Ռ. Հատտէճեան գրախօսական մը ունի Պետրոս Հաճեանի «Կարկէմիշ» հատորին մասին: Զանի մը օր ետք, ուրիշ գրախօսական մըն ալ կայ նոյն հեղինակին «100 Պատմութիւն» գիրքին մասին: Երկու գրութիւններն ալ մէկ շունչով կարդացի -և սրտանց կը յանձնարարեմ, որ անոնք որոնք գրախօսական կը գրեն և կամ ձգտում, տաղանդը ունին- անսլայման մէյ մը կարդան այս զոյգ գրախօսականները, որ իմանան թէ ինչպէս կը գրուի գրախօսական մը: Հեղինակին հասցէն ալ դրուած էր: Փորձութիւնը ունեցայ գումար մը դրկել և մի քանի տասնեակ հատորներ ապսպրել: Բայց իմացայ, թէ գիրքը Հալէպ տպուած էր- և ուրեմն ...հարցը լուծուած էր:

**Կարճ լուրեր:** Աղքատին լուման-թուրքիա որոշած է 10 միլ. տոլար յատկացնել կամ յատկացուց Լիբանանի վերաշինութեան: Շնորհակալութիւն: Յաճախ կը կարդամ մահազոյներ- որոնք մերիներէն տարբեր են: Հանգուցեալին նկարը անսլայման հոն կ'երեւի -և Գաւառացիներու սլարագային կը յիշուին մշտեցի կամ Սեբաստացի ըլլանին- կայ նաեւ «ցաւակցութեան տոմարի արձանագրութեամբ» դրութիւնը, և կայ նաեւ «կիրիկնամուտի արարողութիւնը»: Նման բաներ, մեր մօտ, մոռցուած են, ինչպէս նաեւ ուրիշ շատ աւանդութիւններ:

Հետաքրքրական է տեսնել նաեւ, ուսուցչական կազմերու նկարներ, որոնք դպրոց-ժողովուրդ կապը կը սերտացնեն: Մեր մամուլն ալ նման նկարներ պէտք է լոյս ընծայէ, + մեր կրօնաւորներուն նկարները -նոյն մտահոգութեամբ: Նման առաջարկ մը ըրած էինք «ատենօք» -բայց Անթիլիաս «Նօ ալտըրմէյշն»ի կողմնակից է:

Եւ տակաւին՝ տեղեկութիւններ յաջողակ աշակերտներու մասին- առանց նկատի առնելու դասարանները:

Վերջին «տաք» լուրը- Աղասին-Նշանաւոր tennis [գնդակախա՞ղ] խաղացող մը- որ բազմաթիւ անգամներ համաշխարհային փոխյեանութեանց տիրացած է, վերջապէս ընդունած է որ ինք հայ է, 31 միլիոն տոլար շահել է ետք: Փա՛ռք Աստուծոյ:

Իր հայրը՝ Էմմանուէլ Աղասեան, որ ԱՄՆ հաստատուել է ետք կուփամարտիկ եղած է, երբեք չէ ընդունած իր հայութիւնը: Ուրիշ «թեմիսմէն» մը՝ Դաւիթ Նալպանտեան, առաջին օրէն հպարտօրէն յայտարարած էր իր հայութիւնը: Դարձեալ՝ Փա՛ռք Աստուծոյ:

\*\*

Առաստակ- կը նշանակէ՝ թէյ եռացնելու աման -ոմանք «թէյնիկ» կը կոչէին- որ քիչ մը շինծու է- կամ ալ՝ հայաստանցիներու գործածած «սամովար» բառն է: Ընտրութիւնը կը ձգենք մեր տանտիկիներուն:

\*\*

**Դարասկիզբի սպասուհիներ-**  
- Դոճասպանուհին- երիտասարդ սպասուհիին՝

- Այս ո՞րքան մտերմացեր ես տիրոջդ հետ. դո՛ւն իրեն կը հրամայես կոր, փոխանակ ան քեզի... Տիկինը ի՞նչ կ'ըսէ կոր ասոր...

- Շիտակը՝ տիկինիս կը մեղքանամ կոր. չէ՛նէ պիտի ճամբեմ բոլորովին...:



**Ս**փյուռփի հայսնի ազգային-հասարակական գործիչ, գրող և հրատարակախոս Ժիրայր Նայիրիի խնամքով Քեյրոսում լույս է տեսել Հովհաննես Զիլինկիրյանի «Սուսերու եւ երազներու զոհ...» 780 էջից բաղկացած աշխատության առաջին հատորը, որը հեղինակը նվիրել է «Տխրայուց 90-ամյակին բոլոր ժամանակներու մեծագույն հայկական ցեղասպանության, Մեծ եղեռնի անմեղ զոհերուն եւ հայ դասի ողբաբարի դիւցազն նահատակներուն սրբալոյս յիշատակին... նաեւ ներկայ ու գալիք դահանջաժեր եւ արիասիրտ նոր սերունդներուն, որ անվ-

հաս ու հաւատալից կամփով շարունակեն իրենց նախնիներուն արդարատենչ մարտնչումը՝ մինչեւ ձեռք բերունը արդար հասուցման»:

Հովհաննես Զիլինկիրյանն իր ամբողջ գիտակցական կյանքով ու որդիական հավատարմությամբ ծառայում է իր ժողովրդին, հասարակամտությամբ հանդես գալիս Հայկական հարցի թուրք եւ այլ կերծարարների դեմ: Նա միաժամանակ բարերար է: Այդ նրա ջանքերով է փրկվել ու հայոց նոր սերունդների սեփականությունն է դարձել արդարևոր բանաստեղծ, ազգային գործիչ, թուրքական յաթաղանի զոհ դարձած Ռուբեն Սեալի գրական ժառանգությունը:

Հովհաննես Զիլինկիրյանը, որսասխանասվությամբ ու վճռականությամբ դաստիարակում է ու զարգացնում Ռուբեն Սեալի գաղափարները: Այս գործում անգնահատելի դեր է խաղում Նիս ֆաղափում նրա հիմնադրած Ռուբեն Սեալի

հիշատակի տունը: Հովհաննես Զիլինկիրյանի հովանավորությամբ տպագրվել են հայ ժողովրդի դասնության, հայագիտության վերաբերյալ երկու տասնյակից ավելի գրքեր:

Վասակաճաճ գործիչը հոգ է տանում նաեւ երեսնամյա զսնվոր Ռուբեն Սեալի անվան դպրոցի նկատմամբ, իր ուսուցչության կենտրոնում դաստիարակելով դպրոցի կյանքին վերաբերող բոլոր խնդիրները...

Ահա, սիրելի ընթերցող, մենք գործ ունենք այժմ Հովհաննես Զիլինկիրյանի նոր աշխատության հետ:

Ինչի՞ մասին է «Սուսերու եւ երազներու զոհ...» գիրքը: Դժվար է, իհարկե, մի գրախոսականով դասասխանել այդ հարցին, նկատելու նենալով աշխատության մեջ փնտրելիք խնդիրների ու դրոշմների բազմազանությունը:

Ճիշտ է, այդ դրոշմներն ու խնդիրները վերաբերում են հայ ժողովրդի դասնության տարբեր ժամանակաշրջաններին եւ առաջին հայացից թվում է, թե Հ. Զիլինկիրյանը շարադրում է ընթերցողին ծանոթ փաստեր եւ իրողություններ: Բայց դա այդպես է միայն առաջին հայացից, որովհետեւ գիտնական հեղինակը նշված փաստերն ու դրոշմները բացահայտում եւ մեկնաբանում է յուրովի, հաճախ նաեւ բացառիկ, բայց եւ արդարացված անողորմ յթափությամբ:

Հենց հեղինակի առաջաբանի առաջին տողերից ընթերցողը հանդիմում է այդ անողորմությանը:

«Հարգելի ընթերցող-դիմում է Հ. Զիլինկիրյանն առաջաբանի սկզբում, - ողիս խնդրեմք, որ չկարողաք այս գիրքը»: Եվ ահա հեղինակի ցանկությամբ այդ գիրքը չդրվեց է

կարդան նրանք, ովքեր չունեն «ցավը Արեւմտյան Հայաստանին, մեր Մեծ Հայրենիքին կորուստին ցավը»:

Ինչո՞ւ: «Որովհետեւ, բացառում է Հ. Զիլինկիրյանը, մեր գրածները ձեր սրտին ու մտքին ոլիտի չխոսին»:

Այնուհետեւ հեղինակը ողահանջում է. «Մի կարդա՛ր այս գիրքը...», եթէ դաճակցութիւն կուսակցութեան կը դասկանի... եթէ արւանդաւոր ղեկավարներու լոզունգներուն եւ անոնց սուտ դասնութիւններուն կը հաւատաս»:

Հեղինակը ողահանջում է նաեւ չկարդալ այս գիրքը, «եթէ սիոնիզմ ըստած հրեշիս ճիւղաւորումներէն մեկը եղող ֆրամսոնութեան կը

մ'անգամ չի մնացած»:

«Այս գիրքը, -հռչակում է հեղինակը,- հայ մեծ ազգը կործանումի մասնող կեղծ ազգասէր հայ առաջնորդներուն դէմ՝ Անեծեազիր մըն է:

Այս գիրքը հայ անարժան առաջնորդներուն կասարած դաւաճանութիւններուն դէմ ընդվզումի աղարակ մըն է»:

Կարդալով Հ. Զիլինկիրյանի աշխատքիւնն, ընթերցողն անդայման կհամոզվի, որ հեղինակը հավասարիմ մնալով իր դավանած սկզբունքներին, դսակազերծ է անում բոլոր նրանց, ովքեր ազգասերի դիմակ հագած, գործել են հայ ժողովրդի դէմ, նրան դասճարել անչափելի կորուսներ:

Այս առումով Հ. Զիլինկիրյանը հանգամանորեն անդրադառնում է հասկադես Դաճակցութեան գործելակերպին՝ երիտթուրքի հետ համագործակցելուց մինչեւ Հիւսելիին զինակցելն ու ԱՄՆ-ի շահերին ծառայելը: Այդ ամենին անդրադառնալիս Հ. Զիլինկիրյանը բերում է փաստեր, որոնցից շատերին տեղյակ չէ մասսայական ընթերցողը:

Հ. Զիլինկիրյանն անսարբեր չի մնացել նաեւ ՀՀԸ-ի գործունեութեան նկատմամբ եւ հավաստի փաստերով մերկացնում է հիշական լիդերներին, որոնք գաղտնի բանակցութիւններին մեջ էին մտել Թուրքիայի «Գործ գայլերի» դարազլուխներին հետ:

Հ. Զիլինկիրյանը հանդես է գալիս Ռուսաստանի հետ Հայաստանի սերտ բարեկամութիւնն ամրադրելու դիրքերից: Հանգամանորեն

ՅՈՂՎԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵՑ ԾՈՒԲԵՆԵԱՆ)

ՍՈՒՏԵՐՈՒ ԵՒ ԵՐՍԶՆԵՐՈՒ  
ԶՈՂ,  
"ԷՇ-ՆԱՀԱՏԱԿ"  
ԵՂԱԾ ԱԶԳ ՄԸ՝ "ՀՍ.ՅԵՐԸ"

Ա. ՀԱՏՈՐ

ՄԻՋՆԱԿ  
2006

դասկանի: Որովհետեւ սա կը նշանակէ, որ դուք հոգիս ծախած եք ձեր ժողովուրդը ցեղաստղանութեան ենթարկածներուն, ձեր դասնական հայրենիքի գողութեան մեղսակցածներուն: Կողմ եք ու հանդուժող մարդկային ու ազգային անիրավութիւններուն: Ձեր հոգիին մէջ հայկականութեան նշույլ

վերլուծելով հայ-ռուսական հարաբերությունների ամբողջ դասնությունը, հերիճակը սուր ֆենադասության է ենթարկում հայ իրականության մեջ Ռուսաստանի դեմ հանդես եկողներին եւ նրանց հիշեցնում, որ այսօրվա Հայաստանը գոյություն ունի Ռուսաստանի կազմի մեջ զսնվելու շնորհիվ, այդ «մոռացվածներին» մասնացույց անելով արեւմտահայության ճակատագիրը:

Հերիճակը հանգամանորեն ֆենարկում է սիոնիզմի ոլորվեմը, բացահայտում նրա վնասակար դերը ինչդեպ հայ, այնդեպ էլ աշխարհի մյուս ժողովուրդների ճակատագրում: Այս առումով նա մերկացնում է ԱՄՆ-ի վարչակարգի ամբողջ ֆալսեթությունը:

Ասեմք նաեւ, որ հերիճակը ուժադրությամբ հետեւում է Հայաստանում զարգացող իրադարձություններին, որդիական ցավ է աղբում սեր զսած թերությունների համար, անխնա, բայց ճիշտ դիրքից ֆենադասում Հայաստանի իւլիսանության մեջ զսնվողներից նրանց, ուլիք չեն ավսոսում Հայաստանը, ուլիք իրենց եսախրական շահերի համար դասրաս են Հայաստանը վերածել ավերակույսի:

Հայ ժողովրդի դասնության նորագույն շրջանը դերուես չի դարձել ուսումնասիրողների ու հետազոտողների ուժադրության առարկան: Ձգալի է նոր ժամանակաշրջանի վերաբերյալ անաչառ, անկողմնաչալ ֆենարկման դակասը: Իհարկե, այսեղ որոշակի դեր է խաղում նորագույն շրջանի դասնության նկատմամբ ներ, կուսակցական կորդորաշիվ մոսեցումը, երբ,

դժբախտաբար, դասնության նորուլի իմաստավորման անվան շակթույլ են սուլում բազում կեղծիքներ, աղաւարվում դասնական փաստեր:

Սակայն ի դասիվ Հ. Չիլիճկիւրյանի վսահաբար կարելի է ասել, որ նա իր նոր աշխատությամբ լուրջ ներդրում է կատարում հայ ժողովրդի նորագույն ժամանակաշրջանի դասնագրության մեջ: Նա օբյեկտիվ դասնականության դիրքերից մերկացնում է ոչ միայն թուրք կեղծարարներին, որոնք ամեն կերպ փորձում են խուսափել Հայոց ցեղաստանությունը կազմակերպելու դասախանասվությունից, մյլե նրանց դաստանող արեւմտյան հերիճակներին:


Վերջապես Հ. Չիլիճկիւրյանն անաչառ դիրքից ֆենադասում է հայրենի այն հետազոտողներին, որոնք սեփական ժողովրդի նորագույն ժամանակաշրջանի դասնության շահ կարեւոր ոլորվեմներ ֆենարկելիս դրեւորում են, մեղմ ասած, անբարեխղճություն, դասնական իրադարձությունները վերլուծում են ոչ թե օբյեկտիվորեն, այլեւ դրանց նայում իրենց զանգակասնից:

Որքան ինձ հայտնի է, Հ. Չիլիճկիւրյանն այսօր էլ նույն եռանդով շարունակում է գրել իր աշխատության երկրորդ գիրքը: Ուստի ցանկանք ազգային-հասարակական գործիչ ու զիտնական Հուլիանես Չիլիճկիւրյանին ամուր առողջություն եւ հաջողություններ, հույս ունենալով, որ շուտով նա հայ ընթերցողին նորից յուրախացնի, նրա ուժադրությանը ներկայացնելով գրախոսվող աշխատության երկրորդ գիրքը:

ՎԱՍԳԻՍՏԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Տոլիսաննես Չիլիսկիրյան «Սուսերու եւ երագներու զոհ...»

### Սպահանի արվեստը Երեւանի ժողարվեստի թանգարանում



ՖՈՏՈՂՈՒՐ

Իսլամական երկրների մշակույթի նախարարների հավաքում Սոդահանը հռչակվել է 2006 թ. իսլամական աշխարհի մշակութային մայրաքաղաք: Շուրջ 500 եւ ավելի միջոցառումներ, որոնց 1/3-ը մշակութային բնույթի, իրականացվել եւ շարունակվում են աշխարհի տարբեր, անուրես նաեւ Իրանի դրացի երկրներում: Այս կառավարությանը երեկ Երեւանի ժողովրդական արվեստի թանգարանում բացվեց Սոդահանի արվեստների ցուցահանդես:

Իսլամական մշակույթի բնօրրան Սոդահանը՝ ավանդական արվեստների խորհրդավոր ու էկզոտիկ արտահայտչակերպերով, միասնական գագաթնությունների, գույնի ու ձեւի արեւելյան ճոխություններով, Երեւանյան երեկվա ցուցահանդեսում ներկայացավ ժամանակակից երկու արվեստագետների ստեղծագործություններով. Մոհամմեդ Ալի Ֆարսիդը շուրջ 4 քառանկյակ զբաղվում է դալամզանի (չիկանկյակ) արվեստով՝ երկաթի վրա էմալադրոս նրբագեղ աշխատանքներ է կատարում: Մոհամմադ Ալի Յեդդաթի՝ գեղանկարչական աշխատանքներում հիմնականում իբխում են իրանական ճարտարապետության եւ իլլաթների կյանքին վերաբերող թեմաներ:

Երեւանյան ցուցահանդեսի բացումը հանդիսավոր եւ լուսնոտանական բնույթ կրեց: Ներկա էին Հայաստանում Իրանի իսլամական Հանրապետության դեսոդան Ալի Ռեզա Աղիդյանը, մշակույթի կցորդ Ռեզա Աթուֆին, ՀՀ մշակույթի փոխնախարար Գագիկ Գյուրջյանը, փոխնախարար Կամո Արեյանը, ներկայացուցիչներ Մայրաթոռ Սք. Էջմիածնից, բազմաթիվ հյուրեր, հասկապես երիտասարդ ուսանողներ:

Ողջույնի խոսքում թանգարանի տնօրեն, արվեստաբան Սարո Սարոխանյանն անդրադարձավ հայ-իրանական հարաբերությունների երկարամյա ճանադարհի՝ երկու ժողովուրդների մշակութային առնչություններին: Ծանոթանալով եւ վայելելով Սոդահանի արդի արվեստի մի փոքր մասի ներկայությունը թանգարանում՝ նա արձանագրեց, որ «ամեն մի արվեստագետ ողիտի ադրի իր հողի վրա, սնվի իր ավանդույթով, հավատա իր Աստուն»:

«Մեզ համար կարեւոր է Հայաստանի Հանրապետությունը, իբրեւ ամբողջապես բխսոնյա երկիր եւ Իրանը որոյես իսլամական ոյեսություն, եւ այս ցուցահանդեսը համաաշխարհային երկու կրոնների բարեկամության խոր-

հրդանիւ է», ասաց Ռեզա Աթուֆին նշելով, որ Պասահական չէ Երեւանը եւ Սոփիանը փոյր ֆաղաֆներ հոչակելու հանգամանքը եւ ակելացրեց, ու Սոփիանի 13 հայկական եկեղեցիներից 4-ը գործող են, իսկ դրանցից ամենագեղեցիկը Սոփիանի հայոց վանքի եկեղեցական համալիրն է:

Գագիկ Գյուրջյանը բացման արարողության համար բավականին ընդարձակ ակնարկ կատարեց Սոփիանի ողբերգությանը, մեակույթին, մասնավորապէս ճարտարապետությանը՝ թալասական համալիրների, ֆաղաֆի հայտնի կամուրջների մանրամասն նկարագրություններով: Նաեւ Կամուրջը նշեց, որ Երեւանի ֆաղաֆների եւ Սոփիանի ֆաղաֆների միջեւ տարբեր առաջ կնկարծ համագործակցության թայմանագիրը վաղուց կյանքի իրավում է ստացել, երկու ֆաղաֆները հոչակվել են փոյր ֆաղաֆներ եւ երեք տարի անընդմեջ Սոփիանի թալասակութունը մասնակցում է էրեբունի-Երեւան տնակատարությանը. «Այս բարեկամութունն ունի դարերով աղայցուցված ժողովրդութուն եւ մեծ երաշխիքներով լեցուն հեռանկար»:

Օրերս Սոփիանից վերադարձած հայկական ողբերգութունի նախագահ Լեւոն Անանյանն ակելի գործնական տղապարտութուններ փոխանցեց, մասնավորապէս նշելով, որ հայկական ճարտարապետական եւ մեակութային բոլոր օջախները, եկեղեցիներն ընդգրկված են Սոփիանի (Իրանի) գրոսարքութունի երթուղիների մեջ, եւ ամբողջ Երեւանը անցնում է հայ համայնքին: Նա ասաց նաեւ, որ աշխարհի բազմաթիւ երկրներում եղած հայկական համայնքներից իրանահայ համայնքը բացառիկորեն է վայելում այդ երկրի հոգատար վերաբերմունքը, եւ այս մասին իրենք արտահայտվել են երկու ժողովուրդների գրական-մեակութային առնչութունների վերաբերյալ Սոփիանի համալսարանում օրերս անցկացված գիտաժողովին հաջորդած մամուլի ասուլիսում՝ հայ ժողովրդի անունից երաշխագիտութուն խոսք հղելով իրանական թեթութունը:

Ողջութունի եւ օրհնանքի խոսք ասաց Մայր աթոռ Սբ. Էջմիածնից Ներսէս արք. Պողոտայանը, իսկ վերջում դետրանը՝ ծնունդով Սոփիանից, ուրախութուն հայտնեց, որ իր ծննդավայրի արկետագետների աշխատանքները ցուցադրվում են «հին ու մեծ ֆաղաֆութութունի սեր ժողովրդի մայրաքաղաքում՝ Երեւանում»:

ՍԵԼՆՆՅԱ ԲԱԳՍԵԼՆՈՒ

## ԾԱԳՐԱՆԿԱՐԴԻ ԱՉԵՐՈՎ

ՕՆՎԵԼ Է 1926թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ



ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ 80

DL Accoracc 2.3 2007 FC

SIRMAKES NAZARET  
14 Blv. Helvétique  
1207 GENÈVE



M<sup>er</sup>.  
O. Cilingizian

Domaine du Loup Le Verdon B 4  
06800 Cagnes Sur Mer  
Alpes Maritime  
NICE  
FRANCE